Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՄԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱԲԱՍ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

ԹԱԳԱՎՈՐ ՀԱՅՈՑ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Ե 381

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ պատմության ֆակուլտետի
գիտական խորհուրդը

ԱՐՄԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Ե 381 **Աբաս Բագրատունի: Թագավոր հայոց**/ Ա. Եղիազարյան: -Եր.: ԵՊՀ հրատ., 2017, 122 էջ:

Մենագրությունը նվիրված է հայոց թագավոր Աբաս Բագրատունու (929-953 թթ.) գործունեությանը: Լուսաբանված ու վերլուծված են նաև Հայաստանի պատմության՝ այդ ժամանակաշրջանի բոլոր հիմնական իրադարձությունները:

Հասցեագրված է հայագետներին ու կովկասագետներին, ինչպես նաև միջնադարով հետաքրքրվող ընթերցողներին:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-5-8084-2188-2

© ԵՊՀ հրատ., 2017
© Եղիազարյան Ա., 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ. ԱԲԱՍ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ 5
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԱԲԱՍ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ 7
1.1. Աբաս Բագրատունին՝ իշխանաց իշխան Հայոց 7
1.2. Աբաս Բագրատունու գահակալության սկիզբը.....14
1.3. Իրավիճակը Հայաստանում և Հայաստանի շուրջ
Աբասի գահակալության առաջին շրջանում.....25
1.4. Նոր իրավիճակի ձևավորումը և Աբասի կշռի
աստիճանական աճը 36
1.5. Բագրատունյաց թագավորությունն Աբասի
գահակալության առաջին փուլում (929-942 թթ.).....45
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՏԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄԸ.....54
2.1. Բագրատունյաց թագավորության հզորացումն Աբաս
Բագրատունու գահակալության երկրորդ շրջանում
(943-953 թթ.) 54
2.2. Հոգևոր հիմնախնդիրների լուծումը 65
2.3. Աբասի գահակալության վերջին տարիները. Աբասը՝
շահնշահ.....74
2.4. Բագրատունյաց տերության սահմաններն Աբաս
թագավորի օրոք.....82
2.5. Աբաս թագավորի գահակալության շրջանի
թվագրումը.....88
ՎԵՐՋԱԲԱՆ.....95
SUMMARY 97
РЕЗЮМЕ.....99
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 101
ՑԱՆԿԵՐ 111

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ.
ԱԲԱՍ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Աբաս Բագրատունին (929-953) մեր պատմության մեջ համեմատաբար քիչ հայտնի, բայց հույժ կարևոր դերակատարություն ունեցած թագավորներից է: Նրա գահակալության վերաբերյալ սկզբնաղբյուրներում պահպանվել է սահմանափակ նյութ, որի հետևանքով այդ շրջանի տարբեր փուլերի զարգացումներն առ այսօր մնացել են ստվերում:

Հայտնի է, որ Աբասի եղբայրը և նախորդը՝ Աշոտ Երկաթ արքան (914-929), կարողացել էր Հայաստանը մաքրել Ատրպատականի ամիր Յուսուֆի (901-927) զորքերից և վերացնել Հայոց թագավորության ձևական կախվածությունն Արաբական խալիֆայությունից[1]: Ուստի 919 թ. եղբոր դեմ մահափորձ կազմակերպած և այդ իսկ պատճառով տարագրության մեջ մոտ տասը տարի անցկացրած Աբասին Աշոտ Երկաթի մահից հետո բաժին հասավ լիովին անկախ և խաղաղ զարգացման իրավունք նվաճած թագավորություն: Այդ հենքի վրա Աբասին հաջողվեց զբաղվել թագավորության հզորացմամբ և խաղաղ շինարարությամբ՝ հընթացս երկրի անդորրը խռովող մարտահրավերներին պատասխանելով հուժկու հակահարվածներով:

Զգալիորեն հյուծված Արաբական խալիֆայության, գրեթե անկախացած ու հարձակողական նկրտումներ ունեցող հարևան մահմեդական իշխանությունների և զավթողական քաղաքականություն որդեգրած Բյուզանդիայի միջև Աբաս թագավորը կարողացավ վարել հավասարակշռված քաղաքականություն, որ հնարավորություն

---

[1] Տե՛ս **Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ**, Պատմութիւն տիեզերական, «Մատենագիրք Հայոց», ԺԵ. հատոր, Ժ. դար, Պատմագրութիւն, գիրք Բ., Եր., 2011, էջ 748:

տվեց Հայոց թագավորությունն անցնցում անցկացնելու ժամանակաշրջանի փոթորիկների միջով:

Նույնքան խելամիտ էր Աբասի գործելակերպը նաև պետության ներքին քաղաքական կյանքում: Այդ ժամանակ, բացի նրանից, Հայաստանում այս կամ այն չափով գործունեություն էին ծավալում «Հայոց թագավորի» տիտղոսը կրող երկու այլ գահակալներ՝ Գագիկ Արծրունին և Աշոտ Շապուհյան Բագրատունին: Վերջիններս Աշոտ Երկաթի օրոք ստորադասված էին նրան, բայց Աբասի գահակալության սկզբում արդեն հանդես էին գալիս որպես անկախ տիրակալներ: Ուղղակիորեն չհակադրվելով նրանց, բայց միևնույն ժամանակ աստիճանաբար ամրապնդելով դիրքերը՝ Աբասն ի վերջո կարողացավ հաստատել իր գերակայությունը ոչ միայն Հայաստանում, այլ նաև քրիստոնյա Այսրկովկասում:

Փաստորեն, երիտասարդության շրջանում խիստ հակասական Աբաս Բագրատունին գահակալության ընթացքում հանդես եկավ որպես հույժ խելամիտ տիրակալ: Սակայն մինչև այժմ հստակ գիտական գնահատական տրված չէ Աբաս թագավորի գահակալության պատմաշրջանին: Պատմագիտական գրականության մեջ Աբասի գահակալությանը հատկացվել է մի քանի տող կամ պարբերություն, և ոչ միայն նրա գործունեությունը, այլ նաև Հայաստանի՝ 930-ական թթ. սկզբներից մինչև 950-ական թթ. սկիզբն ընկած հատվածի պատմությունը մնացել են խորությամբ չուսումնասիրված:

Նշվածը հաշվի առնելով՝ անհրաժեշտ է մանրակրկտորեն քննության առնել այն սակավ նյութը, որ Աբաս թագավորի վերաբերյալ պահպանվել է աղբյուրներում, լուսաբանել նրա օրոք Հայաստանում և շրջակա երկրներում տիրող իրավիճակն ու զարգացումները, որի արդյունքում հնարավոր կլինի ամբողջացնել Բագրատունի չորրորդ գահակալի պատմաքաղաքական դիմանկարը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԱԲԱՍ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

1.1. Աբաս Բագրատունին՝ իշխանաց իշխան Հայոց

Հայոց Սմբատ Ա թագավորի (891-914) կրտսեր որդի Աբասը[2] հայկական աղբյուրներում առաջին անգամ հիշատակվում է հոր սպանությունից (914 թ. հունվարի 7[3]) հետո, երբ նա իր եղբայր Աշոտ Երկաթի (914-929) հետ հեռացավ Ատրպատականի ամիր Յուսուֆի զորքերի ասպատակությունների թատերաբեմի վերածված Հայաստանից: Ըստ Ասողիկի՝ «**Աբաս գնաց յաշխարհն Վրաց, փեսայացեալ նոցին՝ դառնայ յաշխարհս մեր զկնի դառնալոյ եղբաւր իւրոյ Աշոտոյ ի Կոստանդնուպօլսէ**»[4]: Պատմիչի այս տեղեկության մեջ առկա է երկու կարևոր փաստ: Աբասը հեռացել է Վիրք, որտեղ ամուսնացել է, և հայրենիք է վերադարձել Աշոտ Երկաթի՝ Կոստանդնուպոլսից վերադառնալուց հետո՝ ամենայն հավանականությամբ, 916 թ.[5]: Հովհաննես Դրասխանակերտցու տեղեկություններից

---

[2] Կա տեսակետ, որ Աբասի մկրտական անունը եղել է Հովհաննես: Տե՛ս **Ա. Մանուչարյան**, Վիմագրերը որպես Հայաստանի քաղաքական պատմության սկզբնաղբյուրներ (IX-XIV դդ.), Եր., 2015, էջ 46-49: Դրա համար հիմք է տվել պահպանված մետաղյա մի խաչի պատվանդանի արձանագրությունը, որը թվագրված է 966 թ.: Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս «Համաբարբառ յայսմաւուրք», Ե, Մայիս (նախաձերենցյան 6 խմբագրությունների), Ս. Էջմիածին, 2010, էջ 95-97: Տե՛ս նաև **Ա. Եղիազարյան**, Աշոտ Երկաթի դարաշրջանը: Մաս առաջին. Հայոց թագավորության պահպանման հիմնախնդիրը, «Վէմ», 2014, N 4, էջ 47-50: Տե՛ս նաև **Ա. Եղիազարյան**, Աշոտ Երկաթ. թագավոր Հայոց, Եր., 2016, էջ 20-21:

[4] **Ասողիկ**, էջ 748:

[5] Տե՛ս **Հ. Բարթիկյան**, Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսի 101-րդ և 139-րդ թղթերը՝ ուղղված Հովհաննես Դրասխանակերտցուն

պարզվում է, որ Աբասը կնության է առել վրաց իշխան Գուրգենի[6] դստերը: Ըստ նրա՝ Աշոտ Երկաթը «**առ ինքն կոչէ զեղբայր իւր զԱ-բաս, ... եւ զիշխանն Վրաց Գուրգէն զնորուն աներ**»[7]: Թերևս, հենց այդ պատճառով էլ Գուրգենը հուսալի դաշնակից էր անընդհատ պատերազմների մեջ գտնվող Աշոտ Երկաթի համար նրա գահակալության առաջին շրջանում (914-919 թթ.)[8]:

Դատելով Հովհաննես Դրասխանակերտցու տեղեկություններից՝ վերադարձից հետո Աբասը Հայաստանն ազատագրելու պայքարում ամենուր աջակցում էր եղբորը: 917 թ. ազատագրելով Հայաստանի կենտրոնական հատվածը՝ Աշոտ Երկաթն Աբասի հետ մեկնում է Գուգարք: Տեղի Շամշուլդե ամրոցի, որը Սմբատ Ա-ի օրոք

և Սմբատ Ա թագավորին, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, N 4, էջ 252; **Ա. Եղիազարյան**, Աշոտ Երկաթի դարաշրջանը: Մաս առաջին, էջ 64-66:

[6] Գուրգենը Վիրքում ծանրակշիռ դերակատարություն ուներ: Նրա մասին Դավթի որդի Սմբատը հաղորդում է, թե նա կռվել է իր բոլոր նախորդներից ավելի և տիրել ընդարձակ տարածքների: Տե՛ս **Сумбат Давитис-дзе**, История и повествование о Багратионах, пер. М. Лордкипанидзе, Тб., 1979, с. 35: Նա Սամցխեում գտնվող Ղվել բերդի (տե՛ս **Լ. Մելիքսեթ-Բեկ**, Վրաց աղբյուրները Հայաստանի յեվ հայերի մասին, քաղվածքներ վրացերեն բնագրերից հայերեն թարգմանությամբ, ներածություն-ծանոթագրություններով յեվ հավելվածներով, հատոր Ա (Ե-ԺԲ դար), Յեր., 1934, էջ 92-93) և Աճարայի տերն էր: Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**. Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 6, Բյուզանդական աղբյուրներ, Բ, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Եր., 1970, էջ 19; «Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը», ծանօթութիւններով, գրեց պրոֆ. դկտ. Յ. Մարկուարտ, գերմաներէնէ թարգմանեց Հ. Մ. Հապոզեան, Վիեննա, 1913, էջ 143; **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ե, Եր., 2012, էջ 374: Ի դեպ, ըստ Ասողիկի՝ Կվել բերդում էր որոշ ժամանակ ապաստանել հայոց թագավոր Սմբատ Ա-ն Ատրպատականի ամիրա Յուսուֆի հարձակումների ժամանակ: Տե՛ս **Ասողիկ**, էջ 744:

[7] «Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմություն Հայոց», «Մատենագիրք Հայոց», ԺԱ. հատոր, Ժ. դար, Պատմագրութիւն, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 544:

[8] Տե՛ս նույն տեղում, էջ 508-509:

վերածվել էր արքունի տիրույթի [«սեպհականացուցեալ էր իւր (իմա՛ Սմբատ Ա-ին)»], բերդապահները Սմբատ Ա-ի կողմից նշանակված Գնթունի Վասակ և Աշոտ եղբայրներն էին, որոնք միևնույն ժամանակ ամրոցի շրջակա նահանգի վերակացուներն էին: Աշոտ Երկաթը նրանցից պահանջեց հնազանդվել իրեն: Գնթունիները, օգտվելով նրանից, որ Աշոտ Երկաթն իր զորքն արձակել էր ու իր եղբայր Աբասի հետ միայն 250 զինվորներով բանակել Սակուրեթ ամրոցի մոտակայքում, զորք են հավաքում, օգնություն են ստանում Տփղիսի արաբներից և Կովկասի լեռնականներից ու չորս հազար զինվորներով գրոհում Աշոտ Երկաթի ու Աբասի ճամբարի վրա: Իրենց փոքրաքանակ զորքն արագ մարտական վիճակի բերելով՝ եղբայրներն այն գրոհի են տանում: Հակառակորդը պարտություն է կրում: Ըստ պատմիչի՝ նրանք գերի ընկած արաբների մի մասին սպանել, մյուսների քթերն ու ականջները կտրել տվեցին, իսկ քրիստոնյաներին ազատ արձակեցին՝ խլելով ունեցածը: Միայն Վասակ Գնթունուն հաջողվեց մի խումբ զինվորներով փրկվել ու ապաստանել Շամշուլդեում: Այդ դեպքերից հետո Աշոտ Երկաթն ու Աբասը մեկնեցին վրաց իշխան Գուրգենի տիրույթները[9]:

Հովհաննես Դրասխանակերտցին հաղորդում է, որ Աշոտ Երկաթն «**առ ինքն կոչէ զեղբայր իւր զԱբաս, զոր իշխան իշխանաց էր կացուցեալ**»[10]: Դատելով պահպանված նյութից՝ Բագրատունի առաջին արքաների օրոք այդ պաշտոնը[11] վարում էին արքայական ըն-

---

[9] Տե՛ս «Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմություն Հայոց», «Մատենագիրք Հայոց», ԺԱ. հատոր, Ժ. դար, էջ 539-540:

[10] Նույն տեղում, էջ 544:

[11] Գիտական գրականության մեջ այս պաշտոնը ներկայացված է որպես «**իշխանաց իշխան**»: Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, Եր., 1976, էջ 270-271; **Կ. Յուզբաշյան**, «Բագրատունյաց շրջանի» Հայաստանը՝ միջազգային իրավունքի տեսանկյունից, «Պատմաբանասիրական հանդես», 1975, N 1, էջ 34-37; **Ռ. Մաթևոսյան**, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Եր., 1990,

տանիքի այն անդամները, որոնց անցնելու էր գահը[12], ուստի կարելի է խոսել այն մասին, որ Աբասը կարգվել էր գահաժառանգ: Ամենայն հավանականությամբ հենց Աբասի՝ այդ պաշտոնը զբաղեցնելու հետևանքով ունեցած թագաժառանգման նկրտումներն էլ ի վերջո հանգեցրին երկու եղբայրների միջև անհաշտ թշնամության այն բանից հետո, երբ Աշոտ Երկաթը 918 թ. ամուսնացավ Գարդմանի իշխան Սահակ Սևադայի դստեր հետ: Ամուսնության հանդեսի ժամանակ նրան բերեցին Յուսուֆի ուղարկած թագն ու ընծաները: Նա ընդունեց թագն ու Յուսուֆին փոխադարձաբար ընծաներ ուղարկեց[13]: Ակնհայտ է, որ Յուսուֆը, ի վերջո ստիպված եղավ ընդունել Հայաստանում Աշոտ Երկաթի գերակա կարգավիճակը: Վերջինս էլ, չնայած կատաղի թշնամանքին, հարկ համարեց ընդունել թագը, քանի որ Յուսուֆի արարքը նշան էր այն բանի, որ նա իր իսկ կողմից 916 թ. թագադրված՝ Սմբատ Ա-ի եղբայր Շապուհի որդի Աշոտին այլևս չէր հովանավորում[14]: Ասվածի ապացույցն այն է, որ դրանից անմիջապես հետո, իր հետ վերցնելով իր աներ Սահակ Սևադա իշխանին, Աշոտ Երկաթն արշավեց Դվինում ամրացած Աշոտ Շապուհյանի դեմ: Դվինի դարպասների մոտ տեղի ունեցած ճակա-

---

էջ 104-107: Այն, որ այդ պաշտոնի ամբողջական անվանումն էր «**իշխանաց իշխան Հայոց**», ցույց է տալիս այն իրողությունը որ Սմբատ Ա-ն, Աշոտ Բ-ն և Աշոտ Գ-ն նախքան թագադրվելը ժամանակակից հեղինակների՝ Հովհաննես Դրասխանակերտցու և Անանիա Մոկացու կողմից հիշատակվում են որպես «**իշխանաց իշխան Հայոց**»: Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 446, 480; «Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի յաղագս ապստամբութեան տանն Աղուանից որ ընդ ժամանակս լեալ իցէ ձեռնադրութիւնն արտաքոյ սուրբ Լուսաւորչի աթոռոյն», «Մատենագիրք Հայոց», Ժ հատոր, Ժ դար, Անթիլիաս-Լիբանան, 2009, էջ 268:

[12] Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Հայոց իշխանաց իշխանը Բագրատունի առաջին արքաների օրոք, «ՎԷմ», 2014, N 1, էջ 62-74:

[13] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 542:

[14] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Եր., 1965, էջ 133:

տամարտում Աշոտ Երկաթի բանակը Սահակ Սևադայի որդի Գրիգորի պատճառով պարտություն կրեց, իսկ արքան նահանջեց վրաց իշխան Գուրգենի տիրույթները: Նրանից օգնական զորք վերցնելով՝ նա վերադարձավ Վաղարշապատ: Այս անգամ ազդեցին կաթողիկոսի հորդորները, և հակառակորդները դարձյալ զինադադար հաստատեցին[15]:

Շուտով Աշոտ Երկաթը Շիրակում իր մոտ հրավիրեց Աբասին ու նրա աներոջը՝ վրաց իշխան Գուրգենին: Արքան նրանց մեծ պատիվների արժանացրեց: Կաթողիկոս պատմիչը այս դեպքի նկարագրության ժամանակ պատմում է, որ Աբասն ու Գուրգենը դավադրություն էին ծրագրել Աշոտ Երկաթի դեմ[16]: Սակայն թագավորը Երազգավորսում կարողացավ փրկվել մահից ու իր հետ վերցնելով Աբասի որդուն[17]՝ հեռանալ Ուտիք[18]:

Ն. Ադոնցը հակված է կարծելու, որ դավադրության պատճառն Աշոտ Երկաթի կողմից Յուսուֆի հետ հարաբերությունների մեջ մտնելն էր[19]: Սակայն այստեղ ամենայն հավանականությամբ եղել է այլ՝ ավելի շահադիտական պատճառ[20]: Խնդիրն այն է, որ Աբասին Աշոտ Երկաթը Հայոց իշխանաց իշխան էր կարգել նախքան Սահակ Սևադայի դստեր հետ ամուսնությունը, երբ ժառանգ չուներ, բայց այժմ, երբ նա ամուսնացել էր, կարող էր որդի ունենալ, ուստի դրանով կվտանգվեր Աբասի գահաժառանգության իրավունքը: Վրաց իշխան Գուրգենն էլ, հասկանալի է, պետք է պաշտպաներ իր փեսայի նման ծրագրերը:

---

[15] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 542-543:
[16] Տե՛ս նույն տեղում, էջ 544:
[17] Ցավոք, հնարավոր չէ պարզել, թե Աբասի որ որդու մասին է խոսքը:
[18] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 544-545:
[19] Տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ե, էջ 206:
[20] Տե՛ս **Լեո**, Երկերի ժողովածու, հ. II, Եր., 1967, էջ 559:

Դավաղրության տապալումից կարճ ժամանակ անց Աշոտ Երկաթը մեկնում է Գուգարք՝ պատժելու վրաց իշխան Գուրգենին: Իր հետ վերցնելով Կղարջքի («Վրաց թագավոր» կոչված) թագավոր Ատրներսեհին՝ նա արշավում է Գուրգենի դեմ: Վերջինիս օգնության են շտապում Աբասն ու Աշոտ Շապուհյանը[21]: Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ Գուրգենի փեսան էր նաև Աշոտ Շապուհյանը[22]: Փաստորեն, կարելի է արձանագրել, որ Գուրգենը իր երկու փեսաների միջոցով, որոնք երկուսն էլ ունեին հայոց գահին տիրելու նկրտումներ, կարողացավ լրջորեն վտանգել Հայոց թագավորության ներքին անվտանգությունը՝ անկասկած, հետապնդելով հեռուն գնացող նպատակներ, որոնք առնչվում էին Շամշուլդե ամրոցին և շրջակա գավառին տիրելուն[23]: Այդ պահի դրությամբ համընկել էին Աբասի և Աշոտ Շապուհյանի շահերը, բայց միայն կարճ ժամանակով, քանի որ հեռանկարում հայոց գահին բազմել կարող էր նրանցից միայն մեկը:

Աշոտ Երկաթի ու Ատրներսեհի զորքի առաջ հակառակորդները նահանջում են և սկսում աստիճանաբար տեղի տալ՝ մտածելով հանձնվելու մասին[24]: Այդ ժամանակ լուր է հասնում Գարդմանի

---

[21] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 547-548:

[22] Տե՛ս նույն տեղում, էջ 545: Տե՛ս նաև «Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 195: Լեոն սխալմամբ կարծում էր, որ Աշոտ Շապուհյանն էր վրաց իշխան Գուրգենի աները: Տե՛ս **Լեո**, նշվ. աշխ., էջ 559: Մինչդեռ Հովհաննես Դրասխանակերտցու երկում կարդում ենք, որ «...գտեալ զմիւս թագաւորին Աշոտոյ եւ Գուրգենայ աներոյ իւրոյ» (**Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 545), իսկ Ստեփանոս Օրբելյանի երկում, որ «...գտեալ եղև ի միւս թագաւորէն Աշոտոյ և ի Գուրգենայ՝ աներոյ իւրոյ»: **Ստեփանոս Օրբելյան**, էջ 195:

[23] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 552-553:

[24] Տե՛ս նույն տեղում, էջ 547-548:

իշխան Սահակ Սևադայի կողմից կատարված անօրենությունների մասին, և Աշոտ Երկաթն արագորեն հեռանում է Ուտիք[25]:

Այս իրադարձություններից հետո, որոնք տեղի են ունեցել ամենայն հավանականությամբ 919 թ., Աբասի մասին տեղեկություններն աղբյուրներում տևական ժամանակով ընդհատվում են: Դա հետազոտողների առաջ մտորումների լայն դաշտ է բացել: Մասնավորապես կարծիք է հայտնվել, որ Աբասը 921-928 թթ. նստել է Կարսում[26], բայց այն որևէ կերպ չի հիմնավորվում: Աշոտ Երկաթի հետ հակամարտությունից կարելի է եզրակացնել, որ այդ տարիներին, ամենայն հավանականությամբ, նա գտնվել է վրաց իշխան Գուրգենի տիրույթներում:

---

[25] Տե՛ս նույն տեղում, էջ 549-550:

[26] Տե՛ս **С. Еремян,** Присоединение северо-западных областей Армении к Византии в XI веке, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1971, N 3, էջ 7:

1.2. Աբաս Բագրատունու գահակալության սկիզբը

Աբաս թագավորի գահակալության առաջին փուլը հնարավորինս մանրակրկիտ քննելու անհրաժեշտությունը բխում է այն իրողությունից, որ այդ ժամանակ, Աբասից բացի, Հայաստանում այս կամ այն ծավալով գործունեություն էին իրականացնում երկու այլ հայոց թագավորներ ևս՝ Գագիկ Արծրունին և Աշոտ Շապուհյանը: Եթե հաշվի առնենք այն, որ նրանք երկուսն էլ թագավոր էին հռչակվել շատ ավելի վաղ[27], քան Աբասը, ապա պարզ կդառնա, որ Աբասի դերն ամենևին էլ առաջնային չէր Հայաստանի 930-ական թթ. սկզբի զարգացումներում:

Հայտնի է, որ Աշոտ Երկաթը 915 թ. Բյուզանդիայի կողմից ճանաչվել էր իշխանաց իշխան, որը ենթադրում էր Հայաստանում և քրիստոնյա Այսրկովկասում հայոց տիրակալի գերագահության ճանաչումը[28]: Դրա հիմնավորումն է Հովհաննես Դրասխանակերտցու այն հաղորդումը, որ Աշոտ Երկաթը կայսրից «**մեծավայելուչ գահիւ պատուի առեալ քան զամենայն գահերէցս**, ընկալեալ զփառաց փարթամութիւն, ո՛չ իբրեւ զայլս ոմանս պատուաւորս, այլ իբրեւ զթագաւորազուն բողբոջ, **գրեթէ ընդ իւրով իսկ կայսր զնա հարթայարմար ցուցանէր** եւ թագաւորական հրահանգաց հանդիսիւ ճոխա-

---

[27] Գագիկ Արծրունին հայոց թագավոր է հռչակվել 913 թ.՝ Սմբատ Ա թագավորի գերեվարությունից հետո (տե՛ս **Թովմա Արծրունի եւ Անանուն**, Պատմութիւն տանն Արծրունեաց, «Մատենագիրք Հայոց», ԺԱ հատոր, Ժ դար, Պատմագրութիւն, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 281-282; **Ա. Եղիազարյան**, Աշոտ Երկաթի դարաշրջանը: Մաս առաջին, էջ 44), իսկ Աշոտ Շապուհյանը՝ 916 թ., երբ Կոստանդնուպոլսից վերադառնում էր Աշոտ Երկաթը: Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 538: Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Աշոտ Երկաթի դարաշրջանը: Մաս երկրորդ. Հայոց թագավորության վերահաստատումը, «ՎԷմ», 2015, N 1, էջ 38:

[28] Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Աշոտ Երկաթի դարաշրջանը: Մաս առաջին, էջ 62-64:

ցուցանէր»[29]: Միևնույն իրադարձության վերաբերյալ Հովհաննես Դրասխանակերտցուն 915 թ. գրված նամակում Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսը գրում է, թե «**Մեծ և աստվածապսակյալ կայսրը ձեր խնդիրքին ուշի ուշով ունկնդիր լինելով՝ ընդառաջ գնաց և հաստատումն ու պատիվը, որ մեծ ցանկություն ունեցավ ստանալու նա, ում վստահված է ձեր իշխանությունը, տվեց: Ահա այս [բոլորը] կատարվեց կայսեր կողմից ձեզ համար**»[30]: Կարելի է երկու տեղեկությունների համադրությամբ հիմնավորել, որ կայսրն ընդառաջել է Աշոտ Երկաթի «խնդրանքին» և նրան տվել «[իշխանաց իշխանի] հաստատումն ու պատիվը»:

Խալիֆայության կողմից Աշոտ Երկաթին շահնշահ ճանաչելն իր բնույթով և սահմաններով, անկասկած, ամբողջովին նույնական էր կայսեր ճանաչման հետ: Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ 919 թ. ձերբակալված Յուսուֆի փոխարեն նրա հպատակներից Սբուք (Սուբուք) անունով մեկը խալիֆի կողմից ոստիկան նշանակվելուն պես խաղաղություն հաստատեց Աշոտ Երկաթի հետ՝ նրան հռչակելով շահնշահ[31], այսինքն՝ գերագահ թագավոր երկրում գոյություն ունեցող այլ թագավորների նկատմամբ: Ասողիկի տեղեկության համաձայն, երբ Աշոտ Երկաթը Հայաստանը մաքրեց թշնամուց, նա «**գտանէ զծառայս հօր իւրոյ թագաւորեալ. զինքն անուանեաց Շահանշահ, այսինքն թագաւորաց թագաւոր**»[32]: Ինչպես հաղորդում է Վարդան վարդապետը, խոսքը մասնավորապես Աշոտ Երկաթի հորեղբորորդի Աշոտի, Գագիկ Արծրունու և Ատրներսեհ

---

[29] **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 533:

[30] **Հ. Բարթիկյան**, Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսի 101-րդ և 139-րդ թղթերը..., էջ 252, 255:

[31] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 551:

[32] **Ասողիկ**, էջ 169-170:

(հեղինակի տեղեկության մեջ՝ Ներսեհ) Բագրատունու մասին է: Եվ Աշոտ Երկաթը «**կոչեցաւ ի վերայ նոցա Շահնշահ**»[33]:

Աշոտ Երկաթից հետո, դատելով սկզբնաղբյուրների տեղեկություններից, թե՛ Բյուզանդիայի և թե՛ Խալիֆայության կողմից Հայաստանում ու քրիստոնյա Այսրկովկասում գերագահ էր ճանաչվում Գագիկ Արծրունին[34]: Աշոտ Երկաթի մահից հետո, ինչպես վկայում է Կոստանդին Ծիրանածինը, Գագիկ Արծրունին «**իշխանաց իշխանի պատիվն է ստացել**»[35], այսինքն՝ Բյուզանդիայի տեսանկյունից գրավել Աշոտ Երկաթի տեղը: Այն, որ Գագիկ Արծրունու գերագահությունը նշված սահմաններում ճանաչվել էր նաև Խալիֆայության կողմից, ցույց է տալիս Անանուն պատմիչի այն հաղորդումը, որ 927 թ. Ատրպատականի ամիր Յուսուֆը «**տայ ի ձեռս արքայի** (իմա՛ Գագիկ Արծրունու – Ա. Ե.) **զաշխարհս Հայոց եւ Վրաց, եւ ուխտ խաղաղութեան եդեալ, գնայ յերկիրն Պարսից**»[36]: Բացի դրանից՝ 940 թ. Հայաստան մտած Դիար Բաքրի տիրակալ Սայֆ ալ-Դաուլան, ըստ Իբն Զաֆիրի, Խլաթում հանդիպեց «Հայաստանի և Վրաստանի թագավորին» [«մալիք Արմինիա վա Ջուրզան» (ملك ارمينية و جرزان)][37], որը նույնանում է Գագիկ Արծրունու հետ[38]:

---

[33] «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 87:

[34] Գագիկ Արծրունու՝ «Հայոց և Վրաց շահնշահի» տիտղոսը ստանալու մասին մանրամասնորեն տե՛ս **A. Yeghiazaryan**, Gagik Artsruni - «King of Armenia and Georgia», «Բանբեր Հայագիտության» հայագիտական միջազգային հանդես, 2016, N 1, էջ 77-94:

[35] **Կոստանդին Ծիրանածին**, էջ 151:

[36] **Թովմա Արծրունի եւ Անանուն**, էջ 284:

[37] Տե՛ս **Ibn Ẓāfir**, Akhbār al-duwal al-munqaṭiʿa, ǧ. 1, Irbid, 1999, ṣ. 63:

[38] «ملك ارمينية و جرزان» արտահայտության մեջ «Ջուրզան (Վիրք)» անվան ներքո Յո. Մարկվարտը փորձում է հասկանալ ոչ թե Վիրքը, այլ Զավազան-Անձևացիքը (տե՛ս **J. Markwart**, Südarmenien und die Tigrissquellen, Wien, 1930, S. 460), որն անհնար է: Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 152, ծանոթ. 75:

Ամենահավանական եզրակացությունն այն է, որ Աբասը չէր համարվում Աշոտ Երկաթի իրավահաջորդն ինչպես վերջինիս, այնպես էլ հետևաբար գերտերությունների կողմից: Աշոտ Երկաթի գահակալության վերջին տասնամյակում Աբասը գտնվում էր տարագրության մեջ, ուստի Բյուզանդիան և Խալիֆայությունը գահաժառանգի կարգավիճակից զրկված և հնարավորությունների առումով Գագիկ Արծրունուն մեծապես զիջող Աբասի փոխարեն «նախընտրել» են հարաբերվել Վասպուրականի տիրակալի հետ:

Այս պարագայում Աբասը, որ Բյուզանդիայի կողմից «**մագիստրոս**» տիտղոսով է հիշատակված[39], պետք է զինվեր համբերությամբ ու սպասեր պատեհ առիթի՝ իր տոհմին վերադարձնելու առաջնությանը Հայաստանում:

Աբասի գահակալության սկզբնավորմանն առնչվող մյուս խնդիրը կապված է նրա՝ գահ բարձրանալու ժամանակի և հանգամանքների հետ, որոնք թաքնված են մշուշում: Այդ խնդիրներին անդրադարձած հեղինակները փորձել են ինչ-որ կերպ լուծել խնդիրը: Առաջին հերթին նրանց հետաքրքրել է Աբասի՝ Աշոտ Երկաթից անմիջապես հետո գահ բարձրանալու խնդիրը: Մասնավորապես, ըստ Վարդան վարդապետի, որը սխալմամբ կարծում էր, թե Աշոտ Երկաթը վախճանվել է հայոց 371 թ. (922-923), գտնում է, որ Աբասը գահ է բարձրացել նրանից անմիջապես հետո: Ուստի, հաշվի առնելով նաև այն, որ նա Աբասի մահվան թվական է համարում հայոց 400 թ. (951-952), **Աբասին վերագրել է 29 տարվա գահակալության (400-371=29)**[40]:

Նշված խնդիրները փորձել է լուծել Մ. Չամչյանցը՝ ներկայացնելով Աշոտ Երկաթի վերջին օրերի մասին մի հորինված պատմու-

---

[39] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 10-11: Տե՛ս նաև **Կ. Յուզբաշյան**, Ռոմանոս Լակապենոս կայսեր անհայտ հասցեատերը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1974, N 1, էջ 36-37:

[40] Տե՛ս **Վարդան վարդապետ**, էջ 87:

թյուն: Այն որոշ հետազոտողների հիմք է տվել՝ հեռուն գնացող եզրակացություններ կատարելու: Ըստ նրա՝ մահից առաջ՝ 928 թ., Աշոտ Երկաթը հաշտվել է Աբասի հետ՝ նրան խոստանալով հայոց գահը, իսկ նրա վախճանից հետո Գագիկը Վասպուրականում կազմակերպել է Աբասի թագադրությունը[41]: Մ. Օրմանյանը իրավամբ նշում է, որ աղբյուրներում այդպիսի տեղեկություններ չեն պահպանվել, բայց նաև չի ժխտում նման հնարավորությունը: Ըստ նրա՝ քանի որ Աշոտ Երկաթի գահակալության վերջին շրջանում Աբասի մասնակցությունը երկպառակություններում այլևս չի հիշատակվում, կարելի է կարծել, որ նա հաշտվել էր եղբոր հետ: Բացի դրանից՝ Աշոտ Երկաթից իշխանության «սահուն անցումն» Աբասին ցույց է տալիս, որ երկու եղբայրների միջև գժտությունն ավարտվել էր մինչև Աշոտ Երկաթի մահը[42]:

Մ. Չամչյանցի վերոհիշյալ պատումի վրա Վ. Վարդանյանը կառուցում է իր ենթադրությունը, թե Աբասին թագադրելով՝ Գագիկ Արծրունին մի կողմից ճանաչում էր Աբասին որպես թագավորի, իսկ մյուս կողմից, իրեն իրավունք վերապահելով թագադրել նրան, ընդգծում Հայաստանում իր առաջնությունը[43]:

Ամենայն հավանականությամբ Մ. Չամչյանցի վրա ազդեցություն է թողել այն վստահությունը, թե Աբասին պետք է թագադրած լիներ հայոց կաթողիկոսը, ու քանի որ վերջինս այդ ժամանակ գտնվում էր Վասպուրականում, ապա թագադրությունն էլ պետք է կատարված լիներ հենց այնտեղ: Իսկ Վասպուրականում Աբասի

---

[41] Տե՛ս **Մ. Չամչեանց**, Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ 1784, հ. Բ., Վենետիկ, 1785, էջ 822:

[42] Տե՛ս **Մ. Օրմանեան**, Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, Կոստանդնուպոլիս, 1912, § 738:

[43] Տե՛ս **Վ. Վարդանյան**, Վասպուրականի 910-930-ական թթ. պատմության շուրջը, «Պատմա-բանասիրական հանդես», 1980, N 1, էջ 219:

թագադրությունը և կամ Վասպուրականում նստող կաթողիկոսի կողմից Աբասին որևէ այլ տեղում թագադրելը մեծ հավանականությամբ պետք է տեղի ունեցած լիներ Գագիկ Արծրունու հավանությամբ: Մյուս կողմից, ակնհայտ է, որ անհրաժեշտ է ինչ-որ լուծում գտնել Աշոտ Երկաթից հետո Աբասի իրավահաջորդության խնդրին, քանի որ հայտնի է Աբասի՝ տարագրության մեջ շուրջ 10 տարի անցկացնելու իրողությունը: Անշուշտ, հենց նշված՝ սկզբնաղբյուրների տեղեկություններով որևէ կերպ լուծում չստացող խնդիրներն էլ մղել են Մ. Չամչյանցին՝ ստեղծելու վերոբերյալ պատմությունն այն մասին, որ Աբասին հայոց գահը փոխանցել է Աշոտ Երկաթը, և նրան թագադրել են Վասպուրականում՝ Գագիկ Արծրունու համաձայնությամբ և աջակցությամբ: Սակայն փաստերը ցույց են տալիս, որ Աբասին Վասպուրականում չեն թագադրել, այլապես Արծրունյաց տան անանուն պատմիչն առիթը բաց չէր թողնի՝ նման իրադարձությունը նկարագրելու և դրանով Գագիկ Արծրունու դերը Հայաստանում բացարձակացնելու համար: Ավելին, կարելի է եզրակացնել, որ Աբասի թագադրությանը Վասպուրականում գտնվող հայոց կաթողիկոսը չի մասնակցել: Խնդիրն այն է, որ արդեն Աշոտ Երկաթի թագադրությամբ այդ իրադարձությանը կաթողիկոսի մասնակցությունը վերածվել էր ոչ պարտադիր սկզբունքի: Հովհաննես Դրասխանակերտցին, որ Աշոտ Երկաթի օրոք հայոց կաթողիկոսն էր (898-925/926), պատմում է, որ անվեհեր թագաժառանգի առաջին հաղթական կռիվներից հետո, երբ ազատագրվեց Հայաստանի մի զգալի մասը, 914 թ. «**զայն տեսեալ ապա թագաւորին Վրաց, այլ եւ զաւրացն իւրոց ... թագ նմա** (իմա՛ Աշոտ Երկաթին – Ա. Ե.) **կապեալ՝ թագաւորեցուցանէին զնա փոխանակ հաւր իւրոյ, յինքնակալութեան իմն պայմանի պատուոյ զնա համարեալ**»[44]: Այս մասին պատմիչը գրում է մեկ այլ տեղում ևս. «**Աշոտ որդի Սմբատայ, զոր**

[44] **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 509:

թագաւորեցուցին Վրաց արքայն և զաւրք իւր ի վերայ Հայաստանեայցս»[45]: Նախ պարզվում է, որ Աշոտ Երկաթին թագադրել է Կղարջքի թագավոր Ատրներսեհը[46], այնպես, ինչպես ժամանակին թագ էր բերել նրա հայր Սմբատին[47]: Այնուհետև պատմիչը, որ նաև հայոց կաթողիկոսն էր, որևէ կերպ չի ակնարկում Աշոտ Երկաթի թագադրությանն իր մասնակցության մասին, ավելին, դրա կազմակերպումը և իրականացումն ամբողջությամբ վերագրելով վրաց թագավորին և որևէ մանրամասն չհաղորդելով՝ այդ կերպ անուղղակիորեն մատնանշում է իր բացակայությունը պետության կյանքում մեծ կարևորություն ունեցող իրադարձությունից:

Ասվածի հիման վրա պետք է եզրակացնել, որ Մ. Չամչյանցի կողմից ներկայացված, բայց աղբյուրներում իր հիմնավորումը չգտնող պատումի հավաստիությունը խիստ կասկածելի է, իսկ դրա վրա որևէ ենթադրություն կառուցելը՝ առավել ևս: Իրականում, դատելով ամեն ինչից, Աբասն այդպես էլ չհաշտվեց եղբոր հետ և նրա օրոք Այրարատ չվերադարձավ: Խնդիրն այն է, որ խնդրո առարկա ժամանակաշրջանի մասին մանրամասն տեղեկություններ հաղորդող Հովհաննես Դրասխանակերտցին Աբասի մասին որևէ տեղեկություն չի հաղորդում, մինչդեռ նախկինում հանգամանալից պատմում էր, թե ինչպես էր Աբասն աջակցում եղբորը:

Ի դեպ, այնքան էլ ճիշտ չէ կարծելը, որ 918 թվականից հետո Աբասը երկպառակությունների չի մասնակցել: Վերևում անդրադարձանք այն իրողությանը, որ Աշոտ Երկաթի դեմ անհաջող դա-

---

[45] Նույն տեղում, էջ 525:

[46] Կարծիք է հայտնվել, որ 915 թ. Աշոտ Երկաթն իրեն հայոց թագավոր ճանաչելու խնդրանքով դիմել է աբխազաց Կոստանդին Գ թագավորին (893-922), որն էլ ընդառաջել է ու Ատրներսեհի հետ միասին կազմակերպել նրա թագադրությունը: Տե՛ս **С. Ашхацава**, Пути развития Абхазской истории, Сухуми, 1925, с. 14: Սակայն նման պնդումն իր հիմնավորումը չի գտնում սկզբնաղբյուրներում:

[47] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 448:

վադրությունից բավականին ժամանակ անց, երբ հայոց արքան արշավեց հյուսիս՝ պատժելու վրաց իշխան Գուրգենին, վերջինիս օգնության շտապեց հենց Աբասը՝ այդպիսով հանդես գալով եղբոր՝ Հայոց և Վրաց շահնշահի դեմ:

Այս առումով, և, ընդհանրապես, Գագիկ Արծրունին Աբասին թագադրելու առանձնապես մեծ ջանքեր չպետք է գործադրեր, որովհետև ինչ-որ մի պահի ստիպված էր լինելու պայքարել նրա հետ առաջնության համար: Այս առումով հետաքրքրական է, որ Բ. Հարությունյանը, թեև նույնպես համոզված էր, որ Աբասը՝ որպես հայոց թագավոր, թագադրվել է Գագիկ Արծրունու կողմից[48], բայցևայնպես կարծիք է հայտնել, որ հենց Վասպուրականի տիրակալի ցուցումով Արծրունյաց տան Անանուն պատմիչն Աբասին երբեք «արքա» տիտղոսով չի հիշատակել[49]: Խնդիրն այն է, որ Գագիկ Արծրունին ուներ բովանդակ Հայաստանում թագավորելու նկրտումներ, քանի որ կրում էր «թագավոր Հայոց» և «շահնշահ/թագավոր Հայոց և Վրաց» տիտղոսները[50]: Ակնհայտ է, որ Աբասի թագադրությունը Գագիկ Արծրունուն վերագրելու տեսակետը և միաժամանակ հայոց գահի նկատմամբ նրա ունեցած հավակնությունների անկասկածելի իրողությունը հակասում են իրար, ուստի Աբասի թագադրությունը Գագիկին վերագրելը չափազանց անհավանական է:

---

[48] Տե՛ս **Բ. Հարությունյան**, Արծրունյաց իշխանական ընտանիքը Հայոց պատմության մեջ, Եր., 2016, էջ 190:

[49] Տե՛ս նույն տեղում, էջ 189: Ի դեպ, կարևոր է նաև այն, որ Անանուն պատմիչն ավելի ծայրահեղական է գտնվել Աշոտ Երկաթի պարագայում: Ինչպես դիպուկ նկատել է Պ. Հովհաննիսյանը, նա Աշոտ Երկաթին չի հիշատակում, նրա համար այդպիսի թագավոր կարծես թե չի եղել, քանի որ հայոց թագավոր էր հռչակվել Գագիկ Արծրունին: Տե՛ս **Պ. Հովհաննիսյան**, Երկու ուղղություն X դարի հայ պատմագրության մեջ, «Հայագիտության հարցեր», 2014, № 2, էջ 117:

[50] **A. Yeghiazaryan**, Gagik Artsruni - «King of Armenia and Georgia», pp. 80-82.

Նշվածը հաշվի առնելով՝ ամենահավանական եզրակացությունն այն է, որ **Աշոտ Երկաթի մահից հետո Աբասի թագադրությունը կազմակերպել է ոչ թե Գագիկ Արծրունին, այլ 919 թ. նրան ապաստան տրամադրած նրա աներ և հովանավոր վրաց իշխան Գուրգենը՝ առանց Վասպուրականում նստող և Գագիկ Արծրունու ազդեցության ներքո գտնվող հայոց կաթողիկոս Թեոդորոս Ռշտունու (927-937) մասնակցության, որից հետո Աբասը ժամանել է Այրարատ**: Աբասի թագադրության և Այրարատում հաստատվելու թվականը կարելի է ճշտել՝ հստակեցնելով Աշոտ Երկաթի վախճանի ժամանակը: Ըստ Ասողիկի՝ Աշոտ Երկաթը «**զկնի մահուան հաւր իւրոյ կեցեալ ամս ԺԵ** (15) **եւ թագաւորեալ ամս Ը** (8)**, վախճանի յՅՀԸ** (378) **թուականին**»[51]: Այս տեղեկության մանրամասնությունների մեջ մտնելը դուրս է մեր քննության շրջանակներից, դրանում այժմ մեզ հետաքրքրում են միայն Աշոտ Երկաթի մահվան թվականին առնչվող նշումները: Դրանք երկուսն են. Աշոտ Երկաթը հոր մահից (914 թ. հունվարի 7) հետո ապրել է 15 տարի և վախճանվել հայոց 378 թ., որը սկսվել է 929 թ. ապրիլի 8-ին և ավարտվել 930 թ. ապրիլի 8-ին[52]: Հաշվարկը մատնանշում է Աշոտ Երկաթի վախճանի 929 թվականը: Փաստորեն, Աբասը թագադրվել է 929 կամ 930 թ.: Խնդրո առարկա թվականի վերջնական վերջնական ճշգրտումը կկատարենք հետագայում, երբ կպարզաբանենք դրան առնչվող մյուս կարևոր հիմնահարցերը:

Այրարատում, որ Բագրատունյաց տիրույթն էր, ամեն ինչ չէ, որ հարթ է ընթացել Աբասի համար: Այնտեղ էր գտնվում 916 թ. Յուսուֆի կողմից հայոց թագավոր հռչակված Աշոտ Շապուհյանը: Վերջինիս վերաբերյալ գրականության մեջ գերիշխում է այն կարծիքը,

---

[51] **Ասողիկ**, էջ 748:

[52] Հաշվարկը կատարված է ըստ Բ. Թումանյանի կազմած տոմարական հաշվումների սկզբունքների: Տե՛ս **Բ. Թումանյան**, Տոմարական հաշվումներ, «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1964, N 5, էջ 55-60:

թե նրա թագավորությունը շարունակություն չի ունեցել, ուստի Աբասը ընտանի հակառակորդ չի ունեցել և տիրել է ողջ Այրարատին[53]: Բայց ըստ մի եզակի տեղեկության՝ Աշոտ Շապուհյանը «թագավորել» է 18 տարի. «**զԱշոտ, որդի Շապուհոյ, եղբօր Սմբատայ, կացուցանէ** (Յուսուֆը) **ի տեղւոջ Սմբատայ, որ թագաւորեաց Հայոց ամս ԺԸ (18)**»[54]: Եթե Աշոտ Շապուհյանի թագավորությունը հաշվարկենք 916 թվականից, երբ Աշոտ Երկաթի՝ Կոստանդնուպոլսից վերադառնալուց հետո Յուսուֆը նրան անմիջապես հռչակեց հայոց թագավոր[55], ապա կստացվի, որ նա վախճանվել է 934 թ.[56]: Ստեղծված իրավիճակում Աշոտ Շապուհյանը ևս ամենայն հավանականությամբ չէր կարող ճանաչել Աբասի գերագահ իրավունքները: Նա, ի դեպ, Այրարատում տիրում էր մի շարք կենտրոնական շրջանների: Դեռևս Աշոտ Երկաթի օրոք նա հիմնավորվել էր Արշարունիք գավառի արևելյան հատվածում՝ Բագրատունի առաջին գահակալի՝ Աշոտ Մեծի նստոց Բագարանում, որտեղ 923 թ. ապաստան էր տվել հայոց կաթողիկոսին[57]: Հայտնի է նաև, որ նրան էր պատկանում ճակատք գավառի Կողբ գյուղաքաղաքը[58]: Մյուս կողմից, Այրարատի հարավային Ծաղկոտն, Կոգովիտ և Մասյացոտն գավառները մտնում էին Գագիկ Արծրունու տիրույթների մեջ[59]:

---

[53] Տե՛ս **Լեո**, նշվ. աշխ., էջ 575:

[54] «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հ. II, կազմեց Վ. Հակոբյան, Եր., 1956, էջ 501: Հմմտ. «Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի քէօթուկը)», աշխատասիրութեամբ՝ Պ. Մուրադեանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 58:

[55] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 538:

[56] Մ. Չամչյանցն Աշոտ Շապուհյանի մահը դնում է 936 թ.: Տե՛ս **Մ. Չամչյանց,** նշվ. աշխ., էջ 826:

[57] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 565-567:

[58] Տե՛ս նույն տեղում, էջ 478, 538:

[59] Տե՛ս նույն տեղում, էջ 559-561; **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 282:

Փաստորեն, բացի այն, որ Այրարատ ժամանելու պահին հայոց թագավոր հռչակված Աբասն Այրարատից դուրս իշխանություն չուներ, այնտեղ ևս նրա իշխանությունն ամբողջական չէր:

Այսպիսով՝ Աբասի մուտքը Հայոց թագավորություն կատարվեց խիստ դժվարին պայմաններում: Նա պարզապես վերածվեց երկրում գործունեություն իրականացնող հերթական հայոց թագավորի, որը դեռ պետք է ապացուցեր սեփական գերակայության նպատակների, որոնք, անկասկած, առկա են եղել, հիմնավոր լինելը: Նրանից ավելի շահեկան դիրքերում էր գտնվում Գագիկ Արծրունին, որ միահեծան իշխում էր Վասպուրականում և հարակից երկրամասերում՝ որպես գերակա ճանաչվելով, ինչպես կտեսնենք, նաև հարևանների կողմից: Մինչդեռ Բագրատունիները պառակտված վիճակում էին, որոնց Այրարատի տիրույթներում գործում էին երկու հայոց թագավորներ:

1.3. Իրավիճակը Հայաստանում և Հայաստանի շուրջ Աբասի գահակալության առաջին շրջանում

Աբաս Բագրատունու առաջին կարևոր գործերից մեկը նոր թագավորանիստի ընտրությունն էր: Այն կանգ առավ Կարսի վրա, որը դեռևս IX դ. վերջերին վերածվել էր քաղաքի՝ միջնաբերդով ու արվարձաններով[60]: Ժամանակակից կաթողիկոս Անանիա Մոկացին Կարսն անվանում է «**թագավորանիստ շահաստան**»[61]: Աբասի հրամանով այստեղ 930 թ. սկսվեց Կաթողիկե Սուրբ Առաքելոց եկեղեցու շինարարությունը[62], որն ավարտին հասավ 942 թ.[63]:

Աբասի գահակալության առաջին տարիների մասին քիչ բան է հայտնի: Այդ ժամանակ առավել էական էր Գագիկ Արծրունու դերակատարությունը, որն էլ Բյուզանդիայի կողմից ճանաչվում էր որպես «**իշխանաց իշխան**»: Միևնույն ժամանակ Աբասը Ռոմանոս Ա Լեկապենոս (920-944) և Կոստանդին Է Ծիրանածին (913-959 թթ., որից 920-944 թթ.՝ Ռոմանոսի հետ գահակցությամբ) կայսրերի կողմից կոչվում է պարզապես «**մագիստրոս**», քանի որ, ինչպես ճիշտ կերպով նշում է Հ. Բարթիկյանը, իշխանաց իշխանի տիտղոսը, այսինքն՝ այս պարագայում գերակա թագավորի տիտղոսը, պատկանում էր Գագիկ Արծրունուն[64]: Դատելով Թովմա Արծրունու վերոհիշյալ այն տեղեկությունից, թե մոտ 927 թ. Յուսուֆը «**տայ ի ձեռս արքայի** (իմա՛ Գագիկ Արծրունու – Ա. Ե.) **զաշխարհս Հայոց եւ Վրաց, եւ ուխտ խաղաղութեան եդեալ, գնայ յերկիրն Պարսից**», Գա-

---

[60] Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ 891 թ. Սմբատ Ա-ն «ասպատակ սփռէր ի վերայ աշխարհակոյտ շինիցն... շուրջ զամրոցաւն [Կարուց]»: Նույն տեղում, էջ 447-448:

[61] **Անանիա Մոկացի**, էջ 260:

[62] Տե՛ս **Ասողիկ**, էջ 749; **Անանիա Մոկացի**, էջ 259-260:

[63] Տե՛ս **Թ. Թորամանյան**, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխատությունների Բ ժողովածու, Եր., 1948, էջ 133:

[64] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 225, ծ. 15:

գիկ Արծրունուն է փոխանցվել «թագավոր Հայոց և Վրաց» տիտղոսը՝ համապատասխան կարգավիճակով:

Ասվածի լույսով պատահական չէ, որ 930-ական թթ. սկզբին Գագիկ Արծրունին իրեն իրավունք վերապահեց մի նամակ հղել Բյուզանդիայի Ռոմանոս Ա կայսրին՝ խնդրելով հայերին վերցնել իր հովանու ներքո: Նա մասնավորապես գրում էր, որ «**ոչ միայն սիրողաբար հարկս հարկանէաք կայսէր, այլ և առ Սուրբ հաւատոյն միաւորութիւն խոստովանութեան հաղորդս և հաւասարս գտանէաք**»[65]: Փաստորեն, նա խոսում էր ողջ հայության անունից և նրան խոստանում ոչ միայն հարկատու դառնալ, այլ նաև՝ հաղորդակից հունական եկեղեցուն: Եթե հաշվի առնենք, որ այդ ժամանակ Վասպուրականում էր գտնվում նաև կաթողիկոսանիստը[66], ապա պարզ կդառնա, որ նման նամակը միայն Վասպուրականի թագավորության կամ թագավորի անունից գրվել չէր կարող: Այն, որ նման նամակ գրվել է, և դա ունեցել է լուրջ հետևանքներ, հիմնավորվում է հիջրայի 319 թվականով (931 հունվար-932 հունվար) թվագրված՝ Իբն ալ-Ասիրի մի հիշատակությամբ, ըստ որի՝ «**այդ տարում Իբն ալ-Դայրանին** (իմա՛ Դերենիկի որդին, այսինքն՝ Գագիկ Արծրունին – Ա. Ե.) և **Հայաստանի ծայրամասային [գավառների] այլ հայազգի [իշխաններ] գրեցին հոռոմներին՝ դրդելով հարձակվել իսլամի երկրի վրա և խոստանալով իրենց օգնությունը**: Հոռոմները մեծ բազմությամբ հարձակվեցին, **ավերեցին Բերկրին, Խլաթն իր շրջակայքով**, մահմեդականներից շատերին սպանեցին և մեծ բազմություն գերեցին»[67]: Փաստորեն, արաբ պատմիչի տեսանկյունից հենց Գագիկ

---

[65] «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 295-301:

[66] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 579:

[67] **Ibn al-Athīr**, Al-Kāmil fī al-tārīkh, ğ. 7, Beirut, 1987, ṣ. 69-70. Թարգմանությունը տե՛ս **Իբն ալ-Ասիր**. «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 11, Արաբական աղբյուրներ», Բ, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Արամ Տեր-Ղևոնդյանի, Եր., 1981, էջ 178-179:

Արծրունին էր Հայաստանի իշխողը, որն էլ, համախմբելով երկրի մյուս իշխաններին, օգնության համար դիմել է Բյուզանդիային: Ի դեպ, խիստ հավանական է, որ խոսքը միևնույն իրադարձության մասին է: Իսկ դա նշանակում է, որ 930-ական թթ. սկզբին Գագիկ Արծրունու հորդորով Հայաստան են ներխուժել բյուզանդական զորքերը, թեև նամակում նման խնդրանք չկար:

Ակնհայտ է, որ Աբասի թագավորության առաջին տարիները լեցուն էին բազում դժվարություններով: Դրան հավելվում էր նաև այն, որ Հայաստանում, բացի նրանից, երկու այլ հայոց թագավորներ էլ կային, և Աբասը դեռ պետք է կարողանար հաստատել սեփական առաջնությունը:

Նշվածը հաշվի առնելով՝ զարմանալի չէ, որ Ռոմանոս Ա Լեկապենոս կայսրը նպատակ ուներ, հաշվի չառնելով Աբասի ու Գագիկ Արծրունու առկայությունը, մի երրորդ անձի դարձնելու գերագահ Հայաստանի թագավորների ու իշխանների նկատմամբ: Այդ նպատակով Բյուզանդիայի կայսրը մի նամակ էր ուղարկել Հայաստան, որտեղ նշված չէր հասցեատերը: Նրան, որ միայն «վերջերս էր ծանոթ դարձել կայսրությանը», առաջարկվում էր «իշխանաց իշխանի» պատիվը: Կայսրը նախկինում պատվիրակ էր ուղարկել, որը պետք է հանդիպեր Գագիկ Արծրունուն և վերջինիս կողմից ուղարկվեր նամակի հասցեատիրոջ մոտ, սակայն ինչ-որ պատճառով տեղ չէր հասել: Կայսրության բարեկամը դառնալու դիմաց կայսրը խոստանում էր. «**մենք** (իմա՛ կայսրը – Ա. Ե.) **կշնորհենք քեզ իշխանաց իշխանի պատիվ և կհրամայենք Գագիկին և մագիստրոս Աբասիկին և մյուս իշխաններին, որոնք բնակվում են նույն այդ վայրերում, հպատակվել քո խոսքին և վճռին**»[68]:

---

[68] **Կ. Յուզբաշյան**, Ռոմանոս Լակապենոս կայսեր անհայտ հասցեատերը, էջ 36-37:

Խնդրին անդրադարձած Կ. Յուզբաշյանը նամակի հասցեատիրոջն այդպես էլ չի բացահայտում: Նա նամակը թվագրում է 929-943 թթ. միջակայքով, այսինքն՝ Աշոտ Երկաթի մահվանից մինչև Գագիկ Արծրունու մահն ընդգրկող շրջանով[69]: Ըստ նրա՝ այդ ժամանակ, «**Աբաս Բագրատունուց և Գագիկ Արծրունուց բացի, Հայաստանում այլ թագավոր չի եղել**»[70]: Կ. Յուզբաշյանը կարծում էր նաև, որ Բյուզանդիայի տեսակետից տարածաշրջանում կարող էր լինել միայն մեկ իշխանաց իշխան, և այդ տիտղոսը կրել են առաջին երեք Բագրատունի արքաները[71]: Հ. Բարթիկյանը քննադատում էր նման մոտեցումը՝ նշելով, որ կարող էին լինել մեկից ավելի իշխանաց իշխաններ[72]: Սակայն Կոստանդին Ծիրանածնի երկում ասվում է, որ Գագիկ Արծրունին «**իշխանաց իշխանի պատիվն է ստացել**»՝ կարծես ամրագրելով, որ նման պատիվը մեկն է, այլապես գրված կլիներ «իշխանաց իշխանի պատիվ է ստացել», պատիվ, որ կարող էին ստանալ նաև մյուսները: Սակայն այստեղ առաջանում է երկրորդ խնդիրը: Բանն այն է, որ եթե մինչև Աշոտ Երկաթի վախճանն իշխանաց իշխանի պատիվը կրում էր միայն մեկ անձ, ապա խնդրո առարկա նամակի բովանդակությունից պարզ է, որ նամակի հասցեատերը համաձայնելու պարագայում ստանալու էր իշխանաց իշխանի պատիվ, բայց միևնույն ժամանակ՝ իշխանաց իշխան էր նաև Գագիկը, որին այդ պատվից զրկելու մասին խոսք չկա: Այդ պահի դրությամբ պետք է հստակ սահմանագիծ անցկացնել զուտ իշխանաց իշխանի պատիվը կրողների և Բյուզանդիայի կողմից որպես գերա-

---

[69] Տե՛ս **Կ. Յուզբաշյան**, Ռոմանոս Լակապենոս կայսեր անհայտ հասցեատերը, էջ 38-43, նույնի՝ «Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв.», М., 1988, с. 85, 268-275:

[70] **Կ. Յուզբաշյան**, Ռոմանոս Լակապենոս կայսեր անհայտ հասցեատերը, էջ 42:

[71] Տե՛ս նույն տեղում, էջ 39, 41-42:

[72] Տե՛ս **Հ. Բարթիկյան**, Բյուզանդիան և հայ պետականությունը X-XI դդ., «Լրաբեր հասարակական գիտությունների», 1996, N 1, էջ 25:

գահ ընդունվողների միջև, ուստի պատիվը կարող էին կրել մեկից ավելի մարդիկ, իսկ գերագահ, բնականաբար, կարող էր համարվել միայն մեկը: Նամակի հասցեատիրոջն առաջարկվում էր գերագահություն, այնպիսին, ինչպիսին ունեին Բագրատունի առաջին գահակալները, իսկ Գագիկ Արծրունին, որ պետք է ենթարկվեր նրան, փաստորեն, զրկվելու էր գերագահությունից՝ պահպանելով միայն պատիվը կամ պատվատիտղոսը:

Թեև Կ. Յուզբաշյանը կարծում էր, թե 929-943 թթ. Հայաստանում, Գագիկից ու Աբասից բացի, այլ թագավոր չկար, փաստերը ցույց են տալիս հակառակը: Հայաստանում իշխող երրորդ «Հայոց թագավորը» Աշոտ Շապուհյանն էր, որ 930-ական թթ. առաջին կեսին, ինչպես տեսանք, դեռ կենդանի էր:

Կարելի է կարծել, որ Ռոմանոս Ա կայսեր նամակի ամենահավանական հասցեատերը հենց Աշոտ Շապուհյանն էր, որը, սկզբում զրկվելով Ատրպատականի հովանավորությունից, Խալիֆայության կողմից Գագիկ Արծրունուն հայոց և վրաց թագավոր հռչակելուց հետո պետք է մտածեր Բյուզանդիայի հետ հարաբերությունները զարգացնելու մասին, որով էլ հիմնավորվում է նրա՝ կայսրությանը միայն կարճ ժամանակ առաջ «ծանոթ դառնալու» իրողությունը: Բագրատունիներից, փաստորեն, Աշոտ Շապուհյանը թագավոր էր հռչակվել նախքան Աբասը՝ դեռևս 916 թ., որով էլ թերևս բացատրվում է կայսեր այն խոստումը, թե ինքը կհրամայի Աբասին հնազանդվել նրան: Փաստորեն, Աշոտ Շապուհյանի կշիռը կայսեր աչքին բարձրացել էր այնքան, որ նա կամենում էր նույնիսկ հրամայել Գագիկ Արծրունուն և Աբասին՝ հպատակվելու նրան: Աշոտ Երկաթի թագավորության վերջին տարիներին Աբասն անցկացրել էր տարագրության մեջ, իսկ նրա մահից հետո էլ բավականին ժամանակ էր պահանջվելու երկրում համապատասխան իշխանություն և հեղինակություն ձեռք բերելու համար: Միևնույն ժամանակ Աշոտ Շապուհյանը հիմնավորվել էր Բագրատունի առաջին գահակալի՝

Աշոտ Մեծի նստոց Բագարանում, որտեղ 923 թ. ապաստան էր տվել հայոց կաթողիկոսին[73]: Ամենայն հավանականությամբ Աշոտ Երկաթի մահից հետո, օգտվելով օրինական գահաժառանգի՝ Աբասի բացակայությունից, նրան հաջողվել էր տեր կանգնել Այրարատի մի շարք շրջանների՝ բազմապատկելով իր հնարավորությունները: Բագարանին տիրելն արդեն իսկ խոսում է դրա օգտին: Ուստի Բյուզանդիան պատրաստ էր նրան Մեծ Հայքի իշխանաց իշխան ճանաչել, միայն թե նա դառնար Բյուզանդիայի դաշնակիցը:

Սակայն 934 թ. Աշոտ Շապուհյանը վախճանվեց: Նրա ժառանգների մասին ոչինչ հայտնի չէ, ուստի կարելի է կարծել, որ նա մահացավ անզավակ[74]: Նրա տիրույթները, անկասկած, անցան Աբասին, որով կտրուկ աճեցին վերջինիս հնարավորությունները: Այդպիսով՝ Հայաստանում մնացին միայն երկու հայոց թագավորներ, որոնք ներուժի առումով արդեն համահավասար դիրքերում էին:

Նոր պայմաններում ևս սկզբում Աբասի գործերը հաջող չէին դասավորվում: Ըստ Անանունի՝ Յուսուֆի մահից հետո (927) Ատրպատականում («Պարսից երկիր») անիշխանություն էր տիրում[75]: Այդ ժամանակ «**այր մի արաբացի ազգաւ**», «**այր հմուտ պատերազմաց եւ գործոց զինուորութեան**» ստվար բանակով ներխուժում է Հայաստան: Ըստ պատմիչի՝ նա Գողթն-Նախճավան-Շարուր ուղեգծով արշավում է մինչև Դվին: Այնտեղից նա հարկապահանջներ և ոստիկաններ է ուղարկում Այրարատ: Վերջիններս գալիս են Արագածոտն գավառը, «**որ է բաժին կալուածոց Աբասայ որդւոյ Սմբատայ**» և գրավում այն: Աբասը օգնության համար դիմում է Գագիկ Արծրունուն, սակայն չի սպասում նրա գալստյանն ու միայնակ ճակատամարտ է տալիս հակառակորդին: Նա պարտություն է

---

[73] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 565-567:
[74] Տե՛ս **Հ. Հարությունյան**, նշվ. աշխ., էջ 92:
[75] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 284-285:

կրում և նահանջում Վիրք, թերևս, վրաց իշխան Գուրգենի տիրույթները: Շուտով վրա հասած Վասպուրականի զորքը Երասխի ափին ջախջախում է թշնամու բանակը և պաշարում Դվինը՝ կամենալով հրդեհել այն: Քաղաքի արաբ մեծամեծերի խնդրանքով և մեծ հարկի ու պատանդների դիմաց Գագիկ Արծրունին, ի վերջո, հրաժարվում է իր ծրագրից[76]:

Այս իրադարձությանը, դրա թվագրմանը, ինչպես նաև «արաբացի» ներխուժողի անձին գիտական գրականության մեջ անդրադարձ եղել է: Հ. Հարությունյանը կարծում է, որ ներխուժողը Նախճավանի ամիրն էր[77], ինչը հակասում է Անանունի տեղեկության տրամաբանությանը, ըստ որի՝ թշնամին «**յանկարծաւրէն թեւակոխեաց անցանել ընդ Գողթնաստան եւ ընդ աւանն Նախճաւան**»[78], այսինքն՝ արշավանքը տեղի է ունեցել ոչ թե Նախճավանից, այլ Նախճավանով: Ա. Տեր-Ղևոնդյանը մի դեպքում հավանական է համարում, որ հարձակվողը Ատրպատականի Սաջյանների զորավար, 938 թ. Արպատականին տիրած Դայսամն էր[79], իսկ մի այլ դեպքում՝ կասկած հայտնում Ատրպատականի համար պայքար մղող և մի պահ այն նվաճած զորավարներից Լաշքարիի անձի շուրջ[80]: Հաջորդ անգամ նա կանգ է առնում Լաշքարիի վրա, որը, ըստ նրա, Հայաստան է ներխուժել 930-ական թթ. վերջերին[81], սակայն ի վերջո որոշում զերծ մնալ ներխուժողի անձը որոշելուց՝ ընդհանուր առմամբ

---

[76] Տե՛ս նույն տեղում, էջ 292:

[77] Տե՛ս **Հ. Հարությունյան**, Հայաստանը IX-XI դարերում, Եր., 1959, էջ 93:

[78] **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 292:

[79] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Դվինը Սալարյանների ժամանակ, «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1956, N 12, էջ 81:

[80] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Դվին քաղաքի ժամանակագրությունը 9-11-րդ դարերում, «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1957, N 10, էջ 18:

[81] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 63:

նշելով, որ ներխուժումը տեղի է ունեցել 930-ական թթ.[82]: Վ. Վարդանյանը սկզբում համոզված էր, որ հարձակվողը Լաշքարին էր, և որ այդ իրադարձությունը տեղի է ունեցել 936 թ.[83]: Այնուհետև նա վերանայել է իր կարծիքը՝ ներխուժումը թվագրելով 941 թվականով և դրա ղեկավարումը վերագրելով Ատրպատականի ամիրաներից մեկին[84]: Դատելով հեղինակի տեքստից՝ նման փոփոխության պատճառ է դարձել այդ իրադարձության ընթացքում հայոց կաթողիկոս Եղիսեի հիշատակությունը[85], որը, ըստ նրա, իշխել է 941 թվականից[86]:

Այն, որ նշված իրադարձության թվագրումն ի վերջո աղերսվում է Եղիսե կաթողիկոսի անվան հիշատակության հետ, ակնհայտ է: Բայց խնդիրն այն է, որ Եղիսեի աթոռակալությունը չէր կարող սկիզբ առնել 941 թ., քանի որ նրա հաջորդ Անանիա Մոկացի կաթողիկոսն իր «թղթերում» սեփական գահակալության սկիզբը դնում է հայոց ՅՂ թվականին (390 թ.՝ 5 ապրիլ, 941 թ.-5 ապրիլ, 942 թ.)[87]: Այդ իրողությունը ցույց է տալիս, որ Եղիսեի հնգամյա աթոռակալությունը[88] սկիզբ է առել 937 թ., ուստի ներխուժումը պետք է թվագրել 937-942 թթ. միջակայքով:

---

[82] Տե՛ս **А. Тер-Гевондян**, Армения и Арабский халифат, Е., 1977, с. 246:

[83] Տե՛ս **Վ. Վարդանյան**, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը 908-1021 թթ., Եր., 1969, էջ 107-109:

[84] Տե՛ս **Վ. Վարդանյան**, Արծրունիները հայոց պատմության մեջ, Եր., 2002, էջ 131:

[85] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 293:

[86] Տե՛ս **Վ. Վարդանյան**, Արծրունիները հայոց պատմության մեջ, էջ 131:

[87] Տե՛ս **Անանիա Մոկացի**, էջ 268:

[88] Տե՛ս **Վարդան վարդապետ**, էջ 89: Ըստ Ասողիկի՝ Եղիսեն գահակալել է յոթ (Է) տարի: Տե՛ս **Ասողիկ**, էջ 749: Ամենայն հավանականությամբ, «Է»-ի փոխարեն նշված է եղել «Ե (5)» տարի: Նման աղավաղումը գրչագրական հիմքով առավել քան հնարավոր է:

Սակայն հարկ է նշել Անանունի տեղեկության հետ առնչվող մի շարք կարևոր իրողությունների մասին, որոնք օգնում են ճշգրտելու թե՛ արշավանքի ժամանակը և թե՛ այն գլխավորող զորավարի անձը: Նախ Անանունն այդ իրադարձությունը կապում է անմիջապես Յուսուֆի մահից (927) հետո Ատրպատականում տիրող անիշխանության հետ: Հետո՝ «**որ է բաժին կալուածոց Աբասայ որդւոյ Սմբատայ**» արտահայտությունը, ինչպես նաև այն, որ ներխուժած զորքի դեմ դիմադրությունը կազմակերպում է Աբասը, ցույց են տալիս, որ Աշոտ Երկաթն արդեն վախճանվել էր, բայց նաև, որ Աբասը նոր է միայն հիմնավորվում հայոց գահին, այնպես, որ պատմիչը նույնիսկ հարկ չի համարում Աբասին թագավոր կոչել: Ի դեպ, Այրարատում Աբասի մյուս կալվածքը Արշարունիք գավառն էր[89], որի արևելքում գտնվող Բագարանը նախկինում պատկանում էր Աշոտ Շապուհյանին[90]:

Հայտնի է, որ Յուսուֆի մահից հետո Ատրպատականում իշխել են Աբու ալ-Մուսաֆիր ալ-Ֆաթհը (928-929), Վասիֆի ալ-Սիրվանին (929), Մուֆլիհը (929-931/932)[91], իսկ այնուհետև՝ Բալդվայիը (932 թ.-ից)[92], Լաշքարին (937-938)[93] և Դայսամ իբն Իբրահիմ ալ-Քուրդին (938-941)[94]: Սրանցից Անանունի «**այր հմուտ պատերազմաց եւ զործոց զինուորութեան**» բնորոշմանը համապատասխանում էր հատկապես Մուֆլիհը: Խնդիրն այն է, որ, Մուֆլիհը, ըստ Իբն ալ-Ասիրի, 929 թ. հակահարված է հասցրել բյուզանդական բանակներին, պար-

---

[89] Տե՛ս **Գարեգին Ա կաթողիկոս**, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա (Ե դարից մինչեւ 1250 թ.), Անթիլիաս, 1951, էջ 172:

[90] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 565-567:

[91] Տե՛ս **Ibn Ẓāfir**, 1, էջ 118:

[92] Տե՛ս **Ibn al-Athīr**, 7, էջ 70: Հմմտ. **В. Минорский**, История Ширвана и Дербенда X-XI веков, М., 1963, с. 49:

[93] Տե՛ս **Ibn al-Athīr**, 7, էջ 140-142:

[94] Տե՛ս նույն տեղում, էջ 145:

տության մատնել նրանց և ներխուժել Բյուզանդիա[95]: 931 թ., երբ Գագիկ Արծրունին և Հայաստանի մյուս իշխողները դիմել են Բյուզանդիայի օգնությանը, բյուզանդական բանակը ներխուժել է Հայաստան և ասպատակել Բերկրին ու Խլաթը: Այդ իմանալով՝ Հայաստան, մասնավորապես մեծ զորաբանակով Վասպուրական է ներխուժել նույն Մուֆլիհը, պարտության մատնել Իբն Դայրանիին (Գագիկ Արծրունի) և այլ իշխանների[96]:

Արաբական աղբյուրներում Մուֆլիհը հայտնի է որպես Սաջյանների ծառա: Իբն ալ-Ասիրը գրում է, որ Մուֆլիհը Յուսուֆի ծառան է եղել, և նրան նույնիսկ Մուֆլիհ ալ-Սաջի (Մուֆլիհ Սաջյան) է կոչում, մինչդեռ Իբն Զաֆիրը Մուֆլիհին համարում է Վասիֆի ալ-Սիրվանիի ծառան[97]: Սակայն Եղիսե կաթողիկոսի (937-942) հիշատակությունն այս արշավանքի առիթով ցույց է տալիս, որ խոսքը Մուֆլիհի մասին չէ: Արշավանքը չէր կարող ղեկավարել նաև Լաշքարին, քանի որ անձամբ նա 938 թ. ներխուժել է միայն Վասպուրական, որտեղ պարտություն է կրել և սպանվել Ատոմ Անձևացու [Ատում իբն Ջուրջին (Ատոմ, Գուրգենի որդի), Ատում ալ-Արմանի (Ատոմ հայ)] կողմից[98]:

Ահա նշված պատճառներով է, որ Ա. Տեր-Ղևոնդյանն ի վերջո հրաժարվել է արշավանքը ղեկավարող զորավարի անձը ճշգրտելուց: Սակայն որոշ հստակեցումներ կատարելը, այնուամենայնիվ, հնարավոր է: Այն, որ արշավանքը տեղի է ունեցել Եղիսե կաթողիկոսի աթոռակալության շրջանում, փաստված է Անանուն պատմիչի կողմից: Այսինքն՝ ընդհանուր առմամբ արշավանքը տեղի է ունեցել 937-942 թթ. միջակայքում: Արշավանքի ուղղության նկարագրությու-

---

[95] Տե՛ս նույն տեղում, էջ 58:
[96] Տե՛ս նույն տեղում, էջ 69-70:
[97] Տե՛ս **Ibn Ẓāfir**, 1, էջ 118:
[98] Տե՛ս **Miskawayh**, Tajārib al-umam wa taʿāqib al-himam, ğ. 5, Beirut, 2003, ṣ. 223-224; **Ibn al-Athīr**, 7, էջ 140-141:

նը («**ընդ Գողթնաստան եւ ընդ աւանն Նախճաւան»**) ցույց է տալիս, որ այն տեղի էր ունեցել Ատրպատականից, որտեղ այդ շրջանում հաջորդաբար իշխել են Լաշքարին ու Դայսամը: Հայտնի է, որ 938 թ. Ատրպատականին տիրացած Դայսամը բարեկամական հարաբերություններ ուներ Գագիկ Արծրունու հետ[99], որով բացառվում է արշավանքի՝ նրա իշխանության շրջանում տեղի ունենալը: Խնդիրն այն է, որ ճակատամարտում Վասպուրականի բանակից պարտություն կրած և Դվինում ապաստանած ներխուժողները հրաշքով փրկվեցին, քանի որ Գագիկ Արծրունին կամենում էր հրկիզել քաղաքը, բայց հետո հրաժարվեց այդ մտքից: Ուստի արշավանքի տեղի ունենալու ժամանակագրական շրջանակներն ամփոփվում են 937-938 թթ., երբ Ատրպատականում իշխում էր Լաշքարին: Փաստորեն՝ արշավանքը տեղի է ունեցել Լաշքարիի կարճատև իշխանության շրջանում և ղեկավարվել է ամենայն հավանականությամբ նրա զորապետներից մեկի կողմից, որի անունն անհայտ է: Ատրպատականի տիրակալը ցանկացել է Հայաստանը ենթարկել իր գերիշխանությանը և հասցրել է նույնիսկ ոստիկաններ ու հարկապահանջներ ուղարկել երկրի տարբեր կողմերը: Անմիջականորեն Լաշքարիի կողմից ղեկավարվող 938 թ. ներխուժումը Վասպուրական կարող էր ուղղակիորեն կապված լինել Դվինի մոտակայքում Գագիկ Արծրունու բանակից իր զորքի կրած պարտության դիմաց հաշվեհարդար տեսնելու մտադրության հետ: Այս պարագայում հարկ է խոսել Ատրպատականի դեմ Գագիկ Արծրունու տարած խոշոր հաղթանակի մասին, որով ծանր իրադրությունը հանգուցալուծվեց նաև Աբասի համար:

---

[99] Տե՛ս **Miskawayh**, 5, էջ 165-166:

1.4. Նոր իրավիճակի ձևավորումը և Աբասի կշռի աստիճանական աճը

Արաբ հեղինակ Իբն Հաուկալը պահպանել է մի ուշագրավ տեղեկություն այն մասին, որ մինչև հիջրայի 325 թ. (19 նոյեմբեր, 936 թ.-7 նոյեմբեր, 937 թ.) Հայաստանին հարևան մուսուլման իշխողները, չնայած այն բանին, որ տեղի քրիստոնյաները հարկ էին վճարում և ըստ մահմեդական իրավունքի՝ համարվում հովանավորյալ (զիմմի), պարբերաբար ներխուժում էին, գերեվարում և վնասներ հասցնում նրանց: Ըստ նրա՝ **հիջրայի 325 թ. հետո վիճակը փոխվեց**[100]: Թե ինչ է տեղի ունեցել այդ թվականին, խիստ կարևոր է պարզաբանել: Ա. Տեր-Ղևոնդյանը գտնում է, որ 937 թ. ամենանշանավոր իրադարձությունը Լաշքարիի ներխուժումն էր Հայաստան և պարտությունը[101]՝ նկատի ունենալով, որ Լաշքարիի ջախջախումից հետո տևական ժամանակ հարևան ամիրությունների զորքերը Հայաստան չեն ներխուժել:

Ամենայն հավանականությամբ, նշված թվականը կապված է Ատրպատականում նոր իրավիճակի ձևավորման հետ, երբ Լաշքարին պարտվել էր, իսկ երկրամասին աստիճանաբար տիրում էր Դայսամ իբն Իբրահիմը, որը բարեկամական հարաբերությունների մեջ էր Գագիկ Արծրունու հետ: Փաստորեն, Լաշքարիի մահից հետո մի քանի տարի Հայաստանը խաղաղ զարգացման հնարավորություն ստացավ, ինչն էլ արձանագրել է Իբն Հաուկալը:

---

[100] Տե՛ս **Ibn Ḥauḳal**, Liber imaginis terrae, “Bibliotheca geographorum arabicorum”, pars II, “Opus geographicum”, Leiden, 1967, p. 343:

[101] Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 16, Արաբական աղբյուրներ, Գ, Արաբ մատենագիրներ (Թ-Ժ դարեր), ներածությունը և բնագրերից թարգմանությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Եր., 2005, էջ 631, ծանոթ. 1:

Աբասի գահակալության առաջին շրջանի մի շարք կարևոր մանրամասներ լուսաբանելու համար շահեկան է Հայաստանի շուրջ 930-ական թթ. վերջին տեղի ունեցող իրադարձությունների և Հայոց թագավորության վրա դրանց ուղղակի ներգործության քննությունը: Այդ ժամանակ Հյուսիսային Միջագետքում սկսում է հզորանալ Համդանյանների ամիրությունը՝ սերտ առնչությունների մեջ մտնելով Հայաստանի հարավարևմտյան շրջանների հետ: Հիջրայի 323 թ. (935) Հասան իբն Աբու ալ-Հայջա ալ-Համդանին՝ Հյուսիսային Միջագետքի ապագա տիրակալը, որը հետագայում կոչվեց Նասիր ալ-Դաուլա, խալիֆի վեզիր Իբն Մուկլայի կողմից հարձակման ենթարկվեց և ապաստանեց Անձևացյաց գավառում [բիլադ (երկիր) ալ-Զավազան][102]: Ըստ Իբն Զաֆիրի՝ այդ ժամանակ նրան հպատակվել են «Հայաստանի թագավորները»[103]: 936 թ. (հիջրայի 324 թ.), երբ Նասիր ալ-Դաուլան խալիֆի կողմից նշանակվեց Հյուսիսային Միջագետքի կառավարիչ, ստիպված եղավ պատերազմել Արզնի իշխան Ալի իբն Զաֆար Դայլամցու դեմ: Վերջինս օգնության խնդրանքով դիմեց «հայոց թագավոր Իբն Թուռնիկին»[104]: Ալի իբն Զաֆարը պարտություն կրեց Նասիր ալ-Դաուլայի կրտսեր եղբոր՝ Դիար Բաքրի կառավարիչ Ալի իբն Աբու ալ-Հայջա ալ-Համդանիի (հետագայում՝ Սայֆ ալ-Դաուլա կոչված) կողմից: Վերջինս այնուհետև ներխուժեց Տարոն: Թե ինչ է կատարվել Տարոնում այդ ժամանակ, հայտնի չէ[105]:

---

[102] Տե՛ս **Miskawayh**, 5, էջ 185:

[103] Տե՛ս **Ibn Ẓāfir**, 1, էջ 56:

[104] Տե՛ս նույն տեղում, էջ 63: Տե՛ս նաև "Receueil des textes relatifs à l'émir Sayf al-Daula le Hamdanide", avec annotations, édité par M. Canard, "Bibliotheca Arabica", VIII, Paris, 1934, p. 71:

[105] Տե՛ս **M. Canard**, Les H'amdanides et l'Arménie, Annales de l'Institut d'Etudes Orientales, Alger, 1948, VII, pp. 84-85:

Ըստ Իբն Զաֆիրի՝ 939 թ. Սայֆ ալ-Դաուլան արշավում է դեպի Կարնո քաղաք: Վերջինիս մոտակայքում էր գտնվում Հավճիչ (Հաֆ-ջիջ) քաղաքը: Բյուզանդացիները, իմանալով Սայֆ ալ-Դաուլայի զորքի մոտենալը, քանդում են քաղաքը և նահանջում, որից հետո Սայֆ ալ-Դաուլան վերադառնում է Արզն ու ձմեռում այնտեղ[106]:

Սայֆ ալ-Դաուլայի 939 թ. արշավանքը հիշատակում է նաև Ասողիկը. «Եւ յՅՁԸ թուականին (338 թ. ապրիլ, 939 թ. ապրիլ, 940 թ.) Համտուն (իմա՛ Համդանյան – Ա. Ե.) ի Կողոնիա եմուտ զաւրաւք բազմաւք եւ անդրէն դարձաւ»[107]: Ցավոք, նա Հայաստանում տեղի ունեցածը չի հիշատակում:

940 թ. [հիջրայի 328 թ. (18 հոկտեմբեր, 939 թ. - 5 հոկտեմբեր, 940 թ.)] Սայֆ ալ-Դաուլան դարձյալ մտնում է Հայաստան: Այդ մասին հիշատակում են Իբն Զաֆիրը և Իբն ալ-Ազրակ ալ-Ֆարիկին: Ըստ Իբն Զաֆիրի՝ Սայֆ ալ-Դաուլան Խլաթում հանդիպեց «**Հայաստանի և Վրաստանի թագավորին**», որին պատիվներ մատուցեց, բայց նրանից վերցրեց որոշ բերդեր: Բացի «Հայաստանի և Վրաստանի թագավորից»՝ նրան հպատակվեցին Հայաստանի մի քանի իշխաններ: Խլաթից Սայֆ ալ-Դաուլայի զորքը շարժվեց Տարոնի իշխան Իբն Թոռնիկի (Իբն Թուռնիկ) երկիրը, գրավեց Մուշը և ավերեց մի եկեղեցի[108]:

Ըստ Իբն ալ-Ազրակ ալ-Ֆարիկիի՝ 940 թ. Սայֆ ալ-Դաուլան մտնում է Հայաստան և Դատվանում (Թայտուանա) իր մոտ կանչում Դերենիկի որդի Գագիկին (Իբն Ջաջիկ իբն ալ-Դայրանի), Խլաթ (Խիլատ), Արծկե (Դատ ալ-Ջաուզ), Արձեշ (Արջիշ) և Բերկրի (Բարքարի) քաղաքների ամիր Ահմադ իբն Աբդ ալ-Ռահման Աբու ալ-Մուիզզին,

---

[106] Տե՛ս **Ibn Ẓāfir**, 1, էջ 62:
[107] Տե՛ս **Ասողիկ**, էջ 754:
[108] Տե՛ս **Ibn Ẓāfir**, 1, էջ 63:

Մանազկերտի (Մանազջիրդ), Դաշթ ալ-Վարքի[109] և Հարքի (ալ-Հարք) ամիր Աբդ ալ-Համիդին, ինչպես նաև Հայաստանի իշխանաց իշխան (բատրիկ ալ-բատարիկա) Գրիգորի որդի Աշոտին (Աշուտ իբն Ջարջուր): Նա Գագիկ Արծրունուց ստացավ Շահրան և ալ-Համիդ ամրոցները[110]՝ շրջակա ավաններով և տարածքներով, Ահմադ իբն Աբդ ալ-Ռահմանից՝ Բաղեշ (Բաղլիս կամ Բիթլիս) քաղաքը՝ շրջակայքով, իսկ Աշոտից՝ Սասուն (ալ-Սանասունա) երկիրը՝ Կողբ (Կուլբ) և Սուլայման ամրոցներով[111]:

Երկու տեղեկությունների համադրությունը հնարավորություն է տալիս պարզաբանելու կարևոր իրողություններ: Մասնավորապես Սայֆ ալ-Դաուլան ներխուժել է Հայաստան, կանգ առել Բզնունյաց ծովի ափին՝ Խլաթում կամ Դատվանում, և հարակից երկրամասերում իշխողների հպատակության խոստումն ընդունելուց հետո նրանցից ստացել բերդեր ու տարածքներ, որոնք ընդհանուր առմամբ գտնվում էին Հայաստանի հարավ-արևմուտքում և զբաղեցնում էին ռազմավարական կարևոր դիրք, ինչպես՝ Բիթլիսը և Սասունը:

---

[109] Տեղորոշելը դժվար է, բայց ակնհայտ է, որ դրա նույնացումն այսպես կոչված Վարագա դաշտին (տե՛ս **Բ. Խալաթեանց**, Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին, Վիեննա, 1919, էջ 42; **Ա. Տեր-Ղևոնդյան**, Հայաստանը VI-VIII դարերում, Եր., 1996, էջ 77) սխալ է:

[110] Փորձ է կատարվել ալ-Համիդը նույնացնելու Ամյուկ բերդին (տե՛ս **J. Markwart**, Südarmenien und die Tigrissquellen, էջ 460), որն անհավանական է: Ամենայն հավանականությամբ, նշված ամրոցները գտնվում էին Գագիկ Արծրունու տերության հարավարևմտյան մասում և խլվել էին թուլացած Զուրարիկների ամիրությունից: Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 154:

[111] Տե՛ս “Receueil des textes relatifs à l’émir Sayf al-Daula le Hamdanide”, էջ 76-78: Անունների ու անվանումների նույնացումները՝ ըստ Ա. Տեր-Ղևոնդյանի: Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 152-153:

Հեշտությամբ ճշտվում է վերոհիշյալ տեղեկություններում նշված հայ իշխողներից յուրաքանչյուրի ինքնությունը: Իբն Ջաջիկ իբն ալ-Դայրանի անվան ներքո պետք է հասկանալ ոչ թե Գագիկ Արծրունու որդի Դերենիկին[112], այլ հենց Գագիկ Արծրունուն, քանի որ նույն այդ դեպքերին անդրադարձած Իբն Զաֆիրը հիշում է հենց նրան՝ «Հայաստանի և Վրաստանի թագավոր» տիտղոսով[113]: Իսկ Աշուտ իբն Ջարջուրը (Գրիգորի որդի Աշոտը) և Իբն Թոռնիկը (Թոռնիկի որդին), փաստորեն, համապատասխանաբար Աղձնիքի հյուսիսային գավառների (Սանասունք, Սալնո ձոր, Երխեթք, Գզեղխ և այլն) և Տարոնի իշխաններն էին[114], որոնցից առաջինը զրկվեց Սասունից, իսկ երկրորդը՝ Մուշ քաղաքից:

---

[112] Տե՛ս **Վ. Վարդանյան**, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը 908-1021 թթ., էջ 114:

[113] Մ. Կանարը կարծում է, որ այդտեղ խոսքը Աբաս թագավորի մասին է (տե՛ս **M. Canard**, Les H'amdanides et l'Arménie, pp. 89-90), բայց իրականում «Հայոց և Վրաց թագավոր» տիտղոսը կրում էր Գագիկ Արծրունին: Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 153:

[114] Իբն Թոռնիկի վերաբերյալ արտահայտվել են տարբեր տեսակետներ: Ն. Ադոնցը, դժվարանալով ճշգրտել Իբն Թոռնիկի ով լինելը, սկզբում առաջարկում է նրան նույնացնել Գրիգորի որդի Բագրատի (Կոստանդին Ծիրանածնի հիշատակած Պանգրատը) հետ, սակայն, ի վերջո, բավարարվում է արձանագրելով, որ եղել է Իբն Թոռնիկ անունով իշխան: Տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ե, էջ 291: Ըստ Գ. Գրիգորյանի, որը հետևում է Յո. Մարկվարտին (տե՛ս **J. Markwart**, Südarmenien und die Tigrissquellen, էջ 463), Իբն Թոռնիկը նույնանում է Գրիգորի որդի Աշոտի հետ (տե՛ս **Գ. Գրիգորյան**, Տարոնի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը IX-X դարերում, Եր., 1983, էջ 144-145), թեև այդպես էլ չի բացատրում, թե ինչպես կարող էր Գրիգորի որդին [արաբ. Իբն Ջարջուր (Գրիգոր)] դառնալ Թոռնիկի որդի՝ Իբն Թոռնիկ:

Մեր հետազոտություններից մեկում ցույց ենք տվել, որ X դ. սկզբին Տարոնի ընդարձակ իշխանությունը բաժանված էր երկու մասի՝ հարավային (ընդգրկում էր Տուրուբերանի գավառներից Տարոնի հարավային մասը, Ասպակունյաց ձորն ու Խույթը, Աղձնիքի գավառներից՝ Սանասունքը, Սալնո ձո-

Տեսնում ենք, որ Հայաստանի հարավարևմտյան և արևմտյան շրջաններին առնչվող այդ հույժ կարևոր իրադարձություններին Աբաս թագավորը չի մասնակցում: Խնդիրն այն է, որ Սասունի կորուստը հյուծեց Տարոնի իշխանությունը՝ դուռ բանալով Բյուզանդիայի կողմից այն կլանելու համար, իսկ Գագիկ Արծրունու, Տարոնի իշխան Աշոտի, այլ իշխանների և արաբ ամիրների հպատակվելը Դիար Բաքրի տիրակալին հղի էր մեծ վտանգով Հայոց թագավորության ապագայի տեսանկյունից: Աբասի չեզոքության պատճառը, թերևս, այն էր, որ Սայֆ ալ-Դաուլայի արշավանքների թատերաբեմից Բագրատունյաց տիրույթները բավականին հեռու էին գտնվում, իսկ հայոց թագավորն էլ դեռ այն վիճակում չէր, որ փորձեր միջամտել այդ ժամանակների Մերձավոր Արևելքի ամենանշանավոր զորավարներից մեկի՝ Սայֆ ալ-Դաուլայի գործերին: Վերջինս **940 թ. ներխուժումը Հայաստան ծանր հարված հասցրեց Գագիկ Արծրունու հզորությանը, որը ստիպված եղավ Դիար Բաքրի տիրակալին զիջել ամրոցներ և դրանց շրջակա տարածքները: Ուստի չնայած Աբասի՝ նշված դեպքերին չմասնակցելուն՝ վերջիններս, ըստ էու-**

ը, Երխեթքն ու Գզեղիքը, Ծոփքի գավառներից՝ Բալահովիտն ու Պաղնատունը ամբողջությամբ և Հաշտյանքի հարավային մասը) և հյուսիսային (ընդգրկում էր Տուրուբերանի գավառներից Տարոնի հյուսիսային, Հարքի արևմտյան և Արշամունիքի հարավային հատվածները, Բարձր Հայքի գավառներից՝ Մուզուրի արևելյան, Եկեղյացի արևելյան ու հարավային հատվածներն ու Մանանաղին, ինչպես նաև Ծոփքի գավառներից՝ Խորձյանն ու Հաշտյանքի հյուսիսային հատվածը): Առաջինում իշխում էր Կոստանդին Ծիրանածնի աշխատությունից հայտնի Գրիգոր-Կրիկորիկը (տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 4-5), իսկ երկրորդում՝ նրա եղբայր Ապոգանեմը, որի որդին Թոռնիկն էր: Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Տարոնի Բագրատունիների իշխանությունը IX դարում և X դ. սկզբին, «Բանբեր Երևանի համալսարանի», 2009, N 1, էջ 82-85: Իրականում հենց այս Թոռնիկի որդին է, որ հիշատակվում է Իբն Զաֆիրի կողմից: Ինչ վերաբերում է Աշոտ իբն Գրիգորին, ապա նա էլ Գրիգոր-Կրիկորիկի որդին էր:

թյան, հօգուտ նրա էին, քանի որ թուլացնում էին երկրորդ հայոց թագավորի դիրքերը:

Պետք է հավելել նաև, որ 930-ական թթ. վերջին գրեթե վերացել էր Հայոց թագավորության նկատմամբ Ատրպատականից բխող վտանգը: Ատրպատականի 938-941 թթ. տիրակալ Դայսամը, զբաղված սեփական խնդիրներով, ինչպես նաև Գագիկ Արծրունու հետ ունեցած բարեկամական հարաբերությունների պատճառով[115] Հայոց թագավորության անդորրը չէր խռովում:

Այս շրջանում, օգտագործելով նշված բարենպաստ պայմանները, Աբասն աստիճանաբար հզորանում է և նույնիսկ սկսում միջամտել Այսրկովկասում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին: Քաղկեդոնականների միջավայրում նրա գլխավոր գործընկերը նրա աներ վրաց իշխան Գուրգենն էր: Աբասի օգնությամբ մինչև 941 թ. Գուրգենը լայն գործունեություն էր իրականացնում Այսրկովկասում՝ հաջողությամբ հետ մղելով Աբխազաց թագավորության գրոհները, սահմանափակելով Կղարջքի տերերի գործունեությունը և քաղկեդոնականությունը տարածելով Աղվանից թագավորությունում[116]: Աբխազաց թագավորը Գուրգենի դեմ պայքարելու համար սկսում է հովանավորել Արտանուջի տեր Աշոտ Կիսկաս իշխանին (մահ՝ 939 թ.), որին ամուսնացնում է իր քրոջ հետ: Հակամարտությունն ավարտվեց մոտ 935 թ. Գուրգենի հաղթանակով, որը գրավեց Արտանուջը, բայց հարկ համարեց Աշոտին զիջել Աճարայի մի մասը

---

[115] Տե՛ս **Miskawayh**, 5, էջ 165-166:

[116] Մանրամասնորեն տե՛ս **Ա. Եղիազարյան**, Բագրատունիների վրացական թագավորության ձևավորման գործընթացը: Մաս երկրորդ. Համավրացական թագավորության ինքնուրույն պատմական հեռանկարի ուրվագծերը, «ՎԷմ», 2013, N 2, էջ 50-56:

և Ղվել բերդը[117]: Հետագայում Գուրգենը ետ խլեց զիջածը, իսկ Աշոտ Կիսկասը, զրկվելով տիրույթներից, հեռացավ Աբխազաց թագավորություն[118]:

Դատելով այն իրողությունից, որ Աբաս թագավորն օգնում էր Գուրգենին, իսկ վերջինս պարտության մատնեց Արտանուջի տեր Աշոտ Կիսկաս իշխանին, զգալիորեն փոխվել էր ուժերի հարաբերակցությունն Այսրկովկասում: Հայոց թագավորի աջակցությունը վայելող Գուրգենից եկող վտանգի դեմ միավորվել էին աբխազաց թագավորն ու Արտանուջի իշխանը, որն իր կնիքը թողեց նաև Գուրգենի մահից (941) հետո տեղի ունեցող դեպքերի վրա: Ուստի պատահական չէ, որ շուտով Աբաս թագավորին հարկ եղավ պատերազմելու Աբխազաց թագավորության և Կղարջքի միացյալ ուժերի դեմ:

Փաստերը ցույց են տալիս, որ արդեն 940-ական թթ. սկզբի դրությամբ Աբասը զգալիորեն ամրապնդել էր իր դիրքերը: Անանիա Մոկացի կաթողիկոսի թղթերում պահպանվել են հույժ կարևոր տեղեկություններ, որոնք ցույց են տալիս, որ **այդ ժամանակ Աբասը կարողացել էր առնվազն հավասար կարգավիճակ ձեռք բերել Գագիկ Արծրունու հետ**: Կաթողիկոսը գրում է, որ ինքը դիմել է «ի շրջանիս Հայոց ՅՂ (941-942) բաղադրութեանն՝ **յաւուրս արի եւ քաջատոհմիկ հզաւրացն երկոցունց ինքնակայացն Հայոց թագաւորացն քրիստոսապսակեալ տեառնն Գագկայ Արծրունոյ Հայոց թագաւորի եւ տեառնն Աբասայ Բագրատունոյ խաղաղասիրի եւ հեզահամբոյր հզաւրի եւ մեծի Հայոց արքայի**»[119]: Մինչ այդ նրա համար առաջին տեղում Գագիկ Արծրունին էր: Հայոց Արևելից կողմերի եկեղեցա-

---

[117] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 19, էջ 237, ծանոթ. 7: Տե՛ս նաև **C. Toumanoff**, The Bagratids of Iberia from the eight to the eleventh Century, “Le Museon", LXXIV, Idem. Studies, Louvain, 1961, p. 26:

[118] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 19:

[119] **Անանիա Մոկացի**, էջ 256:

կան խնդիրներից մեկի առիթով Անանիա Մոկացին գրում է, որ «կամաւք հաւանութեամբ եւ զեղեցկասադիր խորհրդովք մեծին եւ բարեացապարտն Գագկայ Հայոց թագաւորի, նախ գրէաք հրովարտակ պատճէն ի յաշխարհին Աղուանից»[120]: Այնուհետև Գագիկի մահը ներկայացնելիս նա գրում է, որ «եբարձ զպսակն աւճոյ մերում, զփառսն եկեղեցւոյ եւ զպարծանս քրիստոնէից, զարի եւ զհզաւր, զծովահանճար իմաստիւք զտէր Գագիկ Հայոց թագաւոր»[121]: Հետագայում, թեև կաթողիկոսն այնպես է ներկայացնում, թե Գագիկ Արծրունուն հաջորդած Գրիգոր Դերենիկն ամեն ինչով նման էր հորը՝ թե՛ հանճարով և թե՛ հզորությամբ, բայց նրա համար առաջին պլանում արդեն հայտնվում է Աբաս Բագրատունին, որին էլ նա դիմում է քաղկեդոնականությունն արմատախիլ անելու խնդրանքով[122]: Մի փոքր անց Անանիա Մոկացին Գրիգոր Դերենիկին ընդհանրապես որպես «**Վասպուրականի թագավոր**» է կոչում՝ նրա կողքին հիշատակելով «**Հայոց թագավոր**» Աբասին[123]:

Այսպիսով՝ արդեն 940-ական թթ. սկզբին Աբասին հաջողվեց ոչ միայն բարձրացնել սեփական հեղինակությունը, այլև կայունացնել երկրի ներքին վիճակը և դերակատարություն ձեռք բերել հարևան երկրների քաղաքական ճակատագրում: Դրան նպաստեց նաև այն, որ հավասարակշիռ հարաբերություններ հաստատվեցին Գագիկ Արծրունու հետ, որի դարաշրջանը մոտենում էր ավարտին:

---

[120] Նույն տեղում, էջ 257:
[121] Նույն տեղում, էջ 258:
[122] Տե՛ս նույն տեղում, էջ 259:
[123] Տե՛ս նույն տեղում, էջ 260:

1.5. Բագրատունյաց թագավորությունն Աբասի գահակալության առաջին փուլում (929-942 թթ.)

Աբաս թագավորի օրոք Բագրատունիների թագավորության սահմանների վերաբերյալ պահպանվել է սահմանափակ նյութ, որի պայմաններում արքունի տիրույթների ընդգրկած տարածքները և Հայոց թագավորության սահմաններն ընդհանրապես հստակեցնելը խիստ դժվարանում է:

Պետք է ի սկզբանե նշել, որ նշված տիրույթների սահմանների ու ընդգրկման առումով Աբասի գահակալության առաջին շրջանը բաժանվում է երկու ենթափուլի՝ մինչև Աշոտ Շապուհյանի մահը և դրանից հետո, երբ նրա տիրույթներն Արշարունիքում և Ճակատքում անցան Աբասին: Փաստորեն, 934 թ. տեղի ունեցած այդ իրադարձությամբ, ի վերջո, գրեթե լիովին վերականգնվեց Բագրատունյաց տիրույթների ամբողջականությունը, որ խաթարվել էր Սմբատ Ա-ի սպանությունից հետո:

Աղբյուրներում պահպանված համապատասխան նյութը վերաբերում է Աբասի գահակալության առաջին շրջանի հենց երկրորդ ենթափուլին (935-942): Ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ «...**Բագրատունիքն իշխէին միայն Շիրակայ և Այրարատու մինչ ի Գեղամ** (իմա՛ Գեղամա ծով – Ա. Ե.) **և մինչ ի յՈւխտիսն** (իմա՛ Ուղթիքը կամ Ուղթիսը Տայքում – Ա. Ե.) **և մինչ ի Կարին և մինչ ի Վասպուրականի սահմանն և մինչ ի Զորոյ գետն և մինչ ի Գարդման. և Սիւնիք կտրեալ էր ի նոցանէ**»[124]: Այդ տեղեկության ժամանակաշրջանային ընդգրկման անորոշությունը հաղթահարվում է հայկական անանուն ժամանակագրություններից մեկում նույն այդ հիշատակության հստակ թվագրմամբ: Ըստ դրա՝ հիշատակությունը վերաբերում է Սմբատ Ա-ի մահից հետո ընկած ժամանակաշրջանին՝ մինչև Բագ-

[124] **Ստեփանոս Օրբելյան**, էջ 300:

բատունիների նոր թագավորությունների ի հայտ գալը[125], այսինքն՝ մասնավորապես Աբասի գահակալությանը:

Փաստորեն, այս շրջանում Աբասի տիրապետությունն ընդգրկում էր հիմնականում Մեծ Հայքի Այրարատ նահանգի տարածքը՝ բացառությամբ Գագիկ Արծրունուն պատկանող Ծաղկոտն, Կոգովիտ և Մասյացոտն գավառների, ինչպես նաև Տայքի (արևելյան հատվածը՝ մինչև Ուղթիք-Օլթի), Գուգարքի (Արտահանից մինչև Աղստև գետի հովիտը՝ բացառությամբ որոշ հյուսիսային հատվածների), Ուտիքի (հյուսիսարևմտյան հատվածը՝ Աղստևի հովտից մինչև Գարդման) և Սյունիքի (հյուսիսային հատվածը՝ Գեղարքունիքը և Սոթքը[126]) որոշ գավառներ, այսինքն՝ գլխավորապես Բագրատունիների տոհմական և արքունի տիրույթները և հարակից երկրամասերը՝ տարածվելով մինչև Կարնո քաղաք և Ուղթիք արևմուտքում, Գարդման և Գեղարքունյաց ծով՝ արևելքում, Ձորագետ (Կուր գետին միախառնվելու տեղում)՝ հյուսիսում և Վասպուրականի թագավորություն՝ հարավում[127]:

Քննությունը ցույց է տալիս, որ Աբասը տիրում էր նաև Տուրուբերանի մի շարք գավառների: Հայտնի է, որ դեռևս Սմբատ Ա թագավորի օրոք Տուրուբերանում ընդարձակ տարածքների տիրող կայսիկներից հարքունիս էին գրավվել Մարդաղի, Կորո ձոր (Կորի), Հարք և Աղիովիտ գավառները, Ապահունիքի մեծ մասը, ինչպես

---

[125] Տե՛ս «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հ. I, կազմեց Վ. Հակոբյան, Եր., 1951, էջ 384:

[126] Տե՛ս **Թ. Հակոբյան**, Սյունիքի թագավորությունը (պատմա-աշխարհագրական առումով), Եր., 1966, էջ 60-61:

[127] Բագրատունիների տիրույթների մասին մանրամասնորեն տե՛ս **Ա. Եղիազարյան**, Բագրատունիների տիրույթների ձևավորումը և արքունի տիրույթներն Աշոտ Ա և Սմբատ Ա թագավորների օրոք, «Տարեգիրք» ԵՊՀ պատմության ֆակուլտետի պատմագիտական հանդես, Բ, Եր., 2010, էջ 87-105:

նաև Արճեշ, Արծկե և Խլաթ քաղաքները[128]: Խնդրո առարկա շրջանում հայկական սկզբնաղբյուրներում տեղեկությունների սղության պատճառով դժվար է հստակություն մտցնել այդ գավառների հետագա պատկանելիության հարցում: Ըստ Կոստանդին Ծիրանածնի՝ Ապահունիք, Կորո ձոր և Հարք գավառները, ինչպես նաև Խլաթ, Արճեշ և Բերկրի քաղաքները գտնվում էին Սմբատ Ա-ի «գերիշխանության և տիրապետության ներքո», բայց նրա սպանությունից հետո ինքնուրույնություն ձեռք բերեցին[129]: Դատելով 939-940 թթ. վերաբերող բերյալ նյութից՝ այդ գավառները և քաղաքները շարունակում էին գտնվել ինքնուրույն վիճակում, թեև Կոստանդին Ծիրանածինը գրում է, թե Հովհաննես Կուրկուասի կողմից այդ գավառներն ասպատակելուց ու ավերելուց հետո նրանց տերերը ստիպված եղան ենթարկվել կայսերը (Ռոմանոս Ա-ին) և հարկ վճարել նրան[130]: Ամենայն հավանականությամբ, խոսքը Հովհաննես Կուրկուասի 931 թ. արշավանքի մասին է[131], երբ Գագիկ Արծրունու հորդորով բյուզանդական բանակը ներխուժեց Հայաստան, ավերեց Բերկրին ու Խլաթը, սպանեց ու գերեվարեց հազարավոր արաբների[132]: Հայտնի է, որ այդ ուղղությամբ Բագրատունյաց տիրույթների մաս էր կազմում Բագրևանդը, որտեղ տեղակայված արաբական գնդերը ոչնչացրել

---

[128] Տե՛ս «Պատմութիւն Անանուն Զրուցագրի» (կարծեցեալ Շապուհ Բագրատունի), թարգմանությունը գրաբարից, առաջաբանն ու ծանոթագրությունները Մ. Հ. Դարբինյան-Մելիքյանի, Եր., 1971, էջ 159-161: Հմմտ. **Կոստանդին Ծիրանածին**, էջ 10-11: Տե՛ս նաև **Ա. Եղիազարյան**, Հայ Բագրատունիների տերությունը (885-908 թթ.) (պատմաաշխարհագրական ուսումնասիրություն), Եր., 2011, էջ 107-111:

[129] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 10-11, 13:

[130] Տե՛ս նույն տեղում, էջ 10-11:

[131] Տե՛ս **Է. Դանիելյան**, Մանազկերտը բյուզանդա-արաբական հակամարտության ոլորտում (IX դարի երկրորդ կես - X դար), «Պատմա-բանասիրական հանդես», 1977, N 1, էջ 161-172:

[132] Տե՛ս **Ibn al-Athīr**, 7, էջ 69-70:

էր Աշոտ Երկաթը[133]: Հայտնի է նաև Մարդաղի գավառի ճակատագիրը, որը նույնանում է Արիստակես Լաստիվերցու հիշատակած Աղորիին, որտեղ, ըստ պատմիչի, գտնվում էր Հավճիչ ամրոցը (Մուրց գետի միջին հոսանքի ավազանում)[134]: Վերևում տեսանք, որ Սայֆ ալ-Դաուլայի 939 թ. արշավանքի ժամանակ Հավճիչը գտնվում էր բյուզանդացիների ձեռքում, որոնք այն ավերեցին ու նահանջեցին: Դա ցույց է տալիս, որ Մարդաղին աստիճանաբար անցնում էր բյուզանդական տիրապետության ոլորտը: Ինչ վերաբերում է Մարդաղիի, Ապահունիքի, Հարքի և Բագրևանդի միջև ընկած Տուրուբերանի հյուսիսարևելյան գավառներին՝ Դասնավորքին, Տվարածատափին, Դալառին և Վարաժնունիքին, ապա դրանք, անկասկած, մաս էին կազմում Բագրատունյաց տիրույթների, քանի որ Կոստանդին Ծիրանածնի կողմից հստակորեն ներկայացված, արաբական ամիրայությունների սահմաններում ընդգրկված գավառների մեջ հիշատակված չեն: Դրանք հետագայում, ինչպես կտեսնենք, նաև Բագրատունյաց տիրույթների արևմտյան գավառների տարածքում ստեղծված Կարսի թագավորության մեջ չէին մտնում, ուստի կարելի է եզրակացնել, որ շարունակում էին մաս կազմել Բագրատունյաց կենտրոնական իշխանության տիրույթների: Թեև Մարդաղիի օրինակով պարզ է, որ դրանք ևս արդեն Բյուզանդիայի հետաքրքրությունների շրջանակում էին:

Բագրատունյաց տիրույթների սահմանները հյուսիսում ընդգրկում էին Տփղիսից ոչ հեռու գտնվող Շամշուլդե ամրոցը: Վերևում տեսանք, որ Աշոտ Երկաթն ու Աբասը կարողացան պարտության մատնել նրա ապստամբ տերերին, որոնցից միայն Վասակ Գնթունուն հաջողվեց մի խումբ զինվորներով փրկվել ու ապաստանել

---

[133] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 508:

[134] «Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ», աշխատասիրությամբ՝ Կ. Յուզբաշյանի, Եր., 1963, էջ 106:

Շամշուլդեում: Աշոտ Երկաթն ու Աբասը նրան չհետապնդեցին[135]: Վասակ Գնթունու հաջորդ քայլը եղավ Շամշուլդեն Գուրգենին հանձնելը և նրա տիրույթներում գտնվող Կրուստ ամրոցը տեղափոխվելը[136]: Սակայն Շամշուլդե մեկնած Գուրգենին չհաջողվեց տիրանալ ամրոցին, քանի որ պահապանները հրաժարվեցին հանձնվել և հրավիրեցին Աշոտ Երկաթին: Վերջինս բանակով Շամշուլդե հասավ այն ժամանակ, երբ Գուրգենի զորքն արդեն կարողացել էր ներխուժել քաղաք: Աշոտ Երկաթին հայտնեցին, որ ամրոցի պահապանները հանուն նրա են կռվում Գուրգենի դեմ, և Աշոտ Երկաթը պահանջեց իր առջև բացել ամրոցի դարպասները: Այնուհետև Աշոտ Երկաթի բանակը գերի վերցրեց Գուրգենի զորքը, և բոլոր զինվորների քթերը և ականջները նրա հրամանով կտրեցին, իսկ հետո կուրացրին: «**Եւ այնուհետեւ ապա հիւսիսական ազգքն այնոքիկ ընդ ձեռամբ նորա** (իմա՛ Աշոտ Երկաթի – Ա. Ե.) **նուաճեալ հնազանդէին ի ծառայութիւն, եւ ըստ աջողակ այցելութեանն Աստուծոյ երթալով երթայր եւ զաւրանայր**»[137]: Այս իրադարձությունը, ամենայն հավանականությամբ, տեղի է ունեցել 920 թ.: Դրանից հետո ստեղծված իրավիճակը պահպանվեց նաև Աբասի օրոք:

Աբասի տիրույթները տարածվում էին մինչև Կուր գետը Ջորագետի և Աղստևի շրջանում: Նման կարծիքը հիմնավորվում է իրողությամբ, որ Բերի դեմ արշավելիս Աբասի զորքը շարժվում է դեպի հյուսիս ու բանակում Կուր գետի ափին:

Այս փուլում Բագրատունիների տիրապետության սահմանները ճշգրտելու համար ունենք այլ կարևոր կռվան ևս՝ այդ սահմաններն Աբասի գահակալությունից հետո՝ հաշվի առնելով Բագրատունիների՝ նաև դրանցում ստեղծված նոր թագավորությունների (Լոռու և

---

[135] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 539-540:
[136] Տե՛ս նույն տեղում, էջ 552:
[137] Նույն տեղում, էջ 553:

Կարսի) ընդգրկած տարածքները: Վերջիններիս սահմաններում ընդգրկված էին Բագրատունիների՝ Այրարատի և Գուգարքի տիրույթներից ընդարձակ երկրամասեր, որոնք նախկինում մաս էին կազմում, անկասկած, Աբասի տիրույթների և նրանից էլ փոխանցվել էին Աշոտ Գ-ին: Կարսի թագավորության մեջ էին մտնում Այրարատի Վանանդ, Աբեղյանք, Հավնունիք, Գաբեղյանք, Արշարունիք գավառները և Բասեն գավառի արևելյան հատվածը[138]: Լոռու թագավորության սահմանների մասին կարևոր տեղեկություններ է հաղորդում Սանահինի վանքի «Հիշատակարանը» («Քէօթուկ»), ըստ որի՝ հայոց 428 թվականին (979-980) Սմբատ Բ թագավորը (977-989) հատուկ հրովարտակով տվեց «**վիճակ եւ երկիրս զայս Սանահնիս զամենայն երկիրն Տաշրաց՝ զՎերին եւ զՆերքին, մինչ ի լեառն Բազում, յայսկոյս եւ յա[յ]նկոյս, մինչեւ ի սահմանս Գուգարաց աշխարհին եւմինչ ի սահմանս Տփխ[ե]աց եւ Վրաց, եւ ի սահմանս Նիգ գաւառի եւ մինչեւ ի սահմանս Կայենոյ, եւ զսահմանս Ծաղկոցաց, մինչ ի սահմանս Տան Շիրակայ**»[139]: «Տաշրաց երկրի», որը նույնանում է 981 թ. հիմնադրված Լոռու թագավորությանը[140], սահմաններն այնքան հստակորեն են ներկայացված, որ բացահայտում են այդ երկրում ընդգրկված՝ Այրարատի ծայր հյուսիսարևելյան հատվածը (Նիգ գավառի հյուսիսային հատվածը՝ «հայսկույս Բազումը» և ամե-

---

[138] Տե՛ս **С. Еремян,** Присоединение северо-западных областей Армении к Византии в XI веке, էջ 4; **Ռ. Մաթևոսյան**, Վանանդը Բագրատունյաց ոստանի մարզ (X դ. առաջին կես), «Լրաբեր հասարակական գիտությունների», 1979, N 4, էջ 79-84:

[139] «Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի քէօթուկը)», էջ 67-68:

[140] Տե՛ս «Մխիթարայ Այրիւանեցւոյ պատմութիւն Հայոց», ի լոյս ընծայեաց Մ. Էմին, Մոսկվա, 1860, էջ 56; «Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն ժամանակագրական», ի լոյս ընծայեաց Ք. Պ., Ս. Պետերբուրգ, 1867, էջ 71: Թվականի ճշգրտումը տե՛ս **Ա. Շահնազարյան**, Տաշիր-Զորագետի Կյուրիկյան թագավորության առաջացումն ու հզորացումը, «Պատմա-բանասիրական հանդես», 2009, N 2-3, էջ 224-233:

նայն հավանականությամբ՝ նաև Վարաժնունիք գավառի հյուսիսային մասը՝ մինչև Ծաղկոցաց-Ծաղկունյաց լեռները) և Գուգարքի ողջ արևելյան հատվածը՝ Կանգարքից մինչև Շամշուլդե ամրոցը հյուսիսում և Կայան բերդը՝ համանուն գավառակով՝ արևելքում, որը տարածվում էր Աղստև գետի հովտում[141]: Ասվածին համահունչ է Վարդան վարդապետի այն հաղորդումը, որ Սմբատ Բ-ի եղբայր Գուրգենը «**ժառանգէ զՏաշիր Սևորդւովքն Զորոյգետին. և զԿայեն և զԿայծոն, զԽորխոռունիք՝ որ ի Խոռայ շինեցաւ, որ է Խոշոռնի և Խոռակերտ, և զԲազունիք՝ որ է Բազկերտ ի գաւառն Տաշրայ**»[142]:

Հայաստանի՝ այդ շրջանի վարչաքաղաքական իրավիճակին առնչվող կարևոր տեղեկություններ է պահպանել Կոստանդին Ծիրանածինը, որը, խոսելով այն մասին, որ կայսրությունը նամակներ էր ուղարկում Հայաստանի մի շարք իշխանների, տեղեկացնում է, որ այդ ժամանակ Գագիկ Արծրունին «**իշխանաց իշխանի պատիվն է ստացել**»[143], այսինքն՝ նշված տեղեկությունը վերաբերում է 929-943 թթ. պատմաշրջանի իրողություններին, երբ Աշոտ Երկաթի մահից հետո Գագիկ Արծրունին գերագահ դիրքի էր հասել: Հայաստանում հիշատակված են մի շարք «իշխանություններ»՝ Մեծ Հայքի (կենտրոնական իշխանություն), Վասպուրականի, Կոգովիտի, Տարոնի, Մոկքի, Անձևացյաց, Սյունիքի, Վայոց ձորի, Խաչենի և Սևորդյաց[144]:

---

[141] Տե՛ս **Ռ. Մաթևոսյան**, Կայան բերդի և գավառի տեղադրությունը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1972, N 2, էջ 53-62:

[142] **Վարդան վարդապետ**, էջ 90: Անանուն ժամանակագրություններից մեկում Լոռու թագավորության սահմանների մասին ասված է. «Գուրգէն (Լոռու առաջին թագավորը – Ա. Ե.) տիրէ Գոգարացւոց կողմանս սկսեալ ի Գագայ, Խառայ մինչև ի դուռն Տփխեաց»: «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հ. II, էջ 501: Ակնհայտ է, որ սույն՝ խիստ ընդհանրական նկարագրությունը համապատասխանում է Սանահնի հիշատակարանի հաղորդած տվյալներին:

[143] **Կոստանդին Ծիրանածին**, էջ 151:

[144] Տե՛ս նույն տեղում:

Եթե այս տեղեկության լույսով փորձենք քարտեզագրել Աբասի տիրույթների սահմանները (դրանցից բացառելով առանձին հիշատակվող գավառների տարածքները), ապա դրանք գրեթե ամբողջությամբ կհամապատասխանեն Ստեփանոս Օրբելյանի նշած սահմաններին: Իսկ որ Կոստանդին Ծիրանածնի տեղեկությունը մեծ մասամբ համապատասխանում է իրականությանը, հիմնավորվում է նրանով, որ այդ շրջանում Խաչենի, Փառիսոսի, Գոռոզվա, բուն Սյունյաց և Կապանի (Բաղաց) իշխանությունների մասին հիշատակում է նաև հայոց կաթողիկոս Անանիա Մոկացին[145]:

Ստացվում է, որ գահակալության առաջին փուլում Աբասին հաջողվեց վերամիավորել Բագրատունյաց երբեմնի ընդարձակ տիրույթների մեծագույն մասը: Ավատատիրական դարաշրջանի տրամաբանությամբ դա հանգեցրեց Աբասի դերի կտրուկ աճին ոչ միայն Հայաստանում, այլև հարևան երկրներում, քանի որ տարածաշրջանում այլ մեկը չէր տիրապետում մարդկային ու տնտեսական ներուժով հարուստ նման ընդարձակ ավատական տիրույթների:

Փաստորեն, կարելի է արձանագրել շատ կարևոր մի գործընթաց: Սեփական տիրույթների ընդարձակմանը զուգընթաց աճել են Աբասի թե՛ հեղինակությունը և թե՛ հնարավորությունները, որոնք, ի վերջո, բերել են Բագրատունի գահակալի՝ Հայաստանում գերագահ դիրքի հասնելուն նրա գահակալության արդեն երկրորդ փուլում:

Հայոց թագավոր Աբասի գահակալության առաջին փուլում (929-942), բացի Աբասից, Հայաստանում գործունեություն էին ծավալում երկու այլ հայոց թագավորներ ևս՝ Գագիկ Արծրունին և Աշոտ Շապուհյան Բագրատունին, որոնց առկայությամբ Աբասի դերակատարությունը Հայաստանում առաջնային չէր: Երբ 934 թ. Աշոտ Շապուհյանը վախճանվեց, Աբասը տիրացավ Այրարատում նրա տի-

[145] Տե՛ս **Անանիա Մոկացի**, էջ 258, 261, 267, 269-273:

ռույթներին, որից հետո նրա հնարավորությունները մեծապես աճեցին:

940-ական թթ. սկիզբն Աբասի համար խիստ խոստումնալից էր: Բացի նրանից, որ կտրուկ փոփոխություններ տեղի ունեցան Հայաստանի հարևան երկրներում, որով նրանց տիրակալների ուշադրությունը շեղվեց Հայոց թագավորությունից, ծանր հարված ստացավ երկրորդ հայոց թագավորը՝ Գագիկ Արծրունին: Աբասի առջև բացվեցին լայն հեռանկարներ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՏԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄԸ

2.1. Բագրատունյաց թագավորության հզորացումն Աբաս Բագրատունու գահակալության երկրորդ շրջանում (943-953 թթ.)

Գահակալության առաջին շրջափուլում (929-942 թթ.) Աբաս Բագրատունին կարողացավ արձանագրել մի շարք էական հաջողություններ, որոնք նրան հնարավորություն տվեցին հավակնելու գերակա կարգավիճակի ողջ Հայաստանում:

Ի սկզբանե հանդես գալով որպես երրորդ հայոց թագավոր՝ Աբասն աստիճանաբար կարողացավ իր մականի ներքո միավորել Բագրատունյաց գրեթե բոլոր տիրույթները: Այդպիսով՝ նրան հաջողվեց ներուժով հավասարվել, իսկ այնուհետև՝ նույնիսկ գերազանցել Հայաստանում գերակայություն ունեցող Վասպուրականի տիրակալ Գագիկ Արծրունուն:

Աբասի հաջողություններին նպաստում էին ներքին ու արտաքին իրողությունները: Մոտ 934 թ. առանց ժառանգ թողնելու վախճանվեց հայոց թագավորներից մեկը՝ Աշոտ Շապուհյանը, որի տիրույթներին տեր կանգնեց Աբասը՝ բազմապատկելով սեփական հնարավորությունները: Մյուս կողմից, այդ պատմափուլում Հայաստանին սպառնացող արտաքին մարտահրավերներին դիմակայում էր հիմնականում Գագիկ Արծրունին, որը զգալիորեն ջլատում էր Արծրունի գահակալի ուժերը և հնարավորություն տալիս Աբասին՝ անկաշկանդ ամրապնդելու իր դիրքերը:

940-ական թթ. սկիզբը խիստ խոստումնալից էր Աբաս թագավորի համար: Հայոց թագավորության ներսում և շրջակա երկրներում տեղի էին ունենում գործընթացներ, որոնց պայմաններում Աբասի դիրքերը զգալիորեն ամրապնդվում էին:

Հայաստանում տեղի ունեցած կարևորագույն փոփոխությունն այն էր, որ 943 թ. վախճանվեց երկրորդ հայոց թագավոր Գագիկ Արծրունին[146], և այդ պահից սկսած Աբասը մնաց միակ հայոց թագավորը: Գագիկի որդի Գրիգոր Դերենիկը[147] ժամանակակից կաթողիկոս Անանիա Մոկացու կողմից հիշատակվում է որպես զուտ միայն «**Վասպուրականի թագավոր**», մինչդեռ Աբասը կոչված է «**Հայոց թագավոր**»[148]: Դա ցույց է տալիս, որ Գագիկ Արծրունու մահից

---

[146] Տե՛ս **Ասողիկ**, էջ 826:

[147] Կարծիք է արտահայտվել, թե իբր Գագիկ Արծրունու որդի Դերենիկը (Վասպուրականի թագավոր՝ 943-959 թթ.) ունեցել է Աշոտ կրկնանունը: Տե՛ս **Մ. Չամչյանց**, նշվ. աշխ., էջ 1041; **Մ. Օրմանյան**, նշվ. աշխ., § 747; **Վ. Վարդանյան**, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը 908-1021 թթ., էջ 167, 174-175: Այն հիմնված է Ասողիկի ակնհայտորեն թերի այն հիշատակության վրա, թե իբր Դերենիկին հաջորդել է Աբուսահլի որդի Աշոտը: Տե՛ս **Ասողիկ**, էջ 826: Ըստ Անանիա Մոկացու՝ Դերենիկին փոխարինել է նրա եղբայր Համազասպը (տե՛ս **Անանիա Մոկացի**, էջ 269), իսկ ըստ Վարդան վարդապետի՝ նրա եղբայր Աբուսահլը: Տե՛ս **Վարդան վարդապետ**, էջ 92: Պարզ է, որ այստեղ գործ ունենք կրկնանվան հետ, և խոսքը Վասպուրականի թագավոր Համազասպ Աբուսահլի (959-969) մասին է: Բայց եթե նա է Դերենիկի փոխարինողը, ապա ո՞վ է Ասողիկի հիշատակած Աբուսահլի որդի Աշոտը: Վերոհիշյալ ուսումնասիրողները (Մ. Չամչյանց, Մ. Օրմանյան, Վ. Վարդանյան) խնդիրը լուծել են՝ Աշոտ անունը վերագրելով Դերենիկին որպես երկրորդ անուն: Սակայն Դերենիկի մասին հիշատակող սկզբնաղբյուրների տեղեկությունները բոլորովին էլ դրա օգտին չեն խոսում: Գագիկ Արծրունու և նրա որդի Դերենիկի ժամանակակից Անանիա Մոկացին Դերենիկին կոչում է Գրիգոր Դերենիկ: Տե՛ս **Անանիա Մոկացի**, էջ 258, 260, 269: Ուստի հարկ է կատարել համապատասխան ճշգրտում. Վասպուրականի թագավորի անունը եղել է Գրիգոր Դերենիկ: Ինչ վերաբերում է Աբուսահլի որդի Աշոտին, ապա նա Համազասպ Աբուսահլի որդին է, որ Վասպուրականում թագավորել է 22 տարի (տե՛ս **Ասողիկ**, էջ 826)՝ 969-990 թթ.: Փաստորեն, Ասողիկի վերոհիշյալ տեղեկությունից դուրս է մնացել Համազասպ Աբուսահլի՝ Գրիգոր Դերենիկին փոխարինելու հատվածը:

[148] **Անանիա Մոկացի**, էջ 260:

հետո Աբասին հաջողվեց իր տոհմին վերադարձնել գերագահությունը Հայաստանում:

940-ական թթ. սկզբին կարևոր շրջադարձեր տեղի ունեցան Հայաստանի շրջակա երկրներում: Հյուսիսային Միջագետքի և Դիար Բաքրի տիրակալ Համդանյանները զբաղված էին Հյուսիսային Ասորիքի նվաճումով և Բյուզանդիայի դեմ պայքարով[149], ուստի Հայաստանի ներքին գործերին չէին միջամտում:

941 թ. վերջին Ատրպատականում և հարակից երկրամասերում տեր ու տնօրեն դարձան Դեյլեմից (Դայլամ) սերող Սալարյանները (Մուսաֆիրիները): Նրանց ներկայացուցիչ Մարզուբան իբն Մուհամմադ իբն Մուսաֆիրը կարողացավ ջախջախել Գագիկ Արծրունու հետ բարեկամական հարաբերություններ պահպանող Դայսամին և տիրել Ատրպատականին ու շրջակա երկրամասերին (941-948, 954-957)[150]: Նա տիրում էր նաև Դվինին[151]: Սակայն Մարզուբան իբն Մուհամմադի հզորությանը զգալի հարված հասցրին հիջրայի 332 թ. (4 սեպտեմբեր, 943 թ.-23 օգոստոս, 944 թ.) արևելյան Այսրկովկաս ներխուժած ռուսների ջոկատները, որոնք գրավեցին Պարտավն ու Մարաղան, մի շարք ճակատամարտերում պարտության մատնեցին նրա զորքերին և վեց ամիս մնալուց հետո՝ 944 թ., ավարով ու գերիներով հեռացան[152]: Ռուսների արշավանքը համընկավ Աբասի

---

[149] Տե՛ս **H. Kennedy**, The Prophet and the Age of the Caliphates: The Islamic Near East from the 6th to the 11th Century, Harlow, UK, 2004, p. 276; **T. Bianquis**, Sayf al-Dawla, The Encyclopedia of Islam, New Edition, Volume IX, Leiden and New York, 1997, pp. 106–107:

[150] Տե՛ս **Miskawayh**, 5, էջ 249-250; **Ibn al-Athīr**, 7, էջ 164-166; **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը՝ Վ. Առաքելյանի, Եր., 1983, էջ 337:

[151] Տե՛ս **Miskawayh**, 5, էջ 265-266:

[152] Տե՛ս նույն տեղում, էջ 265-268; **Ibn al-Athīr**, 7, էջ 182-184; **Մովսես Կաղանկատվացի**, էջ 338: Տե՛ս նաև **А. Якубовский**, Ибн-Мискавейх о походе Русов в Бердаа в 332 г.=943/4 г., “Византийский Временник”, том XXIV (1923-

գահակալության երկրորդ փուլի սկզբնավորմանը և, փաստորեն, նպաստեց Աբասի անկաշկանդ գործունեությանը:

Աբասի թագավորության համար նույնքան նպաստավոր իրավիճակ էր ձևավորվել Հայաստանից դեպի հյուսիս-արևելք ընկած երկրներում: Այդ ժամանակ կարևոր իրադարձություններ էին տեղի ունենում Շիրվանշահերի պետությունում և դրա շուրջ, որոնք վերջինիս ուշադրությունը գամված էին պահում արևելյան Այսրկովկասի վրա: Շիրվանշահերի պետության մեջ դեռևս IX դ. վերջին առաջացել էին երկու իշխանություններ՝ Շիրվանի և նրան ստորակա Լայզանի (գտնվում էր Կուր-Երասխյան ջրկիցից դեպի հյուսիս): Շիրվանում իշխում էր Հայսամ իբն Խալիդը, իսկ Լայզանում՝ նրա եղբայր Յազիդ իբն Խալիդը: Շիրվանի տիրակալը կոչվում էր Շիրվանշահ, իսկ Լայզանի իշխողը՝ Լայզանշահ[153]: Հիջրայի 305 թ. (24 հունիս, 917 թ.-13 հունիս, 918 թ.) Լայզանշահ դարձավ Աբու Տահիր Յազիդ իբն Մուհամմադը, որին նույն թվականին հաջողվեց տիրել Շիրվանին: Նա Լայզանում կառավարիչ նշանակեց իր որդի Մուհամմադին[154]: Վերջինս 930 թ. հակամարտության մեջ մտավ Դարբանդի (ալ-Բաբ) ամիր Աբդ ալ-Մալիք ալ-Հիշամիի հետ: Վճռական հաջողության չհասնելով՝ կողմերն ի վերջո հաշտություն կնքեցին[155]:

Շիրվանշահերի պետությունը զգուշավոր քաղաքականություն էր վարում Ատրպատականի հետ հարաբերություններում: 932 թ.

1926), Л., 1926, с. 63-92; **Н. Половой**, О дате второго похода Игоря на греков и похода русских на Бердаа, “Византийский Временник”, том XIV, Москва, 1958, с. 138-147:

[153] Շիրվանշահերի պետության պատմության նշված դրվագների վերաբերյալ կարևոր տեղեկություններ են պահպանվել «Շիրվանի և ալ-Բաբի պատմության» մեջ: Թարգմանությունը տե՛ս **В. Минорский**, История Ширвана и Дербенда X-XI веков, с. 43-79:

[154] Տե՛ս նույն տեղում, էջ 47-49:

[155] Տե՛ս նույն տեղում, էջ 49:

Ատրպատականի ամիր Մուֆլիհը փախուստի դիմեց Ատրպատականին տիրացած Բալդվայիից ու ապաստանեց Շիրվանում, սակայն Շիրվանի տիրակալը բարդություններից խուսափելու նպատակով նրան հանձնեց Բալդվայիին[156]:

944 թ. Դարբանդի ժողովուրդն ապստամբեց Աբդ ալ-Մալիք ալ-Հիշամիի որդի Ահմադի դեմ: Նրանք դիմեցին Աբու Տահիր Յազիդին, որ նա դառնա իրենց տիրակալը: Վերջինս նպատակահարմար գտավ Դարբանդ ուղարկել իր որդի Ահմադին: Սակայն որոշ ժամանակ անց նրան ևս հեռացրին ու հետ վերադարձրին Աբդ ալ-Մալիք ալ-Հիշամիի որդի Ահմադին: Իմանալով այդ մասին՝ Աբու Տահիր Յազիդը զորք ուղարկեց, որոնք ասպատակեցին Դարբանդի շրջակայքը[157]: Այդ ժամանակ Շիրվանշահերի պետություն ներխուժեցին դայլամցիները (Մուսաֆիրի-սալարիները), թերևս ռուսական զորաջոկատների՝ Պարտավից հեռանալուց անմիջապես հետո: Աբու Տահիր Յազիդն օգնության համար դիմեց Դարբանդի ամիրին՝ վերադարձնելով Շապորանից և նրա շրջակա գյուղերից թալանվածը, որից հետո դարբանդցիները օգնեցին նրան՝ դուրս քշելու Սալարիների զորքը Շիրվանից: Դրանից հետո նրանք պայմանավորվեցին միասին հարձակումներ գործել Բյուզանդիայի, վրացիների և այլ անհավատների վրա[158]: Այս ցանկում Հայաստանի կամ հայերի անվան բացակայությունը ցույց է տալիս, որ այդ ժամանակ Շիրվանշահերի պետության հետ հայկական միջավայրի հարաբերությունները լիովին չեզոք էին[159]:

Աբու Տահիր Յազիդը վախճանվեց 948 թ., որից հետո ութ տարի Շիրվանին տիրեց նրա որդի Մուհամմադը (948-956/957): Վերջինիս օրոք սկսվեցին աթոռակալական կռիվներ, որի պատճառով նա իր

---

[156] Տե՛ս նույն տեղում:
[157] Տե՛ս նույն տեղում:
[158] Տե՛ս նույն տեղում:
[159] Տե՛ս նույն տեղում, էջ 87:

եղբայր Ահմադին զնդան նետեց, Լայզանում կառավարիչ նշանակեց իր որդի Ահմադին, իսկ մյուս որդուն՝ Հայսամին, կառավարիչ նշանակեց Թաբարսարանում (Թավասպարք): Ըստ «Շիրվանի և ալ-Բաբի պատմության»՝ նա շարունակել է իր նախորդների քաղաքականությունը՝ պատերազմելով անհավատների (քրիստոնյաների) դեմ[160]: Սակայն վերջին տեղեկությունը հաստատող որևէ վկայություն աղբյուրներում չի պահպանվել:

Մուհամմադ իբն Աբու Տահիր Յազիդին հիշատակում է նաև ալ-Մասուդին՝ նշելով, որ նա գրավել է Բաբ ալ-Աբվաբ (Դարբանդ) քաղաքը Աբդ ալ-Մալիք իբն Հիշամի (ալ-Հիշամիի) մահից հետո: Ըստ ալ-Մասուդիի՝ Մուհամմադ իբն Աբու Տահիր Յազիդը, որը նախկինում տիրում էր միայն Լիրանին (Լայզան), գրավեց և իր իշխանությանը միացրեց Դարբանդը, Մուկանը (Մուղան) և Կասպից ծովի արևմտյան ափամերձ որոշ երկրամասեր [Խուրսանը (Խսրվան) և հարակից շրջանները][161]: Քրիստոնյաների դեմ նրա վարած պատերազմների մասին ալ-Մասուդին ոչինչ չի հիշատակում:

Փաստորեն, Աբասի գահակալության շրջանում Հայաստանի սահմանները հյուսիս-արևելքում ամբողջությամբ անվտանգ էին:

Այդ ժամանակ կարևոր փոփոխություններ էին տեղի ունենում նաև Բյուզանդիայում: 944 թ. Ռոմանոս Ա Լեկապենոս կայսրը գահընկեց արվեց, որից հետո իրավիճակը Կոստանդնուպոլսում որոշ ժամանակ լարված ու խառն էր[162]:

Ահա Հայաստանում և նրա շուրջ տիրող այս նպաստավոր պայմաններում սկզբնավորվեց Աբասի գահակալության վերջին տաս-

---

[160] Տե՛ս **В. Минорский**, նշվ. աշխ., էջ 87:

[161] Տե՛ս **al-Masʿūdī**, Murūj al-dhahab wa maʿādin al-jawāhir, ğ. 1, al-Kahira, 1948, ṣ. 177-178, 205:

[162] Տե՛ս **Թեոփանեսի Շարունակող**. Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 15, Բյուզանդական աղբյուրներ, Ե, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Եր., 1990, էջ 255-258:

նամյակը, երբ «հաղթահարվեցին» Հայաստանում Բագրատունյաց գերակայության վերականգնման գրեթե բոլոր խոչընդոտները:

Միևնույն ժամանակ տեղի ունեցավ մի իրադարձություն, որի հետևանքով աճեց Աբասի կշիռը քրիստոնյա Այսրկովկասում: Նախորդ շրջափուլում Վիրքում տեր ու տնօրեն դարձած Աբխազաց թագավորության հետ բախումը հանգեցրեց Աբասի գերակա դիրքի հաստատմանը Այսրկովկասում: Նախահարձակ եղավ Աբխազաց թագավորությունը, որն օգտվեց այն բանից, որ 941 թ. վախճանվեց վրացական միջավայրում Աբասի դաշնակից Գուրգեն իշխանը: Աբխազաց թագավոր Գեորգին (929-957) Կղարջքի Բագրատունիների ներկայացուցիչների հետ բաժանեց Գուրգենի տիրույթները [163] և սկսեց մտորել Բագրատունյաց թագավորության դեմ հանդես գալու մասին:

Պետք է նշել, որ 920-930-ական թթ. Աբխազաց թագավորությունը լայն գործունեություն էր ծավալել Այսրկովկասի քաղկեդոնական երկրների միավորման ուղղությամբ: Աբխազաց թագավոր Գեորգին, որի օրոք Աբխազաց թագավորությունը հասավ հզորության գագաթնակետին, տիրեց Վիրքին և այնտեղ իշխան նշանակեց իր որդի Կոստանդինին[164]: Վերջինս 920-ական թթ. վերջին ապստամբեց հոր դեմ: Գեորգին զորք հավաքեց նրա դեմ, և նրան միացավ Կախքի քորեպիսկոպոս[165] Փաղլան (մահ.՝ 929 թ.): Ապստամբությունը ճնշվեց, իսկ Գեորգին Վիրքի կառավարիչ նշանակեց իր մյուս որդուն՝ Լևո-

---

[163] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 19:

[164] Տե՛ս «Քարթլիի մատյան», թարգմ. Վ. Մարտիրոսյանի և Հ. Մկրտումյանի, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1989, N 9, էջ 67: Տե՛ս նաև **З. Анчабадзе**, Из истории средневековой Абхазии (VI-XVIIвв.), Сухуми, 1959, с. 128:

[165] Քորեպիսկոպոսը Կախքի իշխանների տիտղոսն էր: Տե՛ս **Հ. Մկրտումյան**, Ծանարների ցեղը և նրանց դերը Դարյալի լեռնանցքի պահպանության գործում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1972, N 6, էջ 86-87:

նին, որն այնտեղ իշխեց բավականին երկար, մինչև որ հոր մահից հետո փոխարինեց նրան աբխազաց գահին[166]:

Նշվածի առումով կարևոր է Ասողիկի մի կարևոր հաղորդման քննությունը: Նա տեղեկացնում է, որ Աբաս թագավորը «**զՎրաց եւ զՍարմատացւոց ասպատակն դադարեցոյց յաշխարհէս Հայոց**»[167]: Այս խիստ կարևոր տեղեկությունը լույս է սփռում կարևոր իրողությունների վրա: Վերջինիս նպաստում է նաև պատմիչի տեղեկության հետագա հատվածը, որտեղ, ի հստակեցումն ասվածի, նշված է հետևյալը. «**ի միում աւուր բազմախուռն բանակաւք, բիւրաւոր զաւրաւք ելանէր Բէրն[168] բէլապես ամբարտաւանութեամբ, իշխանն Ափխազաց, ի Սարմատացւոց աշխարհէն, որ յայնկոյս քան զԿովկասեան լերինսն: Խաղայ գայ անթիւ բազմութեամբ առ ափն գետոյն, որ Կուրն կոչի՝ անապատացուցնել կամելով զաշխարհս Հայոց**»[169]: Թշնամին սպառնում էր, որ եկել է քաղկեդոնական ծեսով օծելու Կարսի նորակառույց Սուրբ Առաքելոց եկեղեցին[170]: Հայտնի է, որ

---

[166] Տե՛ս «Քարթլիի մատյան», էջ 68:

[167] **Ասողիկ**, էջ 749:

[168] Բեր անունով աբխազաց թագավոր կամ իշխան հայտնի չէ: Ն. Ադոնցը փորձում է այդ անունը կապել Հովհաննես Դրասխանակերտցու կողմից աբխազաց թագավորին տրված «Ավագն Ափխազաց» անվանման հետ: Տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ե, էջ 388: Վարդան վարդապետը մի տեղում հիշատակում է հայոց Աբաս թագավորի կողմից Բերին կուրացնելու մասին (տե՛ս **Վարդան վարդապետ**, էջ 88), իսկ մեկ այլ տեղում, խոսելով աբխազաց Թևտաս (Թեոդոս) կույր թագավորի (975-978) մասին, Բերին նույնացնում է նրան: Տե՛ս նույն տեղում, էջ 91: Սակայն «Քարթլիի մատյանը» Թեոդոսին կուրացնելը վերագրում է նրա եղբայր, աբխազաց թագավոր Դեմետրեին (967-975): Տե՛ս «Քարթլիի մատյան», էջ 70: Դժվար է միանշանակ ասել, թե իրականում որն է ճշմարիտը, սակայն հավանական է, որ Վարդան վարդապետի վրա ազդեցություն է թողնել այն պարզ իրողությունը, որ աբխազաց երկու կույր իշխողները ժամանակագրորեն իրար շատ մոտ են կանգնած:

[169] **Ասողիկ**, էջ 749:

[170] Տե՛ս նույն տեղում:

եկեղեցին կառուցվել է 930-942 թթ.[171], որից պետք է բխեցնել, որ նշված իրադարձությունները տեղի են ունեցել արդեն կառուցված եկեղեցու օծման շրջանում, ամենայն հավանականությամբ՝ 943 թ.: Այսինքն՝ Բերի զորքերի հարձակումը տեղի է ունեցել վրաց իշխան Գուրգենի մահից (941 թ.) հետո, իսկ հարձակման պատրվակն էլ լիովին համապատասխանում է տիրող իրավիճակին, երբ տեղի էր ունենում Այսրկովկասի քաղկեդոնականների միավորման գործընթաց, իսկ վերջինիս՝ հաջողությամբ պսակվելու ճանապարհին միակ խոչընդոտն այլևս մնացել էր Հայոց թագավորությունը:

Հստակ է, որ Ասողիկը, «զՎրաց եւ զՍարմատացւոց» արտահայտության մեջ «զՍարմատացւոց» ասելով, նկատի ունի աբխազաց զորքերը: Դա հաստատվում է նաև պատմիչի մեկ այլ հիշատակությամբ, ըստ որի՝ աբխազաց թագավոր Սմբատը (իմա՛ Բագրատ Գ – Ա. Ե.) «**խաղայ զաւրաւք բազմաւք ի Սարմատացւոց աշխարհէն**»[172]: Հատկապես կարևոր է «զՎրաց» անվան բացահայտումը, ինչը, հաշվի առնելով մեր հետազոտության արդյունքները, այնքան էլ դժվարին աշխատանք չէ: Խնդիրն այն է, որ Աբասն օժանդակում էր Գուրգեն իշխանին աբխազաց թագավորի և Արտանուջի տերերի դեմ, ուստի բխում է ինքնըստինքյան եզրակացությունը: «Վրաց» անվան ներքո պատմիչը նկատի ունի Արտանուջի տերերի զորքը, որը, օգտվելով Գուրգենի մահից հետո ստեղծված իրավիճակից, միացած աբխազաց բանակին, արշավանքի էր դուրս եկել Հայոց թագավորության դեմ: Բացառված չէ, որ արշավանքին մասնակցում էր նաև այդ ժամանակ արդեն Աբխազաց թագավորության գերիշխանության ներքո գտնվող բուն Վիրքից հավաքագրված զորքը, սակայն, պատմիչի համար, անկասկած, հիշատակության հիմք է դարձել, «Վրաց» թագավոր հռչակված Կղարջքի տերերի մասնակցությունը արշավանքին:

---

[171] Տե՛ս **Թ. Թորամանյան**, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Բ, էջ 133; «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 374-375:
[172] **Ասողիկ**, էջ 805-806:

Աբասը «**գումարտակ զաւրաց արարեալ այրուձիոյն Հայոց՝ հասանէ ի գետն Կուր**»: Օրեր շարունակ գետի երկու ափերին կանգնած հակառակորդների ջոկատներն անցնում էին գետը և անակնկալ ասպատակ սփռում: Վերջապես աբխազաց բանակն հաղթահարեց Կուրն ու գրոհեց հայոց բանակի դիրքերի վրա: Անակնկալի եկած հայ զինվորները շփոթության մատնվեցին: **Իրավիճակը շտկելու համար Աբասն իր ձեռքը վերցրեց նախաձեռնությունը և հայոց զորքն անձամբ գրոհի տարավ**: Ճակատամարտն ավարտվեց հայոց բանակի լիակատար հաղթանակով: Ասողիկը, գրելով այն մասին, որ Աբաս թագավորը «զՎրաց եւ զՍարմատացւոց ասպատակն դադարեցոյց յաշխարհէս Հայոց», ցանկացել է ընդգծել, որ հաղթանակը վերջնական է եղել: Ավելին, Բերը գերի է ընկել, բերվել Կարս և կուրացվել, որից հետո կողմերը պայմանավորվել են այլևս չպատերազմել միմյանց դեմ[173]: Ի պատիվ Աբասի տոնած այդ խոշոր հաղթանակի՝ Ասողիկը հաղորդում է, որ «**Աբաս ... ըստ քաջազաւր զաւրութեանն ... յաղթող եղեւ շուրջանակի**»[174]:

Թերևս Բերի արշավանքի հետ է առնչվում միաբնակ եկեղեցու հետևորդների նկատմամբ հալածանքների և նրանց՝ Հայոց թագավորություն գաղթելու վերաբերյալ պատմությունը: Կիրակոս Գանձակեցին հաղորդում է. «...Ռոմանոս. սա հալածեաց զամենայս կրօնաւորս և զքահանայս հայոց, որք էին յաշխարհին Հոռոմոց, զի ո՛չ հաւանեցան դաւանութեանն Քաղկեդոնի: Եւ եկեալ յաշխարհս Հայոց յաւուրս Աբասայ, որդւոյ Սմբատայ, հաստատեցին վանորայս՝ զԿամրջաձոր, և զԿապուտքարն ի գաւառին Արշարունեաց, և զհոչականունն Հոռոմոսին կոչեցեալ վանք, և զԴպրէվանք ի Շիրակ գաւառին. շինեցին և եկեղեցի մի յանուն ամենասուրբ Աստուածածնին ի վանքն, որ կոչի Սանահին»[175]: Այդ դեպքերին առավել մոտ

---

[173] Տե՛ս **Ասողիկ**, էջ 750:

[174] Նույն տեղում, էջ 749:

[175] **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Եր., 1961, էջ 84-85:

կանգնած Ասողիկը, սակայն, հաղորդում է խիստ էական մանրամասներ, որոնք հնարավորություն են տալիս միաբնակների հալածանքների իրողությունը կապելու Բերի արշավանքի հետ: Ըստ Ասողիկի՝ «մեծահռչակ **ուխտն Կամրջաձորոյ ի գաւառին Արշարունեաց, որոյ առաջնորդ հայր Յովհաննէս, որ հալածեալ յարեւմտեայ աշխարհէն, յԵգերացւոց գաւառէն, ի քաղկեդոնական մարդադաւան աղանդիցն**...»[176]: Ամենայն հավանականությամբ, Եգերաց գավառից, որը մաս էր կազմում Աբխազաց թագավորության, միաբնակ հոգևորականի հալածվելու վերաբերյալ հիշատակությունը (այն համադրելով Բերի սպառնալիքի հետ, թե եկել է Կարսի կաթողիկե եկեղեցին օրհնելու քաղկեդոնական կարգով), հուշում է, որ գործ ունենք միևնույն ենթատեքստում տեղի ունեցող գործընթացների հետ[177]: Ավելին, Սամվել Անեցու մի հիշատակությունը հնարավորություն է տալիս հիմնավորելու Բյուզանդիայի՝ նշված իրադարձություններին մասնակից լինելը: Պատմիչը գրում է. «**Յոյնք** (իմա՛ բյուզանդացիները – Ա. Ե.) **պահէն ի կողմն Բէրա**: Իսկ յետ յաղթելոյ զԲէրա Աբաս ետ փորել զաչս նորայ»[178]: Ռոմանոս կայսեր հիշատակությունը հնարավորություն է տալիս այդ իրադարձությունը թվագրելու մինչև նրա գահընկեց անելը, իսկ Ասողիկի շարադրանքում միաբնակների հալածանքների պատմությունը Բերի արշավանքից հետո նկարագրելը ցույց է տալիս, որ հալածանքները և գաղթը տեղի են ունեցել 943-944 թթ.:

Աբխազաց բանակի ջախջախումը Աբասին վերածեց այժմ արդեն ոչ միայն Հայաստանի, այլև Այսրկովկասի հզորագույն տիրակալի:

---

[176] **Ասողիկ**, էջ 750:

[177] Տե՛ս **А. Грен**, Династия Багратидов в Армении, “Журнал министерства народного просвещения”, часть ССХС, С.-Петербург, 1893, ноябрь, с. 100:

[178] **Սամուէլ Անեցի եւ շարունակողներ**, Ժամանակագրութիւն (Ադամից մինչեւ 1776 թ.), աշխատասիրությամբ Կ. Մաթևոսյանի, Եր., 2014, էջ 173:

2.2. Հոգևոր հիմնախնդիրների լուծումը

Աբասի գահակալության երկրորդ շրջանը նշանավորվեց նրանով, որ նախկինում չկարգավորված և կուտակված հոգևոր բնույթի խնդիրները գլուխ բարձրացրին՝ պահանջելով անհապաղ լուծումներ: Դրանց լուծմանը նպաստեց այն, որ Գագիկ Արծրունու մահից հետո հնարավոր դարձավ Այրարատ վերադարձնել կաթողիկոսանիստը: Հայոց հայրապետի վերադարձը Միջնաշխարհ նպաստեց երկրի հոգևոր միասնության ամրապնդմանը:

Ըստ Սամվել Անեցու՝ Անանիա Մոկացի կաթողիկոսը «**Ե (5) ամ. յԱղթամար եւ ԺԷ (17) ամ ի Վարագ եկաց**»[179]: Քանի որ Անանիա Մոկացին իր գահակալության սկիզբը դնում է հայոց ՅՂ թվականին (390/941-942)[180], ապա կաթողիկոսարանի տեղափոխումն ընկնում է 946 թ.: Ըստ Ասողիկի՝ «Տէր Անանիա Մոկացի՝ առաջնորդ սուրբ ուխտին Վարագայ, հայրապետ Հայաստանեայցս՝ ամս ԻԲ (22)»[181]: Այս տեղեկությունը ցույց է տալիս, որ հայոց կաթողիկոս դառնալուց առաջ Անանիա Մոկացին Վարագա սուրբ ուխտի առաջնորդն է եղել: Թերևս այդ տողերի սխալ մակաբերումն է պատճառը, որ Սամվել Անեցին, ում հայտնի էր, որ Անանիա Մոկացին Աղթամարում հինգ տարի մնալուց հետո տեղափոխվել է, նշում է, թե իբր նա փոխադրել է իր աթոռը Վարագ և այնտեղ մնացել 17 տարի: Փորձ է կատարվել Սամվել Անեցու հիշատակած «Վարագ»-ի ներքո հասկանալու Շիրակ գավառի Արգինա գյուղաքաղաքը[182]: Այդ տեսակետը հավանական է, քանի որ Անանիա Մոկացին հայոց ՅՂԸ թվականից (398/949-950) ոչ շատ վաղ ընկած մի դեպքի առիթով գրում է, որ

---

[179] **Սամվել Անեցի և շարունակողներ,** էջ 173:
[180] Տե՛ս **Անանիա Մոկացի**, էջ 255-256:
[181] **Ասողիկ**, էջ 749:
[182] Տե՛ս **Սամվել Անեցի և շարունակողներ**, էջ 380, ծանոթ. 182:

«**եկեալ հասաք ... յաշխարհս մեր Շիրակ կոչեցեալ**»[183]՝ այդպիսով ցույց տալով իր նստոցի՝ Շիրակում գտնվելը: Այն, որ կաթողիկոսի նստավայրը արքայանիստ Կարսում չէր[184], ցույց է տալիս այն, որ հայոց թագուհու մահվան կապակցությամբ[185] և Աբասին ու նրա որդի իշխանաց իշխան Աշոտին հանդիպելու համար կաթողիկոսը հատուկ ժամանել է Կարս[186]: Իսկ Ստեփանոս Օրբելյանը գրում է, որ Վասպուրականից կաթողիկոսանիստը տեղափոխվել է Արգինայի վանքը Շիրակ գավառում[187]: Երկրի հոգևոր իշխանության կենտրոնի տեղափոխումն Այրարատ միտված էր մեծապես բարձրացնելու Գագիկ Արծրունու մահից հետո միակ հայոց թագավոր Աբասի հեղինակությունը:

940-ական թթ. երկրորդ կեսին և 950-ական թթ. սկզբին վերջապես իր լուծումը գտավ ըստ Անանիա Մոկացու 69 տարի շարունակվող, այսպես կոչված, «**Աղվանից** (իմա՛ Հայոց Արևելից կողմերի – Ա. Ե.) **ապստամբությունը**»: Համաձայն Անանիա Մոկացու՝ Գևորգ Բ Գառնեցու մահից հետո «**տեւեալ ապստամբութեամբ զամս ԿԹ (69) եւ զժամանակս հայրապետաց հնգից, մինչեւ ի մեր նուաստութիւնս**»[188]: Ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ մինչև Անանիա Մոկացին իշխած հինգ կաթողիկոսներն էին Մաշտոց Եղիվարդեցին (898), Հովհաննես Դրասխանակերտցին (898-925/926), Ստեփանոս Ռշտունին (926-927), Թեոդորոս Ռշտունին (927-937/938) և Եղիսեն (937/938-

---

[183] **Անանիա Մոկացի**, էջ 268:

[184] Ըստ Ռ. Մաթևոսյանի՝ Անանիա Մոկացին տեղափոխվել է Կարս, որտեղ Աբաս թագավորը կաթողիկե եկեղեցին էր կառուցել: Տե՛ս **Ռ. Մաթևոսյան**, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, էջ 122:

[185] Տե՛ս **Անանիա Մոկացի**, էջ 259:

[186] Տե՛ս նույն տեղում, էջ 268:

[187] Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, էջ 275:

[188] **Անանիա Մոկացի**, էջ 267:

942)[189]: Եթե Անանիա Մոկացու՝ Արգինայում հաստատվելու 946 թվականից հանենք «ապստամբության» 69 տարիները, հաշվարկը կհասցնի 876/877 թ., երբ կաթողիկոսական գահին բազմեց Գևորգ Բ Գառնեցին (876/877-898)[190]: Եզրակացությունն այն է, որ կա՛մ հինգ կաթողիկոսների փոխարեն պետք է հիշատակված լինեին վեց կաթողիկոսներ, և կա՛մ Անանիա Մոկացին, ինչպես և Ասողիկը, շուրջ մեկ տարի գահակալած Ստեփանոս Ռշտունուն հայոց հայրապետների ցանկում չի հաշվարկել[191]: Այսպես, թե այնպես, ակնհայտ է, որ հաշվարկի մեկնակետը Գևորգ Բ Գառնեցու աթոռակալության սկիզբն է, իսկ «ապստամբության» վերացումը թվագրված է Անանիա Մոկացու՝ Արգինայում հաստատվելու 946 թվականով:

Խնդիրն այն է, որ Աղվանից կաթողիկոսները, հակառակ ընդունված կարգի, որ ձեռնադրվում էին ամենայն հայոց կաթողիկոսների կողմից, նշված հինգ կաթողիկոսների օրոք կարգվել էին տեղի եպիսկոպոսների կողմից՝ չստանալով հայոց կաթողիկոսի ձեռնադրությունը: Դրա նախադեպը, սակայն, տեղի էր ունեցել Գևորգ Բ Գառնեցու օրոք, երբ Հայոց Արևելից կողմերի եպիսկոպոսները կաթողիկոս էին ընտրել Հունանին, որին, ի վերջո, ձեռնադրեց նաև Գևորգ Բ Գառնեցին՝ երախտահատույց լինելով Աղվանից Համամ թագավորին, որն իրեն ազատել էր գերությունից[192]: Պատահական չէ, որ «Աղվանից ապստամբությունը», ըստ Անանիա Մոկացու, սկիզբ է առել հենց նրա օրոք: Մինչ այդ՝ նախքան Աբասի գահակալությունը, հայտնի չէ որևէ դեպք, երբ Բագրատունի գահակալը հայոց կաթողիկոսի հետ միասին ձեռնարկեր այդ խնդիրների լու-

---

[189] Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, էջ 276:
[190] Տե՛ս **Ղ. Ալիշան**, Յուշիկք հայրենեաց Հայոց, հ. Ա, Վենետիկ, 1869, էջ 475; Տե՛ս **Մ. Օրմանեան**, նշվ. աշխ., § 674:
[191] Տե՛ս **Ասողիկ**, էջ 748:
[192] Տե՛ս **Անանիա Մոկացի**, էջ 267:

ծումը: Ուստի Աբասին և խիստ գործունյա Անանիա Մոկացի կաթողիկոսին վիճակվեց զբաղվել դրանց կարգավորմամբ:

Անանիա կաթողիկոսի՝ Արգինա տեղափոխվելու շրջանում Հայոց Արևելից կողմերում և Սյունիքում հասունանում էին իրադարձություններ, որոնց հետագա զարգացումը, անկասկած, բերելու էր այդ երկրամասերի՝ հայկական իրականությունից մասնակի (հոգևոր առումով) օտարման: Ըստ Անանիա Մոկացու և Ստեփանոս Օրբելյանի՝ Սյունյաց եպիսկոպոս Հակոբը (918-958)[193] մեռոնի համար այլևս հայոց կաթողիկոսի մոտ չէր գնում՝ պատճառ բերելով կաթողիկոսարանի անընդհատ տեղափոխությունները, ճանապարհի հեռավորությունը և նպատակահարմար գտնելով նշված նպատակներով դիմել Աղվանից (Հայոց Արևելից կողմերի) կաթողիկոս Սահակին (928-948)[194]: 930-940-ական թթ. Աղվանից Սահակ կաթողիկոսի և Սյունյաց Հակոբ եպիսկոպոսի ինքնուրույնությունը մայր եկեղեցուց այնքան խորացավ, որ նրանք նույնիսկ հրաժարվեցին հայոց կաթողիկոսի ընտրությանը մասնակցելուց, չնայած պատրաստակամություն հայտնեցին ընդունել ընտրությունների արդյունքները հեռակա կարգով[195]:

Դատելով Անանիա Մոկացու թղթերից՝ Հայոց Արևելից կողմերի և Սյունյաց հոգևոր տերերի նման պահվածքի պատճառը ոչ միայն հոգևոր խնդիր էր, այլև քաղաքական: Այդ ժամանակ Աղվանից թագավորն էր Իշխանակը, որի օրոք թագավորությունում տարածվեց քաղկեդոնականությունը, և հենց ինքը՝ Աղվանից թագավորը, դարձավ քաղկեդոնական: Անանիա Մոկացին դրա մեջ վտանգ

---

[193] Սյունյաց Հակոբ եպիսկոպոսի մասին մանրամասնորեն տե՛ս **Վ. Ալեքսանյան**, Հակոբ Ա եպիսկոպոս Սյունեցու գործունեության շուրջ (918-958 թթ.), «Պատմա-բանասիրական հանդես», 2014, N 3, էջ 195-208:

[194] Տե՛ս **Անանիա Մոկացի**, էջ 256; **Ստեփանոս Օրբելյան**, էջ 274-275:

[195] Տե՛ս **Անանիա Մոկացի**, էջ 258:

էր տեսնում նաև Հայոց Արևելից կողմերի ու Սյունիքի համար՝ թե՛ հոգևոր, թե՛ քաղաքական երկփեղկման առումներով[196]:

Խնդիրը լուծելու նպատակով 946 թ. հայոց կաթողիկոսը մեկնեց Սյունիք, որտեղ ընդունվեց Սյունյաց Սմբատ և Բաղաց Ջվանշեր իշխանների կողմից: Հակոբ եպիսկոպոսը մեղա եկավ և թողություն ստացավ[197]: Սյունիքում խնդիրը համարելով լուծված՝ կաթողիկոսը որոշեց ուղևորվել Հայոց Արևելից կողմեր, երբ լուր հասավ, որ վախճանվել է հայոց թագուհին, և նա շտապ վերադարձավ Շիրակ[198]: Շուտով պարզվեց, որ Հակոբ եպիսկոպոսը շարունակում է նախկին գործելակերպը[199]: Նկարագրելով ստեղծված վիճակը՝ Անանիա Մոկացին ամեն ինչ կապում է Հայաստանում տարածվող քաղկեդոնականության հետ: Նա գրում է, որ «**կամեցաք մաքրել զընծիւղեալ աղանդ Քաղկեդոնի, որ յաշխարհիս Հայոց իբր քաղցկեղ ճարակեր**»[200], ուստի դիմում է Աբաս թագավորին, որ նա վերջապես միջամտի՝ «արքայասաստ» հրաման արձակի՝ բոլորին վերադարձնելով «ի կամս Աստուծոյ»[201]: Աբասը միջամտում է և հրաման արձակում՝ գլխատման սպառնալիքով արգելելով ամուսնությունը երկաբնակների հետ: Մյուս կողմից, թագավորը հրամայում էր նորանոր եկեղեցիներ կառուցել, ինչպիսին կառուցվել էր Կարսում[202]:

948 թ. վախճանվեց Աղվանից կաթողիկոս Սահակը[203]: Նրա հաջորդ Գագիկին (948-961)[204] տեղի իշխանները չընդունեցին և այլ

---

[196] Տե՛ս նույն տեղում: Ստեփանոս Օրբելյանը Հակոբ եպիսկոպոսին ուղղված քաղկեդոնականությանը հարելու մեղադրանքը համարում է զրպարտություն: Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, էջ 277:

[197] Տե՛ս **Անանիա Մոկացի**: Տե՛ս նաև **Ստեփանոս Օրբելյան**, էջ 276:

[198] Տե՛ս **Անանիա Մոկացի**, էջ 258-259:

[199] Տե՛ս նույն տեղում, էջ 259: Տե՛ս նաև **Ստեփանոս Օրբելյան**, էջ 277:

[200] **Անանիա Մոկացի**, էջ 259:

[201] Տե՛ս նույն տեղում:

[202] Տե՛ս նույն տեղում, էջ 259-260:

[203] Տե՛ս նույն տեղում, էջ 260:

մեկին՝ Հունանին, ուղարկեցին Արգինա՝ հայոց կաթողիկոսի կողմից ձեռնադրվելու: Հունանի թեկնածությանը համաձայնեց նաև Աբասը, և նա ձեռնադրվեց Աղվանից կաթողիկոս[205]: Այդ ամենը Սյունյաց Հակոբ եպիսկոպոսը դժգոհությամբ ընդունեց, քանի որ ի դեմս Գագիկ կաթողիկոսի՝ կորցնում էր իր դաշնակցին[206]:

Չնայած Հունանի ձեռնադրությանը՝ Հայոց Արևելից կողմերում և Սյունիքում իրավիճակը էական փոփոխություններ չէր կրում: Դա ստիպեց, որ 949 թ. հայոց կաթողիկոսը մեկնի Խաչեն, իսկ այնտեղից՝ Սյունիք: Նրան դիմավորեց Խաչենի Գրիգոր իշխանը, որի հրավերով Արդախ ավանում գումարվեց եկեղեցական ժողով՝ գահընկեց կաթողիկոս Գագիկի և ձեռնադրված կաթողիկոս Հունանի մասնակցությամբ[207]: Ժողովականների մեծ մասը դեմ էր Հունանին և կողմ՝ Գագիկին: Գրիգոր իշխանը, Անանիա Մոկացուն հիշեցնելով Գևորգ Բ Գառնեցու կողմից առանց հայոց կաթողիկոսի ձեռնադրության Աղվանից կաթողիկոս կարգված Հունանի ձեռնադրման օրինակը, խնդրեց ձեռնադրել Գագիկին: Ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ Անանիա Մոկացին կարգալույծ է արել թե՛ Հունանին, թե՛ Գագիկին, թեև Խաչենի իշխան Գրիգորը խնդրել էր վերջինիս համար[208]: Սակայն, դատելով Անանիա Մոկացու «...**զերկրորդ ձեռնադրութիւն տալով ուղղափառին** (իմա՛ Գագիկին – Ա. Ե.)՝ **ի սուրբ կանոնաց երկոքեան լուծման առնուաք հրաման**» [209] տեղեկությունից, որը

---

[204] Ըստ Մովսես Դասխուրանցու և Կիրակոս Գանձակեցու՝ Գագիկ կաթողիկոսն իշխել է 14 տարի, ըստ որում՝ նրա գահակալության չորրորդ տարին համապատասխանել է հայոց Ն թվականին (400/951-952): Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 346; **Կիրակոս Գանձակեցի**, էջ 198: Ստացվում է, որ նա աթոռակալել է 948-961 թթ.:

[205] Տե՛ս **Անանիա Մոկացի**, էջ 260:

[206] Տե՛ս նույն տեղում:

[207] Տե՛ս նույն տեղում, էջ 261: Տե՛ս նաև **Ստեփանոս Օրբելյան**, էջ 278-279:

[208] Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, էջ 282:

[209] **Անանիա Մոկացի**, էջ 261-262:

հետևում է Գևորգ Գառնեցու օրինակով Գագիկին ձեռնադրելու մասին Խաչենի իշխան Գրիգորի խնդրանքի մասին հաղորդմանը, կարելի է եզրակացնել, որ նա անսացել է այդ խնդրանքին և ձեռնադրել Գագիկին: Ի դեպ, «**ի սուրբ կանոնաց երկոքեան լուծման առնուաք հրաման**» արտահայտությունը լիովին համահունչ է Ստեփանոս Օրբելյանի՝ թե՛ Գագիկին և թե՛ Հունանին կարգալույծ անելու մասին տեղեկությանը, որը կարծել է տալիս, որ նախքան Գագիկին Գրիգոր իշխանի խնդրանքով ձեռնադրելը հարկ էր կարգալույծ անել նրան, քանի որ նախկինում կարգի խախտմամբ էր կարգվել Աղվանից կաթողիկոս և իր իսկ կողմից ձեռնադրված Հունանին, որին, ի դեպ, կարգալույծ արեց՝ Արդախի ժողովի մասնակիցների դժգոհությունը պատճառ բերելով[210]: Այլապես վերջիվերջո Գագիկին չձեռնադրելու պարագայում Արգինայում իր կողմից ձեռնադրված Հունանին կարգալույծ անելու տրամաբանությունն անհետանում է: Ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ Անանիա Մոկացին այդպես էլ չի կարողացել Աղվանից Գագիկ կաթողիկոսին մինչև վերջ ենթակա դարձնել իրեն[211]: Ինքը՝ Անանիա Մոկացին, Գագիկին ներկայացնում է որպես «**այր համեստ եւ գեղեցկադէմ եւ չափաւոր հասակաւ**»[212], և նման «բարեհաճ» նկարագրությունն իրականում խոսում է հակառակի օգտին:

Կարգավորելով խնդիրը Խաչենում՝ Անանիա Մոկացին մեկնեց Սյունիք: Իմանալով նրա գալու մասին՝ Հակոբ եպիսկոպոսը ապաստանեց Բաղքի Ջվանշեր իշխանի Կապան ամրոցում՝ ստանալով իշխանի աջակցությունը: Նզովելով նրանց և հրամայելով ավերել Հակոբ եպիսկոպոսի նստոցը՝ կաթողիկոսը վերադարձավ Շիրակ: Իմանալով այդ նորությունը՝ Աբասը քաջալերեց նրան[213]:

---

[210] Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, էջ 282:
[211] Տե՛ս նույն տեղում, էջ 283:
[212] **Անանիա Մոկացի**, էջ 260:
[213] Տե՛ս նույն տեղում, էջ 267-268:

Փաստորեն, Աբասի օրոք դժվարին էր իրավիճակը Հայաստանում նաև հոգևոր առումով: Շնորհիվ խիստ գործունյա հայոց կաթողիկոսի՝ այդ խնդիրները հիմնականում լուծում ստացան, չնայած դեռ որոշ ժամանակ իրենց զգացնել էին տալիս: Այն, որ նշված խնդիրները հիմնականում լուծվել են Աբասի օրոք, պարզվում է Անանիա Մոկացու հետևյալ տեղեկությունից. «...**Ողորմութեամբն Աստուծոյ եւ կամաւք հզաւրին** (իմա՛ Աբասի – Ա. Ե.) **առ ժամայն բարձան ամենայն անառակ կարգաղրութիւնքն, որ էին յաշխարհին երանելոյ թագաւորին Աբասայ, շնորհաւք նորին եւ աղաւթիւք սրբոց**»[214]: Այս տողերը վկայում են երկրում ծառացած հոգևոր խնդիրների լուծման համար հայոց կաթողիկոսին Աբասի կողմից տրամադրված քաղաքական լայն աջակցության մասին:

Ամենայն հավանականությամբ Աբաս թագավոր նոր եկեղեցիներ կառուցելու հրամանի հետ է կապված այն բուռն եկեղեցաշինությունը, որ սկիզբ առավ հարևան երկրներում հալածվող միաբնակ հոգևորականների՝ Հայաստանում հաստատվելուց հետո[215]:

Աբասի օրոք եկեղեցաշինության ծավալների մեծացումը հաշվի առնելով՝ Ասողիկը գրում է, որ «**Աբաս խաղաղութեան եւ շինութեան պատճառ եղեալ աշխարհիս Հայոց**»[216]: Հետաքրքրական է, որ Աբաս թագավորը նման համբավ ուներ նաև վրացական միջավայրում: Ըստ Փարսադան Գորգիջանիձեի՝ 24 տարի թագավորած Աբասի օրոք Հայոց տերությունը շենացել է, ու կառուցվել են եկեղեցիներ[217]:

---

[214] Նույն տեղում, էջ 260:

[215] Տե՛ս **Ասողիկ**, էջ 750-751; **Կիրակոս Գանձակեցի**, էջ 84-85:

[216] **Ասողիկ**, էջ 749:

[217] Տե՛ս **Լ. Մելիքսեթ-Բեկ**. Վրաց աղբյուրները Հայաստանի յեվ հայերի մասին, քաղվածքներ վրացերեն բնագրերից հայերեն թարգմանությամբ, ներածություն-ծանոթագրություններով յեվ հավելվածներով, հ. Բ. (ԺԳ-ԺԸ դար), Յեր., 1936, էջ 97:

Ի վերջո, հարկ է նշել նաև Աբաս թագավորի օրոք Անիի միջնաբերդից դուրս կառուցված եկեղեցու մասին, որով, փաստորեն, սկիզբ առավ Անիի ընդարձակման գործընթացը: Ասողիկի աշխատության ձեռագրերից մեկում առկա է մի հավելում, ըստ որի՝ Աբասը «**շինէ եւ զփոքր կաթուղիկէն անւոյ**»[218]: Եկեղեցին «**փոքր կաթողիկե**» է կոչվել հետագայում, երբ Անիում որպես կաթողիկոսարանի եկեղեցի կառուցված Մայր տաճարը, ի տարբերություն նրա, սկսել են անվանել «**մեծ կաթողիկե**»[219]: Աբասի կողմից Անիում կաթողիկե եկեղեցի կառուցելը հիմնավորվում է ձեռագրերից մեկում պահպանված «**Սա** (իմա՛ Աբասը – Ա. Ե.) **շինեաց վանս՝ կաթուղիկէն, զԿարուց մեծ եկեղեցին**...»[220]: «Փոքր կաթողիկեն», հավանաբար, նույնական է Անիի «Աշոտյան» պարիսպներից ներս, բայց միջնաբերդի տարածքից դուրս գտնվող «Աշոտի [քաղաքի] եկեղեցուն»[221], որը վերագրվում է Անիի՝ մինչև մայրաքաղաք հռչակվելն ընկած ժամանակաշրջանին[222]: Աշոտ Գ-ն Անիում թագադրվել է հենց «փոքր կաթողիկե» եկեղեցում[223]: Կարելի է ենթադրել, որ Անիի ընդարձակման և մայրաքաղաքի վերածման գործընթացը սկիզբ է առել հենց Աբաս թագավորի օրոք, որը, Կարսում կաթողիկե եկեղեցի հիմնելուց բացի, հրամայել է մեկ այլ կաթողիկե եկեղեցի էլ Անիում կառուցել:

---

[218] **Ասողիկ**, էջ 749, ծանոթ. 26:

[219] **Կ. Մաթևոսյան**, Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1997, էջ 156; նույնի՝ «Անի-Շիրակի պատմության էջեր», Եր., 2010, էջ 11-12:

[220] **Գարեգին Ա կաթողիկոս**, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, էջ 87:

[221] **Կ. Մաթևոսյան**, Անի-Շիրակի պատմության էջեր, էջ 12:

[222] Տե՛ս **Н. Марр**, Ани: книжная история города и раскопки на месте городища, М.-Л., 1934, с. 101:

[223] Տե՛ս **Կ. Մաթևոսյան**, Անի-Շիրակի պատմության էջեր, էջ 12: Տե՛ս նաև նույնի՝ «Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը», էջ 155-158:

2.3. Աբասի գահակալության վերջին տարիները. Աբասը՝ շահնշահ

Աբասի թագավորության վերջին տարիներին Բյուզանդիան զգալիորեն ակտիվացրեց գործողությունները հատկապես Կարնո քաղաքի ուղղությամբ: 949 թ. (հայոց ՅՂԸ թվականին՝ 398/949-950) բյուզանդական բանակը գրավեց Կարնո քաղաքը[224]: Գրավումից անմիջապես հետո, օգտվելով իրավիճակից, Կղարջքի (Վրաց) թագավոր Սմբատը (945-958)[225], որը Բյուզանդիայից ստացել էր կուրապաղատի կոչում, գրավեց Կարնո քաղաքի հարևան Մաստատոն ամրոցը[226]:

Միևնույն ժամանակ, 951 թ. սկսած, Դվինում հաստատվեցին քուրդ Շադդադյանները[227]: Վերջիններիս գործունեության կարևոր փուլը սկսվել է արդեն Աբասի վախճանից հետո, ուստի այժմ հարկ է բավարարվել նրանց՝ Դվինում հաստատվելն արձանագրելով:

Իբն Հաուկալը, խոսելով 941 թ. Ատրպատականի տիրակալ դարձած Մարզուբան իբն Մուհամմադ իբն Մուսաֆիր ալ-Սալարիին հարկատու [ըստ նրա՝ հիջրայի 344 (955) թ. դրությամբ] հայ իշխանների մասին, նրանց թվում հիշատակում է **Սմբատի որդիներին («բանու Սինբատ»)**[228]: Այդ տեղեկությունից Ա. Տեր-Ղևոնդյանը

---

[224] Տե՛ս **Ասողիկ**, էջ 754:

[225] Տե՛ս «Քարթլիի մատյան», էջ 67:

[226] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 18: Մաստատոնի (Մազդատ) տեղադրությունը տե՛ս **Է. Դանիելյան**, Կեց (Κετζέον) և Մազդատ (Μαστάτον) ամրոցների տեղադրությունը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1976, N 8, էջ 73-84:

[227] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Մունաջջիմ-Բաշիի XI-XII դդ. անանուն աղբյուրը Դվինի և Գանձակի Շադդադյանների մասին, «Բանբեր Մատենադարանի», 1962, N 6, էջ 75; նույնի՝ «Դվին քաղաքի ժամանակագրությունը 9-11-րդ դարերում», էջ 92:

[228] Տե՛ս **Ibn Ḥauḳal**, էջ 354-355:

բխեցրել է, որ հարկատու կարող էր լինել իրականում միայն Աբասը, քանի որ Սմբատ Ա-ի մյուս որդին՝ Աշոտ Երկաթը, Մարզուբան իբն Մուհամմադի ժամանակակիցը չէր[229]: Վ. Մինորսկին կարծում է, որ Իբն Հաուկալի տեղեկությունը վերաբերում է հիջրայի 344 թ. (ապրիլ, 955 թ.-ապրիլ, 966 թ.), իսկ «Սմբատի որդիներ» բառակապակցության ներքո հասկանում Անիի Բագրատունիներին[230]: Վերջին թվագրումը բավականին կասկածելի է, քանի որ «Սմբատի որդիներ» արտահայտությունը պետք է հուշեր, որ խոսքը հենց Սմբատ Ա-ի որդիների մասին է: Այլապես, Աշոտ Գ-ին, որը Սմբատ Ա-ի թոռն էր, «Սմբատի որդի» կոչելը անտրամաբանական է: Մյուս կողմից, անտրամաբանական է նաև Անիի Բագրատունիների՝ «Սմբատի որդիներ» կոչվելը, քանի որ արքայատան հիմնադիրը ոչ թե Սմբատն էր, այլ նրա հայր Աշոտ Ա-ն (887-891):

Ի վերջո, ինչ վերաբերում է «Սմբատի որդիների (իմա՛ որդու)»՝ Մարզուբան իբն Մուհամմադին հարկատու լինելուն, եթե, իրոք, այդպիսի վիճակ եղել է, ապա միայն Աբասի գահակալության շրջանում և ավարտվել է հիջրայի 337 թ. (11 հուլիս, 948 թ.-30 հունիս, 949 թ.), երբ Մարզուբանը թշնամիների դեմ կռվում գերի ընկավ[231] և զնդանում մնաց մինչև հիջրայի 342 թ. (18 մայիս, 953 թ.-6 մայիս, 954 թ.)[232]: Նրա բանտարկությունից հետո Աբասն ազատվեց հերթական հզոր հակառակորդից: Նշվածը խիստ հավանական լինելը, հիմնավորվում է նրանով, որ «Սմբատի որդի» անվանաձևով, ինչպես ստորև կտեսնենք, Աբասին հիշատակում է նաև Միսքավայհը:

---

[229] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 175:

[230] Տե՛ս **V. Minorsky**, Caucasica IV, II: The Caucasian vassals of Marzuban in 344/955, “The Bulletin of the School of Oriental and African Studies” (1953, XV/3), 1953, p. 526, r. 9:

[231] Տե՛ս **Miskawayh**, 5, էջ 290:

[232] Տե՛ս նույն տեղում, էջ 309:

Այդ հիշատակությունը դարձյալ վերաբերում է հիջրայի 342 թ.: Ըստ հեղինակի՝ այդ տարի Դայսամ զորավարը, պատրաստվելով պատերազմի, Հայաստան է ուղարկում իր գործակալներին, որպեսզի ապահովվի հայոց թագավորների չեզոքությունը: Վերջիններիս շարքում հիշատակվում են Իբն ալ-Դայրանին (Դերենիկի որդին), Իբն Գագիկը (Գագիկի որդին)[233], որը Գագիկ Արծրունու որդի և հաջորդ Գրիգոր Դերենիկն է (943-959), վերջինիս եղբայր Համզահը (Համազասպ Աբուսահլ) և ոմն **Իբն Սաբատը** (ابن سباط)[234]: Փորձ է կատարվել վերջինիս նույնացնելու Մանազկերտի տեր Աբու Սավադայի (իբր թե Աբու Սաբատ) հետ[235], ինչն անհնար է, քանի որ խնդրո առարկա թվականին Աբու Սավադայի կենդանի լինելը խիստ կասկածելի է[236], և, բացի դրանից, նա հայոց թագավորներից մեկը չէր համարվում: Իրականում խոսքն Աբաս թագավորի մասին է[237], իսկ «Իբն Սաբատ»-ը խմբագրելի է «Իբն Սանբատ»-ի (ابن سنباط), որը կնշանակի «Սմբատի որդի»: Հայտնի է, որ Սմբատ անունն արաբական աղբյուրներում պահպանվել է Սինբատ-Սանբատ ձևով, ինչպես

---

233 Միսքավայհի աշխատության այս հատվածի անգլերեն թարգմանությունը կատարվել է բառացիորեն, ինչի հետևանքով այն ստացել է «**Իբն ալ-Դայրանին, Իբն Ջաջիկը** (իմա՛ Գագիկ – Ա. Ե.) **և նրա եղբայր Համզահը**» տեսքը: Տե՛ս “The Concluding Portion of The Experiences of the Nation by **Miskawaihi**”, translated from the arabic by D. S. Margoliouth, vol. II, Reigns of Muttaqi, Mustakfi, Muti and Ta’i, Oxford, 1921, p. 159: Հաջորդ նմանատիպ հաղորդումը ևս թարգմանվել է բառացիորեն, սակայն առաջարկվել է առավել ճշգրիտ՝ «**Գագիկի որդի Դերենիկը…**» ձևը: Տե՛ս նույն տեղում, էջ 160:

234 Տե՛ս **Miskawayh**, 5, էջ 309:

235 **Miskawaihi**, eng. trans., p. 159, f. 1.

236 Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 11-12:

237 Այս ենթադրությունը նախկինում հպանցիկ կերպով կատարել է նաև Վ. Վարդանյանը: Տե՛ս **Վ. Վարդանյան**, Արծրունիները հայոց պատմության մեջ, էջ 137:

Սինբատ/Սանբատ իբն Աշուտ (سنباط بن اشوط) անվանաձևում[238]: Ինչ վերաբերում է «Սաբատ» անվանաձևին, ապա պետք է նշել, որ հայկական մի շարք վիմագրերում և ձեռագրերում ևս «Սմբատ» անունը գրված է «Սբատ» ձևով, ըստ որում՝ այնքան հաճախ, որ կարելի է վստահ ասել, որ գործ ունենք ոչ թե պարզ վրիպակների, այլ օրինաչափության հետ[239]: Ի դեպ, նույն Սմբատ Ա-ն Լազարյան ավետարանի հիշատակարանում (887) հիշատակված է «Սբատ» ձևով[240]: Նշվածը ցույց է տալիս, որ «Սաբատ» անվան ներքո նախնական «Սանբատ/Սինբատ» անվանաձևը ենթադրելը խիստ հիմնավոր է: Արաբական միջավայրում, ինչպես տեսանք, կիրառական էր նաև «Բանու Սինբատ/Սմբատի որդիներ» (بنى سنباط) անվանաձևը: Պարզ է, որ Աշոտ Երկաթի մահից հետո Աբասը՝ որպես միակ կենդանի մնացածը Սմբատ Ա-ի որդիներից, ըստ արաբական սովորության, պետք է կոչվեր «**Իբն Սա[ն]բատ/Սմբատի որդի**»: Ստացվում է, որ Աբասը կենդանի էր 953 թ., որը, փաստորեն, նրա թագավորության վերջին՝ 24-րդ տարին էր:

Մնում է միայն ենթադրել, որ Մարզուբան իբն Մուհամմադից բխող վտանգը հեռացնելու նպատակով Աբասը 940-ական թթ. սկզբին նրա առաջ հարկատվական պարտականություն է ստանձնել: Վերջինս պետք է դադարեր այն բանից հետո, երբ 948 թ. Մարզուբանը զրկվեց իշխանությունից՝ այն կրկին ստանալով Աբասի մահից հետո միայն՝ 954 թ.: Ուստի 955 թ. դրությամբ Մարզուբան իբն Մուհամմադին հարկատուների շարքում նրա անվան հիշատա-

---

238 Տե՛ս **Ibn Ḥauḳal**, էջ 343, 350; **Al-Istakhri**, Kitáb masâlik al-mamâlik, “Bibliotheca geographorum arabicorum”, p. I, Leiden, 1927, p. 188, 194:

239 Տե՛ս **Ա. Յակոբեան**, Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ (Արցախ եւ Ուտիք), Վիեննա-Երեւան, 2009, էջ 325-326:

240 Տե՛ս **Գարեգին Ա կաթողիկոս**, նշվ. աշխ., էջ 84; «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (Ե-ԺԲ դարեր)», աշխատասիրությամբ Ա. Մաթևոսյանի, Եր., 1988, էջ 40:

կությունը կարող է լինել միայն Իբն Հաուկալի կողմից տարբեր ժամանակաշրջանների վերաբերող տվյալների ընդհանրացման հետևանք:

Ի վերջո, հարկ է պարզաբանել ևս մեկ կարևոր խնդիր: Հայտնի է, որ Աբասի նախորդը՝ Աշոտ Բ Երկաթ թագավորը, կրում էր «**շահնշահ Հայոց և Վրաց**» տիտղոսը[241]՝ համարվելով գերագահ Հայաստանի և քրիստոնյա Այսրկովկասի մյուս թագավորների և իշխանների միջավայրում[242]: Այդ տիտղոսով Աբասը որևէ աղբյուրում չի հիշատակվում, իսկ Աբասի որդին և հաջորդը՝ Աշոտ Գ-ն, որպես շահնշահ է հիշատակվում թե՛ արաբական[243] և թե՛ հայկական աղբյուրներում[244]: Ամենահավանական պատճառն այն է, որ Աբասի գահակալության առաջին շրջանում այդ տիտղոսին տիրում էր Գագիկ Արծրունին: Ըստ Արծրունյաց տան Անանուն պատմիչի՝ Ատրպատականի ամիր Յուսուֆը մոտ 927 թ. հանձնում է Հայաստանի ու Վիրքի կառավարումը[245], որից կարելի է բխեցնել, որ նրան է փոխանցվել Աշոտ Երկաթին պատկանող շահնշահի տիտղոսը: Այդ է պատճառը, որ Գագիկ Արծրունին, ինչպես տեսանք, Իբն Զաֆիրի աշխատության մեջ հիշատակված է որպես «**Հայաստանի և Վրաստանի թագավոր**»: Բյուզանդական արքունիքն էլ, իր հերթին, արձագանքելով Հայաստանում տեղի ունեցած քաղաքական փոփո-

---

[241] Տե՛ս **С. Еремян,** Присоединение северо-западных областей Армении к Византии в XI веке, էջ 6:

[242] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 533. Աշոտ Երկաթը կայսրից «**մեծավայելուչ գահիւ պատուի առեալ քան զամենայն գահերէցս**»:

[243] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Մունաջջիմ-Բաշիի XI-XII դդ. անանուն աղբյուրը Դվինի և Գանձակի Շադդադյանների մասին, էջ 477:

[244] Տե՛ս **Ասողիկ**, էջ 756, «Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի քէօթուկը)», աշխատասիրութեամբ՝ Պ. Մուրադեանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 66, **Մատթէոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 19:

[245] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 284:

խություններին, Գագիկ Արծրունուն կոչում է «**իշխանաց իշխան**»[246], իսկ Աբասին՝ պարզապես «**մագիստրոս**»[247]: Սակայն Գագիկ Արծրունու մահից հետո, ըստ Անանիա Մոկացու, նրա որդին՝ Գրիգոր Դերենիկը, հանդես էր գալիս որպես միայն «**Վասպուրականի թագավոր**»՝ փաստորեն, հորից չժառանգելով ոչ միայն շահնշահի, այլև հայոց թագավորի տիտղոսները: Խնդիրն այն է, որ Գագիկ Արծրունու մահից հետո, ինչպես տեսանք, Աբասը վերածվել էր հզորագույն գահակալի ոչ միայն Հայաստանում, այլև Այսրկովկասում: Գագիկի մահից հետո «անհետանում» է նաև «շահնշահ» տիտղոսը՝ կրկին հայտնվելով Աշոտ Գ-ի շրջանում որպես Բագրատունի գահակալի սեփականություն: Ամենահավանական եզրակացությունն այն է, որ Գագիկ Արծրունու մահից հետո Աբասին հաջողվել է վերադարձնել Բագրատունիներին պատկանող և նրանց գերագահությունը Հայաստանում ու շրջակա երկրներում սահմանող այդ տիտղոսը: Ամենայն հավանականությամբ, դրան նպաստել էր այն իրողությունը, որ 941 թ. Մարզուբան իբն Մուհամմադը պարտության էր մատնել Գագիկ Արծրունու հետ բարեկամական հարաբերությունների մեջ գտնվող Դայսամին: Ատրպատականի Սալարյան տիրակալը, որին, ինչպես տեսանք, հարկատու էր նաև Աբասը, անհրաժեշտաբար պետք է Հայաստանում իր համար հենարան գտներ: Այդ դերում նշված պատճառներով ամենահարմար թեկնածուն հենց Աբասն էր: «Շահնշահ» տիտղոսի՝ Աբասին անցնելու հավանականությունն այդ ենթատեքստում խիստ բարձր է: Դրա օգտին է խոսում նաև այն, որ, ըստ մի արաբական աղբյուրի՝ հիջրայի 342 թ. մոտերքը (18 մայիս, 953 թ.-6 մայիս, 954 թ.) «**Վրաստան նահանգի և Հայաս-**

---

[246] Բյուզանդական արքունիքը պաշտոնական գրագրության մեջ այլ պետությունների գահակալներին «թագավոր» չէր կոչում: Օրինակ՝ հայոց թագավորին բյուզանդացիներն անվանում էին «իշխանաց իշխան»: Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 7, 11, 151:

[247] Նույն տեղում, էջ 10-11:

տանի այլ մասերի վրա կար մի թագավոր, որի անունն էր Աշուտ իբն ալ-Աբբաս [իմա՛ Աշոտ՝ որդի Աբասի (953-977 թթ.) – Ա. Ե.] **և Շահնշահ տիտղոսն էր կրում**: Սա փորձեց պաշարել Դվինը և նրա ժողովրդի դեմ կռվել: Զորք հավաքեց հայերից, լեզգիներից և այլ անհավատներից...»[248]: Բացի Վիրքից՝ Աշոտ Գ-ն, փաստորեն, ծանրակշիռ դիրք ուներ Կովկասյան լեռնականների շրջանում, ինչի վկայությունն է լեզգիների զորքի մասնակցությունը Դվինի ազատագրման անհաջող գործողությանը: Պետք է հիշել, որ 954 թ. սկզբի դրությամբ Աշոտ Գ-ն նոր էր միայն բազմել հայոց գահին, ուստի՝ չափազանց կարճ գահակալության ժամանակահատվածում անհնար է, որ ինքնուրույնաբար հասած լիներ թե՛ հայոց ու վրաց թագավորի կարգավիճակին, թե՛ շահնշահ տիտղոսին, թե՛ Կովկասի լեռնականների շրջանում ծանրակշիռ դիրքին: Միակ բացատրությունն այն է, որ այդ ամենը նա ժառանգել էր հորից՝ Աբաս թագավորից, և, փաստորեն, ստացավ Հայաստանի ու քրիստոնյա Այսրկովկասի գերագահություն՝ համապատասխան «շահնշահ Հայոց և Վրաց» տիտղոսով:

Փաստորեն, կարելի է համոզված ասել, որ Աբաս թագավորին հաջողվել է վերականգնել իր հոր և եղբոր գահակալության շրջանի գրեթե բոլոր կորուստները: Ուստի պատահական չէ նրա վերաբերյալ Ասողիկի տված գնահատականը. «**Աբաս խաղաղութեան եւ շինութեան պատճառ եղեալ աշխարհիս Հայոց, ըստ քաղցր բարուց իւրոց եւ ըստ քաջազաւր զաւրութեանն, որով յաղթող եղեւ շուրջանակի**»[249]:

Այսպիսով՝ հայոց թագավոր Աբասի գահակալության երկրորդ փուլում (943-953) Հայոց թագավորությունն անշեղորեն հզորանում

---

[248] **V. Minorsky**, Studies in Caucasian History, London, 1953, p. 10; **Ա. Տեր-Ղևոնդյան**, Մունաջջիմ-Բաշիի XI-XII դդ. անանուն աղբյուրը Դվինի և Գանձակի Շադդադյանների մասին, էջ 477:

[249] **Ասողիկ**, էջ 749:

էր: Հայկական բանակը սկզբում 943 թ. ջախջախիչ պարտության մատնեց աբխազական զորքին, իսկ այնուհետև հայոց թագավորը վերացրեց ձևական կախվածությունը Ատրպատականի տիրակալ Մարզուբան իբն Մուհամմադից: Այդ շրջանում Աբասն աստիճանաբար վերածվեց գերակա տիրակալի Հայաստանում և քրիստոնյա Այսրկովկասում: Այդ հաջողությունների պատճառով նա հայոց պատմության մեջ մտավ որպես հաղթական զահակալ:

2.4. Բագրատունյաց տերության սահմաններն Աբաս թագավորի օրոք

Աբասի գահակալության առաջին շրջանում նրա տիրույթներին արդեն անդրադարձել ենք: Դրանց սահմաններում ընդգրկված էին Այրարատի մեծ մասը, Տայքի արևելյան, Տուրուբերանի հյուսիս-արևելյան, Գուգարքի արևելյան, Սյունիքի հյուսիսային և Ուտիքի հյուսիսարևմտյան գավառները:

Իր գահակալության երկրորդ փուլում (943-953 թթ.)՝ Գագիկ Արծրունու մահից (943) հետո, Աբասը նախ տիրացավ դեռևս 914 թ. Վասպուրականի թագավորությանը կցված Այրարատի Մասյացոտն, Կոգովիտ և Ծաղկոտն գավառներին[250], իսկ հետո՝ վերստացավ Բագրատունիներին պատկանող «շահնշահ» տիտղոսը և գերագահությունը Հայաստանի այլ թագավորությունների ու իշխանությունների վրա: Որպես ավատատիրական թագավորության գերագահ՝ այդ ժամանակ Աբասի տերության սահմանները ներառում էին Հայաստանի մեծ մասը՝ տեղական այլ թագավորություններով և իշխանություններով, ինչպես նաև հարևան քաղկեդոնական երկրամասերը: Հայոց տերությունն այդ ժամանակ իրենից ներկայացնում էր ավատատիրական դաշնություն՝ գերակա թագավորի՝ Աբասի գլխավորությամբ:

---

[250] Կոգովիտ և Ծաղկոտն գավառները 1000 թ. դրությամբ պատկանում էին Գագիկ Ա Բագրատունու (989-1017) քրոջ որդի Աբուսահլին: Տե՛ս **Ասողիկ**, էջ 824: Վ. Վարդանյանը կարծում է, որ Կոգովիտն ու Ծաղկոտնը անջատվել են Վասպուրականից և կախման մեջ գտնվել Բագրատունիներից, սակայն պահպանել են անկախությունը, որն էլ արձանագրել է Կոստանդին Ծիրանածինը՝ հայ իշխաններին ուղարկվող նամակների հասցեատերերի ցանկում հիշատակելով Կոգովիտի իշխանին: Տե՛ս **Վ. Վարդանյան**, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը 908-1021 թթ., էջ 197-198:

Այս շրջանում Աբասի տերությունը ներառում էր նաև Աղձնիքի հյուսիսը, Տուրուբերանի արևմուտքը և Ծոփքի ու Բարձր Հայքի արևմտյան գավառներն ընդգրկող Տարոնի իշխանությունը[251], որն այդ պատմափուլում, երբ Հայաստանի կենտրոնական և արևելյան հատվածներում տեղի էին ունենում այլ զարգացումներ, գոյատևում էր ինքնուրույնաբար՝ օրըստօրե սերտացնելով հարաբերությունները Բյուզանդիայի հետ[252]: Սակայն Տարոնի իշխանությունը սերտ կապեր էր պահպանում նաև Հայաստանի կենտրոնական շրջանների հետ: 915 թ. Տարոնում որոշ ժամանակով հաստատվել էր Հովհաննես Դրասխանակերտցին: Նա գրում է, որ «չուեցի գնացի յաշխարհն Տարաւնոյ եւ անդ ի մերձաւորաց իմոց իշխանաց եւ ժողովրդոց գտեալ մխիթարութիւն տառապանաց վշտաց իմոց, արծարծեցաւ յիս հոգի իմ»[253]: Այս տեղեկությունը ցույց է տալիս, որ թեև Տարոնում ակնհայտ պատճառներով թուլացել էր Բագրատունյաց կենտրոնական իշխանության ազդեցությունը, սակայն Հայոց եկեղեցու և հովվապետի հոգևոր իշխանությունը շարունակում էր ամբողջությամբ պահպանվել թե՛ իշխանների, թե՛ ժողովրդի մեջ:

Դատելով Սյունիքում և Հայոց Արևելից կողմերում Աբաս թագավորի աջակցությամբ Անանիա Մոկացի կաթողիկոսի բուռն գործունեությունից, երբ տեղի աշխարհիկ ու հոգևոր տերերը գրեթե անվերապահորեն կատարում էին հայոց թագավորի հովանավորությունը վայելող կաթողիկոսի պահանջները[254], կարելի է համոզված պնդել, որ Աբաս Բագրատունու գերակայությունը ճանաչվում էր այդ իշխանությունների կողմից:

---

[251] Տե՛ս **Գ. Գրիգորյան**, Տարոնի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը IX-X դարերում, էջ 63-65; **Ա. Եղիազարյան**, Տարոնի Բագրատունիների իշխանությունը IX դարում և X դարի սկզբին, էջ 74-85:

[252] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 4-10:

[253] **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 524:

[254] Տե՛ս **Անանիա Մոկացի**, էջ 258, 261, 267, 269-273:

Հայաստանի՝ այդ շրջանի վարչաքաղաքական իրավիճակի վերաբերյալ հայկական սկզբնաղբյուրներից բացի՝ կարևոր տեղեկություններ են պահպանվել Կոստանդին Ծիրանածնի, Իբն Հաուկալի և Աբու Դուլաֆի աշխատություններում:

Կոստանդին Ծիրանածինը, խոսելով այն մասին, որ կայսրությունը նամակներ էր ուղարկում Հայաստանի մի շարք իշխանների, տեղեկացնում է, որ այդ ժամանակ Գագիկ Արծրունին «**իշխանաց իշխանի պատիվն է ստացել**»[255], այսինքն՝ նշված տեղեկությունը վերաբերում է 929-943 թթ. պատմաշրջանի իրողություններին, երբ Աշոտ Երկաթի մահից հետո Գագիկ Արծրունին գերագահ դիրքի էր հասել: Հայաստանում հիշատակված են մի շարք «իշխանություններ»՝ Մեծ Հայքի (կենտրոնական իշխանություն), Վասպուրականի, Կոգովիտի, Տարոնի, Մոկքի, Անձևացյաց, Սյունիքի, Վայոց ձորի, Խաչենի և Սևորդյաց[256]:

Իբն Հաուկալը, խոսելով 941 թ. Ատրպատականի տիրակալ դարձած Մարզուբան իբն Մուհամմադ իբն Մուսաֆիր ալ-Սալարիին հարկատու [ըստ նրա՝ հիջրայի 344 (955) թ. դրությամբ] հայ իշխանների մասին, հիշատակում է համապատասխան իշխանությունները՝ Ներքին Հայաստանը [Սմբատի որդիների (բանու Սինբատ) երկիրը կամ Բագրատունյաց բուն տիրույթները[257]], Վասպուրականը, Փառիսոսը (Ռաբ), Գոռոզը (Ջուրզ), Վայոց ձորը (Վայզուր) և Խաչենը (Խաջին)[258]: Ինչ վերաբերում է Մարզուբան իբն Մուհամմադին՝ «Սմբատի որդիների», այսինքն՝ Աշոտ Երկաթի ու Աբասի հարկատու լինելուն, ապա Սալարյան տիրակալին հարկատու կարող էր լինել, ինչպես տեսանք, միայն նրա ժամանակակից Աբասը:

---

[255] **Կոստանդին Ծիրանածին**, էջ 151:
[256] Տե՛ս նույն տեղում:
[257] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 174:
[258] Տե՛ս **Ibn Ḥauḳal**, էջ 354-355:

Հետաքրքրական է նաև X դ. հեղինակ Աբու Դուլաֆի տեղեկությունը Հայաստանի որոշ իշխանությունների վերաբերյալ: 951-952 թթ. իր ուղևորության մասին նա պատմում է, որ այդ ժամանակ անցել է Վայոց ձորի (Վայզուր), Կապանի [Կաբան (Բաղաց իշխանության կենտրոնի անունից)], Խաչենի (Խաջին), Փառիսոսի (ալ-Ռուբ), Հանդանի[259] և, այնուհետև, Երասխից հարավ գտնվող Բաղդայնի [երկու (զույգ) Բաղդ] լեռներով[260]: Ակնհայտ է, որ նշված տեղեկությունները հիմնականում համապատասխանում են Կոստանդին Ծիրանածնի և Իբն Հաուկալի ներկայացրած ցանկերի տվյալներին[261]:

---

[259] Անվան ընթերցումը պայմանական է: Վ. Մինորսկին այդ երկրամասը տեղադրում է Երասխ գետի ձախ ափին՝ Արցախի հարավում: Տե՛ս **V. Minorsky**, Caucasica IV, էջ 525: Հավանական է նաև «Հաբանդ» ընթերցումը (տե՛ս **Ա. Յակոբեան**, Բուն Աղուանքի եւ Հայոց Արեւելից կողմանց իշխանատոհմերը եւ արքայատոհմերը Թ-ԺԳ դարերում (պատմա-աղբիւրագիտական քննութիւն), պատմական գիտութիւնների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսութիւն, Եր., 2014, էջ 201, ծանոթ. 2), քանի որ համանուն գավառը գտնվում էր Աղավնո գետի միջին հոսանքի ավազանում՝ Փառիսոսից Բաղդ ճանապարհին:

[260] Տե՛ս "Abū-Dulaf Mis'ar Ibn Muhalhil's Travels in Iran (circa A. D. 950)": arabic text with an english translation and commentary by V. Minorsky, Cairo, 1955, p. 35: Հմմտ. "Вторая записка Абӯ Дулафа", издание текста, перевод, введение и комментарии П. Булгакова и А. Халидова, Москва, 1960, с. 36:

[261] Ա. Հակոբյանը փորձ է կատարում Անանուն Զրուցագրի կողմից հիշատակված, աբխազաց զորքին պարտության մատնած հայկական զորաջոկատների հրամանատարների շարքում [տե՛ս «Պատմութիւն Անանուն Զրուցագրի» (կարծեցեալ Շապուհ Բագրատունի), թարգմանությունը գրաբարից, առաջաբանն ու ծանոթագրությունները Մ. Հ. Դարբինյան-Մելիքյանի, Եր., 1971, էջ 187-189] նշմարել Բագրատունի արքային ենթակա վարչաքաղաքական միավորների իշխաններին: Քանի որ ըստ ուսումնասիրողի՝ դեպքը տեղի է ունեցել 930-ական թթ. կեսերին, ստացվում է, որ նա այդ իրադարձությունը վերագրում է Աբաս թագավորի շրջանին՝ նույնացնելով աբխազաց Բեր իշխանի արշավանքի հետ կապված իրողություններին: Իշխանացուցակի և Կոստանդին Ծիրանածնի՝ հայկական իշխանությունների

Երեք հեղինակների տեղեկությունների համադրությունը ցույց է տալիս, որ միմյանց համապատասխանում են Կոստանդին Ծիրանածնի «Մեծ Հայքը» և Իբն Հաուկալի «Ներքին Հայաստանը»: Քանի որ, ըստ երկրորդի, Ներքին Հայաստանը «Սմբատի որդիների» (իմա՛ Սմբատ Ա թագավորի հետնորդներ) երկիրն էր, ապա ակնհայտ է, որ հիշատակությունը վերաբերում է Բագրատունյաց բուն տիրույթներին: Երեք հեղինակների տեքստերում կրկնվում են միայն Վայոց ձորի, Խաչենի և Սևորդյաց կամ Փառիսոսի իշխանությունների անվանումները: Կոստանդին Ծիրանածնի և Իբն Հաուկալի տեքստերում կրկնվում են նաև Վասպուրականի թագավորության, իսկ կայսր-հեղինակի և Աբու Դուլաֆի տեքստերում՝ Սյունյաց կամ Կապանի իշխանության անվանումները: Չեն կրկնվում Կոստանդին Ծիրանածնի հիշատակած Կոգովիտի, Տարոնի, Մոկքի և Անձևացյաց, Իբն Հաուկալի հիշատակած Գոռոզի և Աբու Դուլաֆի հիշատակած Հանդանի անվանումները: Պարզ է, որ հայկական որոշ առանձին իշխանությունների ինքնուրույն գոյությունը կասկած չի հարուցում, իսկ որոշներն էլ ամենայն հավանականությամբ մաս էին կազմում առավել խոշոր իշխանությունների: Կոստանդին Ծիրանածնի տեղեկության մեջ հիշատակված «իշխանությունները» Ռ. Մաթևոսյանը ճիշտ կերպով ենթարկում է աստիճանակարգման: Ըստ նրա՝ Հայաստանի երեք հիմնական իշխանությունների՝ Բագրատունյաց, Արծրունյաց և Սյունյաց կազմի մեջ էին մտնում մնացած մանր

ցանկի համադրությունն ի հայտ է բերում առնվազն յոթ անվան կրկնություն (Վասպուրական, Տարոն, Մոկք, Անձևացիք, Վայոց ձոր, Փառիսոս-Սևորդիք): Տե՛ս **Ա. Յակոբեան**, Բուն Աղուանքի եւ Հայոց Արեւելից կողմանց իշխանատոհմերը եւ արքայատոհմերը Թ-ԺԳ դարերում, էջ 210-211: Նման մոտեցման քննությունն առանձին ուսումնասիրության նյութ է, ուստի առայժմ սահմանափակվենք զուտ միայն նման կարծիքի գոյությունն արձանագրելով:

իշխանությունները[262]: Այնպիսի իշխանություն, ինչպիսին էր Կոգովիտը, չէր կարող էական որևէ դերակատարություն ունենալ: Հայտնի է, որ 914 թ. Գագիկ Արծրունին գրավել էր այս գավառը՝ Դարյունից բերդով[263], որը նրան էր պատկանում նաև 930-ական թթ.[264]: Ուստի Գագիկի կենդանության օրոք Կոգովիտը կարող էր հանձնված լինել նրան հպատակ մի որևէ իշխանի, որին էլ նամակով կարող էր դիմել Բյուզանդիայի կայսրը[265]: Այդ խիստ հավանական տրամաբանությամբ Կոգովիտը, Մոկքը և Անձևացիքը ստորակա էին Վասպուրականի թագավորին, իսկ Տարոնը՝ Բագրատունի արքային, այդ իսկ պատճառով էլ Իբն Հաուկալի տեքստում հիշատակված չեն, իսկ Աբու Դուլաֆը դրանք հիշատակել չէր կարող, քանի որ դրանց տարածքով չէր անցել:

Խաչենի, Փառիսոսի, Գոռոզվա, բուն Սյունյաց և Կապանի (Բաղաց) իշխանությունների մասին հիշատակում է նաև հայոց կաթողիկոս Անանիա Մոկացին[266]:

Վերևում տեսանք, որ սեփական տիրույթների ընդարձակմանը զուգընթաց աճել են Աբասի թե՛ հեղինակությունը և թե՛ հնարավորությունները, որոնք ի վերջո հանգեցրել են Բագրատունի գահակալի՝ Հայաստանում գերագահ դիրքի հասնելուն:

---

[262] Տե՛ս **Ռ. Մաթևոսյան**, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, էջ 133-134:
[263] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 282:
[264] Տե՛ս նույն տեղում, էջ 292:
[265] Տե՛ս **Ռ. Մաթևոսյան**, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, էջ 135:
[266] Տե՛ս **Անանիա Մոկացի**, էջ 258, 261, 267, 269-273:

2.5. Աբաս թագավորի գահակալության շրջանի թվագրումը

Հայտնի է, որ Աբաս Բագրատունին թագավորել է 24 տարի[267]: Նրա գահակալության սկիզբը պատմագիտության մեջ տարբեր կերպ է թվագրվել: Մ. Չամչյանցը, Հ. Մանանդյանը, Ս. Երեմյանը և Ա. Տեր-Ղևոնդյանն Աբասի գահակալությունը հաշվարկել են 928 թվականից[268]: Ն. Ադոնցը, Հ. Հարությունյանը, Բ. Առաքելյանը և Ռ. Մաթևոսյանը Աբասի գահ բարձրանալը թվագրել են 929 թվականով[269]: Լեոն Աբասի գահակալության սկիզբ է համարել 930 թվականը[270]: Չնայած դրան՝ գրեթե բոլոր հետազոտողներն էլ Աբասի գահակալության ավարտը դնում են 953 թ., որը ճշգրիտ է: Միայն Լեոն է, որ Աբասի գահակալությունն ամփոփում է 952 թվականով[271]: Պետք է հիշել, սակայն, որ Աբասի գահ բարձրանալը 928 և մահը 953 թվականով թվագրելու դեպքում հարկ է խմբագրել նրա գահակալության տևողությունը՝ այն դարձնելով առնվազն 25 տարի: Մյուս կողմից, նրա գահակալության սկիզբը 930 թվականով թվագրելու պարագայում գահակալության տարիների քանակը կնվազի մինչև 23 տարի: Մինչդեռ Աբասի վախճանի 953 թվականը և գահակալության 24 տարիները հիմք ընդունելով՝ նրա գահակալության

---

[267] Տե՛ս **Ասողիկ**, էջ 755:

[268] Տե՛ս **Մ. Չամչյանց**, նշվ. աշխ., էջ 822; **Հ. Մանանդյան**, Երկեր, հ. Զ, Եր., 1985, էջ 319; **С. Еремян,** Присоединение северо-западных областей Армении к Византии в XI веке, с. 6; **А. Тер-Гевондян**, նշվ. աշխ., էջ 245:

[269] Տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ե, էջ 237; **Հ. Հարությունյան**, նշվ. աշխ., էջ 91-95; «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, էջ 47; **Ռ. Մաթևոսյան**, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, էջ 56; նույնի՝ «Բագրատունիներ. պատմա-տոհմաբանական հանրագիտարան», Եր., 1997, էջ 27:

[270] Տե՛ս **Լեո**, նշվ. աշխ., էջ 577:

[271] Տե՛ս նույն տեղում:

